



ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
МЕЖДУНАРОДНЫЙ УНИВЕРСИТЕТ ЕВРАЗИЯ
EURASIA INTERNATIONAL UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ

ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ



Երևան, 2025 | N1

ISSN 1829-4952



ԲԱՆԲԵՐ

ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ВЕСТНИК

МЕЖДУНАРОДНОГО УНИВЕРСИТЕТА ЕВРАЗИЯ

BULLETIN

EURASIA INTERNATIONAL UNIVERSITY

1

Երևան - 2025

**Հրապարակության է երաշխավորվել
Եվրասիա միջազգային համալսարանի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Գագիկ Վարդանյան (գլխավոր խմբագիր), տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, Եվրասիա միջազգային համալսարան

Ալբերտ Մակարյան, ք. գ. դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան
Անի Ստեփանյան, ի. գ. թ., դոցենտ, Արդարադատության համառոտական պետական համալսարան
(Ռուսաստանի Արդարադատության նախարարության ԱՀՊՀ)
Աննա Օհանյան, ք. գ. դ., ԱՄՆ Ստոնհիլ համալսարանի պրոֆեսոր
Աշոտ Ալեքսանյան, ք. գ. դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան
Աշոտ Խաչատրյան, ի. գ. դ., պրոֆեսոր, ԵՄՀ, ՀՀ Սահմանադրական դատարանի աշխատակազմի
գիտական հարցերով խորհրդական
Աշոտ Մարկոսյան, տ. գ. դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան
Արամ Այվազյան, ի. գ. թ., Եվրասիա միջազգային համալսարան, ՀՀ քննչական կոմիտե
Գայանե Թովմայան, տ. գ. թ., դոցենտ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
«ԱՄԲԵՐԴ» հետազոտական կենտրոն
Գրաֆինա Չուպոնեն, մանկ. գ. դ., դոցենտ, Լիտվայի Միկլուս Ռոմերիս համալսարան
Դմիտրի Զախոս, մանկ. գ. դ., դոցենտ Սալոնիկի (Հունաստան) Արիստոտելի համալսարան
Երանուհի Մանուկյան, փ. գ. թ., դոցենտ, Երևանի պետական համալսարան
Իգոր Կարապետյան, մանկ. գ. դ., պրոֆեսոր, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան
Լուսինե Հարությունյան, ք. գ. դ., պրոֆեսոր, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
Լուսինե Ֆլյան, ք. գ. դ., պրոֆեսոր, Եվրասիա միջազգային համալսարան
Խաչիկ Գալստյան, ք. գ. դ., դոցենտ, Երևանի պետական համալսարան
Հեղինե Մանասյան, տ. գ. դ., Հետազոտական ռեսուրսների կոլվկայան կենտրոն (ՀԴԿԿ)–Հայաստան
Հովհաննես Հարությունյան, տ. գ. թ., Եվրասիա միջազգային համալսարան
Մարիամ Մարգարյան, ք. գ. դ., պրոֆեսոր, փ. գ. թ., դոցենտ, ՀՀ պետական կառավարման ակադեմիա
Մարտա Մորդովան-Յիվինսկա, ք. գ. թ., Վիստուլայի համալսարան (Վիստուլայի համալսարանների
խումբ, Վարշավա, Լեհաստան) և Վարշավայի Wsztechnica Polska համալսարան
Պյոտր Բորովսկի, տեխ. գ. թ., տնտեսագետ, դոցենտ, Վարշավայի բնական գիտությունների համալսարան
Ռամոն Բուազաս Լորենցո, ք. գ. թ., Սանտյագո դե Կոմպոստելայի համալսարան (Իսպանիա)
Սամվել Մուրադյան, ք. գ. դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան
Սոնա Հակոբյան, ք. գ. թ., Հայաստանի Եվրոպական Համալսարան
Սուրեն Օհանյան, աշխ. գ. դ., պրոֆեսոր, Եվրասիա միջազգային համալսարան
Ստեփան Ծաղիկյան, ի. գ. դ., պրոֆեսոր, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան
Վահե Վանեսյան, ք. գ. դ., CIDA-Կանադական միջազգային զարգացման գործակալություն
Վլադիմիր Հովհաննիսյան, ի. գ. դ., պրոֆեսոր, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան

Խմբագրական խորհրդի քարտուղար՝

Նունե Զոմարոյան, Եվրասիա միջազգային համալսարան

ISSN 1829-4952

© Եվրասիա միջազգային համալսարան, 2025

«Բանբեր Եվրասիա միջազգային համալսարանի» պարբերականը ԲՈԿ-ի 28.06.2019թ. № 164Ա հրամանի համաձայն ընդգրկված է ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն որակավորման կոմիտեի համար ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակում:

Редакционная коллегия

Гагик Варданян (главный редактор), д-р экон. наук, профессор, Международный университет Евразия

Альберт Макарян, д-р филол. наук, профессор, Ереванский государственный университет

Ани Степанян, канд. юрид. наук, доцент, Всероссийский государственный университет юстиции (РПА Минюста России)

Анна Оганян, д-р полит. наук, профессор, Стоунхиллский университет, США

Арам Айвазян, канд. юрид. наук, Международный университет Евразия, Следственный комитет РА

Ашот Алексанян, д-р полит. наук, профессор, Ереванский государственный университет

Ашот Маркосян, д-р экон. наук, профессор, Ереванский государственный университет

Ашот Хачатрян, д-р юрид. наук, профессор, судья Конституционного суда Республики Армения

Ваге Ванесян, д-р полит. наук, CIDA-Канадское агентство международного развития

Владимир Оганесян, д-р юрид. наук, Российско-Армянский (Славянский) университет

Гаяне Товмасян, канд. экон. наук, доцент, Исследовательский центр «АМБЕРД» Государственного экономического университета Армении

Гражина Чуладене, д-р пед. наук, доцент, Университет Миколаса Ромериса, Литва

Дмитриос Захос, д-р пед. наук, Университет Аристотеля в Салониках, Греция

Ерануи Манукян, канд. филос. наук, доцент, Ереванский государственный университет

Игорь Карапетян, д-р пед. наук, профессор, Армянский государственный педагогический университет имени Хачатура Абовяна

Лусине Арутюнян, д-р пед. наук, профессор, Государственный экономический университет

Лусине Флджян, д-р филол. наук, профессор, Международный университет Евразия

Мариам Маргарян, д-р полит. наук, профессор, канд. филос. наук, доцент, Академия государственного управления Республики Армения

Марта Молдован-Цывинска, д-р филол. наук, Вислинский университет (Группа университетов Вистулы, Варшава, Польша), Университет Wszelchnica Polska в Варшаве

Оганес Арутюнян, канд. экон. наук, Международный университет Евразия

Петр Боровский, д-р техн. наук, экономист, Варшавский университет естественных наук, Польша

Рамон Бузас Лоренцо, д-р полит. наук, Университет Сантьяго-де-Компостела, Испания

Самвел Мурадян, д-р филол. наук, профессор, Ереванский государственный университет

Сона Акоюн, канд. филол. наук, Европейский университет Армении

Сурен Оганян, д-р геогр. наук, профессор, Международный университет Евразия

Степан Цагикян, д-р юрид. наук, профессор, Российско-Армянский (Славянский) университет

Хачик Галстян, д-р полит. наук, доцент, Ереванский государственный университет

Эгине Манасян, д-р экон. наук, Кавказский исследовательский ресурсный центр-Армения

Секретарь редакционной коллегии:

Нуне Джомардян, Международный университет Евразия

ISSN 1829-4952

© Международный университет Евразия, 2025

Решением Высшей квалификационной комиссией МОНКС РА от 28.06.2019 № 164А Вестник Международного университета Евразия включен в перечень научных изданий приемлемых для публикаций основных результатов и положений диссертаций.

Editorial Board:

Gagik Vardanyan (Chairman), Doctor of Economics, Professor, Eurasia International University

Albert Makaryan, Doctor of Philological Sciences, Professor, Yerevan State University

Ani Stepanyan, Ph.D. in Law, Associate Professor, All-Russian State University of Justice (RLA of the Ministry of Justice of Russia)

Anna Ohanyan, Ph.D. in Political Science, Stonehill University, USA

Aram Ayyazyan, Ph.D. in Law, Eurasia International University, RA Investigative Committee

Ashot Aleksanyan, Doctor of Political Science, Professor, Yerevan State University

Ashot Khachatryan, Doctor of Law, Professor, Judge of the Constitutional Court of the RA

Ashot Markosyan, Doctor of Economics, Professor, Yerevan State University

Dimitrios Zachos, Ph.D. in Pedagogical Sciences, Associate Professor, Aristotle University of Thessaloniki, Greece

Yeranuhi Manukyan, Ph.D. in Philosophy, Associate Professor, Yerevan State University

Gayane Tovmasyan, Ph.D. in Economics, Associate Professor, "AMBERD" Research Center of the Armenian State University of Economics

Grazina Chuladiene, Ph.D. in Pedagogy, Associate Professor, Mikolas Romeris University, Lithuania

Heghine Manasyan, Doctor of Economics, Caucasus Research Resource Center (CRRC)-Armenia

Hovhannes Harutyunyan, Ph.D. in Economics, Eurasia International University

Khachik Galstyan, Doctor of Political Sciences, Associate Professor, Yerevan State University

Igor Karapetyan, Doctor of Pedagogical Sciences, Professor, Khachatur Abovyan Armenian State Pedagogical University

Lusine Harutyunyan, Doctor of Philology, Professor, Armenian State University of Economics

Lusine Fliyan, Doctor of Philological Sciences, Professor, Eurasia International University

Mariam Margaryan, Doctor of Political Sciences, Professor, Ph.D. in Philosophy, Associate Professor, Academy of Public Administration of the Republic of Armenia

Marta Moldovan-Cywińska, Ph. D. in Humanities, Vistula University (Vistula Group of Universities, Warsaw, Poland), Wszechnica Polska University in Warsaw, Poland

Piotr Borowski, Ph.D. in Engineering, Economist, Associate Professor, Warsaw University of Life Sciences, Poland

Ramón Bouzas Lorenzo, Ph.D. in Political Science, University of Santiago de Compostela, Spain

Samvel Muradyan, Doctor of Philological Sciences, Professor, Yerevan State University.

Sona Hakobyan, Ph.D. in Philological Sciences, European University of Armenia

Stepan Tsaghikyan, Doctor of Law, Professor, Armenian-Russian (Slavonic) University

Suren Ohanyan, Doctor of Geographical Sciences, Professor, Eurasia International University

Vahe Vanesyan, Ph.D. in Political Science, CIDA - Canadian Agency for International Development

Vladimir Hovhannisyan, Doctor of Law, Professor, Armenian-Russian (Slavonic) University

Secretary of Editorial Board:

Nune Jomardyan, Eurasia International University

ISSN 1829-4952

© Eurasia International University, 2025

According to № 164 (A)U decree of RA Supreme Certifying Committee (hereinafter, SCC) dated on June 28, 2019, EIU Bulletin is now recognized as a scientifically relevant journal included in the list of SCC, RA Ministry of Education, Science, Culture and Sport for publicizing the main principals and guidelines of Ph.D. dissertation.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գևորգ Իսրայելյան

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍԻ ԱՌԱՋԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՈՐՈՇ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ 8

Ալիկ Ազատյան

ԵՐԵՎԱՅԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՇԱՀԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԿՈՆՎԵՆՑԻՈՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 17

Միլենա Ղազարյան

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ 29

Բորյա Չիլինգարյան

ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԸ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ. ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ 38

Մարտին Մանուկյան

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԱԶՍՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ. ՖՐԱՄՍԻԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ 55

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արմեն Միրզոյան

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 73

Բագրատ Բագրատյան

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԻՏԱՆԿՅՈՒՆԻՑ 88

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ավարդ Խառատյան, Անահիտ Ստեփանյան

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ: ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ, ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՔԱՏՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ 102

Սևակ Թորգոմյան, Ալյոշա Հովսեփյան

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ՄԵՔԵՆԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎՐԱ ՄԱԿԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ 117

ԼԵԶԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Նարինե Հարությունյան

ԱԼԳՈԼԵԶԿԻ ԱՊԱԿՈՂԱՎՈՐՈՒՄԸ. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՄԵՆԱՍՈՒՅԹԱՅԻՆ ԱԼԳՈՐԻԹՄԻԿ ԼԵԶԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ 131

Նելլի Սարգսյան

ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ (ԱՆԴՐԱԴԱՐՁ Զ. ԼՈՆԴՈՆԻ «ԶՄՊԱՇԱՊԻԿ» ՎԵՊԻՆ) 146

Արա Զարգարյան

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՆԱԽԱՏԻՊԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ ԵՂԻՇԵ ԶԱՐԵՆՑԻ «ԲԱՆԱՍԵՂԾՆԵՐ» ՄՈՆՈԳՐԱԲՈՒՄ 159

Արամ Խաչատրյան

ՎԱԶԳԵՆ ԳԱՔՐԻԵԼՅԱՆԻ «ՊԱՐԱՆՈՅԱ...» ՀՈԴԱԾԻ ՇՈՒՐՋ ԾԱՎԱԿԱԾ ԲԱՆԱԿԵՃԸ՝ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 167

Էդգար Արշակյան

ՍԱՀՄԱՆԱՓԱԿԻ ԵՎ ՆԵՐԴԱՇՆԱԿԻ ՄԻՋԵՎ. ՖԵՈԴՈՐ ՍՈԼՈԳՈՒԲԻ ՊՈԵՏԻԿԱՅԻ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ 176

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

Էռնեստ Ավանեսով

ԱՐԴԻ ՍՊՈՐՏՈՒՄ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ԲՈՒՀԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՑՄԱՐ 191

Իրինա Մխիթարյան, Սիլվա Հայրիյան

ԹՎԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԴԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶԿԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ (ԱՎԱԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ) 199

Էլյա Դավթյան, Արփինե Շահմուրադյան

ՍԵՈՒ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՐԱ 211

СОДЕРЖАНИЕ

ЮРИСПРУДЕНЦИЯ

Геворг Исраелян

О НЕКОТОРЫХ ПРОБЛЕМАТИЧНЫХ РЕГЛАМЕНТАЦИЯХ ОТДЕЛЬНЫХ ИНСТИТУТОВ ОБЩЕЙ ЧАСТИ ПРОЕКТА КОДЕКСА ОБ АДМИНИСТРАТИВНЫХ ПРАВОНАРУШЕНИЯХ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ 8

Алик Азатян

ОБЕСПЕЧЕНИЕ НАИЛУЧШИХ ИНТЕРЕСОВ РЕБЕНКА В СИСТЕМЕ КОНВЕНЦИОННЫХ МЕХАНИЗМОВ 17

Милена Казарян

ОБЕСПЕЧЕНИЕ ТЕРРИТОРИАЛЬНОЙ ЦЕЛОСТНОСТИ ГОСУДАРСТВА В РАМКАХ МЕЖДУНАРОДНО-ПРАВОВЫХ СТАНДАРТОВ 29

Боря Чилингарян

ПРЕЗУМПЦИЯ НЕВИНОВНОСТИ В СИСТЕМЕ ЮРИДИЧЕСКИХ ПРЕЗУМПЦИЙ: СУЩНОСТЬ И ЮРИДИЧЕСКОЕ СОДЕРЖАНИЕ 38

Мартин Манукян

ЭВОЛЮЦИЯ ИДЕЙ ПРАВА И СВОБОДЫ: ОТ ФРАНЦУЗСКОГО ПРОСВЕЩЕНИЯ К НЕМЕЦКОЙ КЛАССИЧЕСКОЙ ФИЛОСОФИИ 55

ПОЛИТОЛОГИЯ

Армен Мирзоян

ТЕОРЕТИЧЕСКИЕ И МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ОСНОВЫ ОПРЕДЕЛЕНИЙ ПОЛИТИЧЕСКОЙ СТАБИЛЬНОСТИ ГОСУДАРСТВА 73

Баграт Багратян

ТЕОРЕТИКО-КОНЦЕПТУАЛЬНЫЕ ПОДХОДЫ К ИНСТИТУТУ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ В КОНТЕКСТЕ РАЗВИТИЯ СИСТЕМЫ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ РА 88

ЭКОНОМИКА

Алвард Харатьян, Анахит Степанян

ЭКОНОМИЧЕСКИЙ РОСТ И СОЦИАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ В АРМЕНИИ. ОЦЕНКА ВЗАИМОДЕЙСТВИЯ МЕЖДУ ЭКОНОМИЧЕСКИМ РОСТОМ, НЕРАВЕНСТВОМ И БЕДНОСТЬЮ 102

Севак Торгомян, Алёша Овсепян

ВЛИЯНИЕ ИСКУССТВЕННОЙ ИНТЕЛЛЕКТА И МАШИННОГО ОБУЧЕНИЯ НА УПРАВЛЕНИЕ ПРОЕКТАМИ В КОНТЕКСТЕ ЦЕЛЕЙ ООН В ОБЛАСТИ УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ 117

ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ

Нарине Арутюнян

РАСШИФРОВКА АЛГОРЯЗЫКА: ИСПОЛЬЗОВАНИЕ ЭВФЕМИСТИЧЕСКОГО ЯЗЫКА АЛГОРИТМОВ СОЦИАЛЬНЫХ СЕТЕЙ 131

Нелли Саргсян

ПРОБЛЕМА ПЕРЕВОДА МЕТАФОРЫ В ХУДОЖЕСТВЕННОЙ ЛИТЕРАТУРЕ (ОБЗОР РОМАНА ДЖ. ЛОНДОНА «МЕЖЗВЁЗДНЫЙ СКИТАЛЕЦ») 146

Ара Заргарян

ЧТЕНИЕ ПРОТОТИПА НЕРСЕСА ШНОРАЛИ В МОНОСТИХЕ «ПОЕТЫ» ЕГИШЕ ЧАРЕНЦА 159

Арам Хачатрян

ДИСКУССИЯ ОБ ЭСТЕТИЧЕСКИХ И ЦЕННОСТНЫХ ПРОБЛЕМАХ ЛИТЕРАТУРЫ, РАЗВЕРНУВШАЯСЯ ВОКРУГ СТАТЬИ ВАЗГЕНА ГАБРИЭЛЯНА «ПАРАНОЙЯ...» 167

Эдгар Аршакаян

МЕЖДУ ОГРАНИЧЕННОСТЬЮ И ОРГАНИЧНОСТЬЮ: СВОЕОБРАЗИЕ ПОЭТИКИ ФЕДОРА СОЛОГУБА 176

ПЕДАГОГИКА И МЕТОДИКА ОБУЧЕНИЯ

Эрнест Аванесов

ПОНИМАНИЕ СТУДЕНТАМИ ВУЗА ТРАНСФОРМАЦИИ ОЛИМПИЙСКИХ ИДЕАЛОВ В СОВРЕМЕННОМ СПОРТЕ 191

Ирина Мхитарян, Сильва Айриян

РОЛЬ ЦИФРОВЫХ ИНСТРУМЕНТОВ В ПОВЫШЕНИИ ЭФФЕКТИВНОСТИ ПРЕПОДАВАНИЯ И ИЗУЧЕНИЯ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА НА ПРЕМЕРЕ СТАРШИХ ШКОЛ 199

Эля Давтян, Арпине Шахмурадян

ВЛИЯНИЕ ГЕНДЕРА НА ПРЕПОДАВАНИЕ ИНОСТРАННЫХ ЯЗЫКОВ 211

CONTENT

JURISPRUDENCE

Gevorg Israyelyan

ON SOME PROBLEMATIC REGULATION OF INDIVIDUAL INSTITUTIONS OF THE GENERAL PART OF THE DRAFT CODE OF ADMINISTRATIVE OFFENCES OF THE REPUBLIC OF ARMENIA 8

Alik Azatyan

ENSURING THE BEST INTERESTS OF THE CHILD IN SYSTEM OF CONVENTION MECHANISMS 17

Milena Ghazaryan

ENSURING THE TERRITORIAL INTEGRITY OF THE STATE WITHIN THE FRAMEWORK OF INTERNATIONAL LEGAL STANDARDS 29

Borya Chilingaryan

THE PRESUMPTION OF INNOCENCE IN THE SYSTEM OF LEGAL PRESUMPTIONS: ESSENCE AND LEGAL CONTENT 38

Martin Manukyan

EVOLUTION OF THE IDEAS OF LAW AND FREEDOM: FROM THE FRENCH ENLIGHTENMENT TO GERMAN CLASSICAL PHILOSOPHY 55

POLITICAL SCIENCE

Armen Mirzoyan

THE THEORETICAL AND METHODOLOGICAL FOUNDATIONS OF DEFINING THE POLITICAL STABILITY OF THE STATE 73

Bagrat Bagratyan

THEORETICAL AND CONCEPTUAL APPROACHES TO THE INSTITUTE OF NATIONAL SECURITY IN THE CONTEXT OF THE DEVELOPMENT OF THE NATIONAL SECURITY SYSTEM OF THE REPUBLIC OF ARMENIA 88

ECONOMICS

Alvard Khachatryan, Anahit Stepanyan

ECONOMIC GROWTH AND SOCIAL ISSUES IN ARMENIA. ASSESSING THE INTERACTION BETWEEN ECONOMIC GROWTH, INEQUALITY, AND POVERTY 102

Sevak Torgomyan, Alyosha Hovsepyan

THE IMPACT OF ARTIFICIAL INTELLIGENCE AND MACHINE LEARNING ON PROJECT MANAGEMENT IN THE CONTEXT OF THE UN SUSTAINABLE DEVELOPMENT GOALS 117

LINGUISTICS AND PHILOLOGY

Narine Harutyunyan

DECODING ALGOSPEAK: NAVIGATING THE EUPHEMISTIC LANGUAGE OF SOCIAL MEDIA ALGORITHMS 131

Nelli Sargsyan

THE PROBLEM OF METAPHOR TRANSLATION IN VERBAL ART (REFERENCE TO THE NOVEL "THE STAR ROVER" BY J. LONDON) 146

Ara Zargaryan

THE READING OF NERSES SHNORHALIS PROTOTYPE IN THE MONOSTICH "POETS" BY YEGHISHE CHARENTS 159

Aram Khachatryan

DISCUSSION ON THE AESTHETIC AND VALUE ISSUES OF LITERATURE UNFOLDED AROUND VAZGEN GABRIELIAN'S ARTICLE "PARANOIA..." 167

Edgar Arshakyan

BETWEEN CONSTRAINT AND ORGANICITY: THE SPECIFICITY OF FYODOR SOLOGUB'S POETICS 176

PEDAGOGY AND TEACHING METHODOLOGY

Ernest Avanesov

UNDERSTANDING OF THE TRANSFORMATION OF OLYMPIC IDEALS IN MODERN SPORTS BY UNIVERSITY STUDENTS 191

Irina Mkhitarayan, Silva Hayriyan

THE ROLE OF DIGITAL TOOLS IN ENHANCING ENGLISH LANGUAGE TEACHING AND LEARNING IN HIGH SCHOOLS 199

Elya Davtyan, Arpine Shahmuradyan

THE IMPACT OF GENDER IN FOREIGN LANGUAGE TEACHING 211

Գևորգ Իսրայելյան

ՀՀ ԳԱԱ փորձաքննությունների ազգային բյուրոյի քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի պետ, Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Էլ. հասցե՝ gevorg.israyelyan@eiu.am

DOI: 10.53614/18294952-2025.1-8

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍԻ ԱՌԱՆՁԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՈՐՈՇ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայտնի է, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործող օրենսգիրքը չի արտահայտում ներկայիս իրողությունը, չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության իրավական համակարգին: Ուստի, ակնբախ է նոր օրենսգրքի ընդունման անհրաժեշտությունը: Ժամանակի ընթացքում մշակվել են նախագծեր, որոնցից վերջինը Արդարադատության նախարարության հեղինակածն էր: Հեղինակն ուսումնասիրության առարկա է դարձրել այդ նախագծի ընդհանուր մասի դրույթները և հանգել այն եզրակացության, որ առանձին ինստիտուտների կարգավորումներ խնդրահարույց են: Խոսքը, մասնավորապես, այնպիսի ինստիտուտների նախագծային կարգավորումների թերությունների մասին է, ինչպիսիք են անհրաժեշտ պաշտպանությունը, վարչական պատասխանատվությունից ազատելը, վարչական տույժերը և դրանց նշանակումը:

Կատարած հետազոտության արդյունքում հեղինակը ձևակերպել է առաջարկություններ, որոնք հնարավորություն կընձեռեն հետագայում կարգավորումներ կատարելիս խուսափել ի հայտ բերված խնդիրներից:

Հիմնաբառեր. նախագիծ, օրենսգիրք, անհրաժեշտ պաշտպանություն, վարչական պատասխանատվությունից ազատելը:

Ներածություն

Գաղտնիք չէ, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործող օրենսգիրքն ընդունվել է դեռևս 1985 թվականին: Բնականաբար, այն չի արտահայտում ներկայիս իրողությունը, չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության իրավական համակարգին՝ չնայած կատարված բազմաթիվ փոփոխություններին և լրացումներին: Ուստի, ակնհայտ է նոր օրենքի ընդունման անհրաժեշտությունը: Իհարկե, ժամանակի ընթացքում մշակվել են տարբեր նախագծեր, սակայն մինչ այժմ նոր օրենսգիրք չի ընդունվել:

Նախագծերից վերջինը հեղինակել էր Արդարադատության նախարարությունը: Սույն հետազոտության նպատակն է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի նշված նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդհանուր մասի դրույթների ուսումնասիրությունը և խնդրահարույց կարգավորումների բացահայտումը, իսկ խնդիրը՝ առաջարկությունների ներկայացումը, որոնք հնարավորություն կընձեռեն հետագայում խուսափել խնդրահարույց կարգավորումներից:

Մեթոդը

Հետազոտության մեթոդաբանական հիմքն են կազմել վերլուծության, ձևական-իրավական, համակարգային-կառուցվածքային և տրամաբանական մեթոդները:

Նախագծի ընդհանուր մասի առանձին ինստիտուտների կարգավորումների որոշ խնդրահարույց հարցեր

Մեր կողմից կատարված հետազոտության արդյունքները հնարավորություն են ընձեռել վեր հանել Նախագծի ընդհանուր մասի կարգավորումների մի քանի խնդրահարույց հարցեր.

1. Նախագծի 25-րդ հոդվածը կարգավորում է անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտը:

Հայտնի է, որ անհրաժեշտ պաշտպանության էությունը պաշտպանվողի կամ մեկ այլ անձի իրավունքները, ազատությունները, օրինական շահերը, հասարակության կամ պետության օրինական շահերը հակաիրավական ոտնձգությունից կամ դրա իրական սպառնալիքից՝ ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանելն է (Кононкова, Залунина, 2018, էջեր 32-33):

Նախագծի 25-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է անհրաժեշտ պաշտպանության հասկացությունը՝ գրեթե նույնությամբ կրկնօրինակելով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասի կանոնակարգումը: Նախագիծը սահմանում է. «Վարչական պատասխանատ-

վության ենթակա չէ այն անձը, ով արարքը կատարել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում, այսինքն՝ պաշտպանվողի կամ մեկ այլ անձի կյանքը, առողջությունը, իրավունքները, ազատությունները, օրինական շահերը, հասարակության կամ պետության օրինական շահերը հակաիրավական ոտնձգությունից կամ դրա իրական սպառնալիքից՝ ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանելիս, եթե թույլ չի տրվել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում: (...)»:

Հարց է առաջանում, թե ոտնձգություն կատարողին ինչպիսի՞ վնաս պատճառելու մասին է խոսքը: Օրինակ՝ կարող է խոսք լինել արդյոք ոտնձգողին կյանքից զրկելու մասին: Եթե այո, ապա նման հարթությունում իրավաչափության պայմանները խախտելու դեպքերը տեղափոխվում են քրեաիրավական դաշտ: Ուստի նշված պարագայում քրեական իրավունքի հետ հարաբերակցության հարցը շատ նուրբ է, սահմանազատումը՝ խնդրահարույց: Պատահական չէ, որ Ռուսաստանի Դաշնության օրենսդիր մարմինը խուսափել է վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտ նախատեսելուց՝ ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու հնարավորությունն ամրագրելով միայն քրեական օրենսգրքով (հոդված 37):

Նշվածից տրամաբանորեն բխող հաջորդ հարցը անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցման դեպքում պատասխանատվության խնդիրն է: Նախագծի 35-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ կատարված արարքը վարչական իրավախախտում է, եթե նախատեսված է օրենսգրքի հատուկ մասով: Սակայն մեր կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ Նախագծի հատուկ մասի ոչ մի հոդված անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ կատարված որևէ արարքի համար պատասխանատվություն չի սահմանում: Ուստի, ակնբախ է կարգավորման բաց:

2. Նախագծի 35-րդ հոդվածը վարչական պատասխանատվությունից ազատելու հիմքերի թվին է դասում մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձին վարչական պատասխանատվությունից ազատելը: Այն, մասնավորապես, սահմանում է. «Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձն ազատվում է այն վարչական իրավախախտման համար վարչական պատասխանատվությունից, որը կատարել է հարկադրաբար՝ իր նկատմամբ իրականացված մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ընթացքում»:

Մեր նախորդ հետազոտություններում հիմնավորել ենք, որ վերոհիշյալ հանգամանքը չի կարող դիտարկվել որպես վարչական պատասխանատվությունից ազատելու հիմք (Исраелян, 2023, էջեր 154-155): Խնդիրն այն է, որ հարկադրաբար արարք կատարելու դեպքում բացակայում է կամային հատկանիշը՝ որպես մեղքի բաղադրիչ: Հետևաբար՝ բացակայում է վարչական իրավախախտումը: Մինչդեռ հայտնի է, որ վարչական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի համար պարտադիր է իրավախախտման առկայությունը (Իսրայելյան, 2022, էջեր 62-63): Իսկ մեղքի բացակայության

դեպքում զանցանքը բացակայում է: Փաստորեն, վերոգրյալ կարգավորման պարագայում վարչական պատասխանատվությունից ազատելու հիմքը նույնացվել է վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանքի հետ, ինչն անթույլատրելի է (Кутеева, 2023, էջեր 183–184):

Ուստի, ոչ միայն մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման, այլ ցանկացած իրադրությունում, երբ անձը հարկադրաբար արարք է կատարում, վարչական պատասխանատվությունը (ուստի և դրանից ազատելը) բացառված է: Այդ մասին է վկայում նաև Նախագծի 27-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը, ըստ որի՝ ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ արարքը գիտակցելու կամ ղեկավարել անկարողության դեպքում անձը ենթակա չէ պատասխանատվության: Նախատեսված է բացառություն միայն այն դեպքերի համար, երբ կոնկրետ իրադրությունում անձը կարող էր գիտակցել կամ ղեկավարել իր արարքը: Նման դեպքերում նա ենթակա է վարչական պատասխանատվության անզգուշությամբ վարչական իրավախախտում կատարելու համար, եթե այն նախատեսված է օրենսգրքի հատուկ մասով:

3. Նախագծի 43-րդ հոդվածը, որպես վարչական տույժի տեսակ, նախատեսում է վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի կամ գույքի բռնագրավումը: Այսպիսի վարչական տույժ նախատեսված է նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործող օրենսգրքի հոդված 28-ում (գործող օրենքում նման ձևակերպմամբ նախատեսված է նաև մեկ այլ տույժի տեսակ՝ վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկան հատուցմամբ վերցնելը (հոդված 29), որը Նախագծում չի նախատեսվել): Այստեղ խնդրահարույց է «անմիջական օբյեկտ հանդիսացող առարկա կամ գույք» ձևակերպումը: Հայտնի է, որ գործիքը կամ այլ գույքը չի կարող լինել իրավախախտման օբյեկտ: Ցանկացած տեսակի իրավախախտման (զանցանք, հանցանք և այլն) օբյեկտն օրենքով պաշտպանվող հասարակական հարաբերություններն են, որոնց դեմ ունենում է խախտումը (Харабада, 2020, էջ 318): Ըստ էության, վերոգրյալ կարգավորումներում խոսք կարող է լինել միայն իրավախախտման առարկայի մասին: Մասնագիտական գրականության մեջ իրավախախտման առարկան բնութագրվում է որպես նյութական աշխարհի իր, որի վրա իրավախախտման կատարման ընթացքում իրականացվում է ներգործություն (Шевченко, էջ 20): Փաստորեն, վերոգրյալ կարգավորումներում նույնացվել են իրավախախտման օբյեկտն ու առարկան, մինչդեռ դրանք տարբեր հասկացություններ են:

4. Նախագծի 50-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է. «Վարչական տույժի տեսակը և չափը որոշվում է՝ հաշվի առնելով վարչական իրավախախտման՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, հետևանքները, վարչական պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, վարչական իրավախախտում կատարած անձին բնութագրող տվյալները, գույքային դրությունը»:

Նշված կարգավորման կենսագործումն ապահովող կառուցակարգը հա-

րաբերական որոշակի և երկրնտրելի սանկցիաների նախատեսումն է: Սակայն Նախագծում կան հոդվածներ, որոնց սանկցիաները բացարձակ որոշակի են՝ նախատեսում են տույժի մեկ տեսակ և մեկ չափ: Հարց է առաջանում՝ ինչպե՞ս է հնարավոր նման կարգավորումների դեպքերում տույժ նշանակելիս հաշվի առնել, օրինակ, պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները:

Հետագայում խնդրահարույց կարգավորումներից խուսափելու առաջարկություններ

Հետագայում համապատասխան կարգավորումներ իրականացնելիս, մեր կարծիքով, անհրաժեշտ է.

1. Մանրամասն կանոնակարգել անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտը:

Խնդիրն այն է, որ անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտը բավականին բարդ է: Ուստի անհրաժեշտ է.

1) Ոչ թե նմանօրինակել քրեաիրավական կարգավորումներին, այլ սահմանել ուսնձգություն պատճառողին հասցվող վնասի բնույթը: Կարծում ենք, որ իրավակարգավորում իրականացնելիս անհրաժեշտ է շեշտել, որ ուսնձգություն կատարողին կարող է պատճառվել ցանկացած տեսակի վնաս, բացառությամբ կյանքին և առողջությանը հասցվող վնասից, որը բնորոշ է միայն անհրաժեշտ պաշտպանությանը քրեական իրավունքում:

2) Նախատեսել զանցակազմեր, որոնք պատասխանատվություն կսահմանեն անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցման դեպքում: Որպես օրինակ կարող է ծառայել այնպիսի զանցակազմի նախատեսումը, ինչպիսին է գույքը ոչնչացնողին կամ վնասողին անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ գույքային վնաս պատճառելը, որը պաշտպանվողի համար ակնհայտ, համաչափ չէ հակաիրավական ուսնձգության բնույթին և վտանգավորությանը ու չի բխում պաշտպանվելու անհրաժեշտությունից:

2. Որպես վարչական պատասխանատվությունից ազատելու հիմք չնախատեսել մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձին վարչական պատասխանատվությունից ազատելը:

Ինչպես վերը հիմնավորվեց, թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձի կողմից հարկադրաբար արարք կատարելը պատասխանատվությունը բացառող հանգամանք է, այլ ոչ թե պատասխանատվությունից ազատելու տեսակ:

3. Որպես վարչական տույժի տեսակ նախատեսել վարչական իրավախախտմանգործիքի կամ առարկայի բռնագրավումը:

Գործող օրենքում և Նախագծում իրավախախտման օբյեկտը և առարկան նույնացվել են, ինչն անընդունելի է, քանզի դրանք, ինչպես վերը նշվեց, տարբեր հասկացություններ են:

4. Հրաժարվել բացարձակ որոշակի սանկցիաների նախատեսման պրակտիկայից:

Վարչական իրավախախտման՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, հետևանքները, վարչական պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, վարչական իրավախախտում կատարած անձին բնութագրող տվյալները, գույքային դրությունը վարչական տույժ նշանակելիս հնարավոր է հաշվի առնել միայն այն դեպքերում, երբ համապատասխան նորմի սանկցիան հարաբերական որոշակի կամ երկրնորելի է: Նման կարգավորումը հնարավորություն կտա անհատականացնել պատասխանատվությունը:

Եզրակացություն

Մեր կողմից կատարված հետազոտության արդյունքները հանգում են հետևյալին.

1. Նախագծի 25-րդ հոդվածը, կարգավորելով անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտը, անտեսել է ոտնձգություն կատարողին պատժառվող վնասի բնույթի հարցը, ինչպես նաև չի սահմանել այն իրավախախտումների շրջանակը, որոնք կարող են կատարվել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ:

2. Նախագծի 35-րդ հոդվածը վարչական պատասխանատվությունից ազատելու հիմքերի թվին է դասել մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձին վարչական պատասխանատվությունից ազատելը: Սակայն իրականում այն վարչական պատասխանատվությունից ազատելու հիմք չէ, քանի որ հարկադրաբար արարք կատարելու դեպքում բացակայում է կամային հատկանիշը՝ որպես մեղքի բաղադրիչ: Ուստի նման դեպքում խոսք կարող է լինել միայն պատասխանատվությունը բացառող հանգամանքի մասին:

3. Նախագծի 43-րդ հոդվածը, որպես վարչական տույժի տեսակ, նախատեսում է վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի կամ գույքի բռնագրավումը: Խնդրահարույց է «անմիջական օբյեկտ հանդիսացող առարկա կամ գույք» ձևակերպումը: Հայտնի է, որ առարկան կամ գույքը չի կարող լինել իրավախախտման օբյեկտ: Ուստի խոսք կարող է լինել միայն իրավախախտման առարկայի մասին:

4. Նախագծի 50-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված հանգամանքները վարչական տույժ նշանակելիս միշտ չէ, որ հնարավոր է հաշվի առնել, քանզի բացարձակ որոշակի սանկցիաների նախատեսումը խոչընդոտում է դրան:

5. Հետագայում համապատասխան կարգավորումներ իրականացնելիս անհրաժեշտ է.

1) մանրամասն կանոնակարգել անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտը՝ իրավակարգավորում իրականացնելիս շեշտել, որ ոտնձգություն կատարողին կարող է պատժառվել ցանկացած տեսակի վնաս, բացառությամբ կյանքին և առողջությանը հասցվող վնասից, որը բնորոշ է միայն անհրաժեշտ պաշտպանությանը քրեական իրավունքում, ինչպես նաև նախատեսել զանցակազմեր, որոնք պատասխանատվություն կսահմանեն անհրա-

Ժեշտ պաշտպանության սահմանազանցման դեպքում, օրինակ՝ գույքը ոչնչացնողին կամ վնասողին անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ գույքային վնաս պատճառելը,

2) խուսափել վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանքները և վարչական պատասխանատվությունից ազատելը նույնացնելուց, մասնավորապես՝ չնախատեսել մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձին վարչական պատասխանատվությունից ազատելը՝ որպես վարչական պատասխանատվությունից ազատելու հիմք,

3) ձիշտ օգտագործել համապատասխան եզրույթները, մասնավորապես՝ համապատասխան կարգավորումներում «իրավախախտման անմիջական օրյեկտ» արտահայտության փոխարեն օգտագործել «իրավախախտման առարկա» եզրը,

4) հրաժարվել բացարձակ որոշակի սանկցիաների նախատեսման պրակտիկայից, ինչը հնարավորություն կտա հաշվի առնել օրենքով սահմանված համապատասխան հանգամանքները, անհատականացնել պատասխանատվությունը:

Օգտագործված գրականության ցանկ

Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի նախագիծ // <https://www.e-draft.am/projects/6259/about> (վերջին մուտք՝ 10.02.2025):

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ընդունվել է 05.05.2021թ.: ՀՕ-199-Ն: Միասնական կայք 2021.05.17-2021.05.30: Պաշտոնական հրապարակման օրը՝ 27.05.2021թ.:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրք, ընդունվել է 06.12.1985թ.: ՀՍՍՀ ԳՍՏ 1985/23:

Իսրայելյան Գ.Վ., Վարչական իրավունք (Ընդհանուր դրույթներ): Քրեատոմատիա: Երևան, Հեղ. հրատ., 2022. – 204 էջ:

Кодекс об административных правонарушениях Российской Федерации, принят 30.12.2001г. // https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_34661/ (վերջին մուտք՝ 10.02.2025):

Уголовный кодекс Российской Федерации, принят 13.06.1996г. // https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/ (վերջին մուտք՝ 10.02.2025).

Исраелян Г. О вопросе совершенствования института освобождения от административной ответственности в Республике Армения // ՀՀ սահմանադրական դատարան. Տեղեկագիր. 3(111) 2023, էջեր 149-162:

Кононкова Н.В., Залунина Т.Г. К вопросу о допустимости необходимой обороны при защите от посягательства, имеющего признаки административного правонарушения // Вестник АМГУ. Выпуск 82, 2018. С. 32-36.

Шевченко В.Ю. Объект и предмет преступления // <file:///D:/Users/User/Downloads/obekt-i-predmet-prestupleniya.pdf> (վերջին մուտք՝ 10.02.2025).

Харабара И.В. Объект преступления и его виды // Образование и право. № 6, 2020. С. 318-323.

Геворг Исраелян

*Начальник Научно-исследовательского
центра прикладных проблем криминологии
Национального бюро экспертиз Национальной
академии наук Республики Армения,
преподаватель Международного университета Евразия,
кандидат юридических наук, доцент
Эл. адрес: gevorg.israyelyan@eiu.am*

О НЕКОТОРЫХ ПРОБЛЕМАТИЧНЫХ РЕГЛАМЕНТАЦИЯХ ОТДЕЛЬНЫХ ИНСТИТУТОВ ОБЩЕЙ ЧАСТИ ПРОЕКТА КОДЕКСА ОБ АДМИНИСТРАТИВНЫХ ПРАВОНАРУШЕНИЯХ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Статья посвящена изучению регламентаций общей части последнего проекта Кодекса об административных правонарушениях Республики Армения. Результаты исследования автора показывают, что регламентации таких институтов, как необходимая оборона, освобождение от ответственности, взыскания и их назначение, проблематичны. Во-первых, не предусмотрен характер ущерба, причиняемого лицу, посягающему на блага, охраняемые законом, а так же круг деяний, которые могут быть совершены с превышением пределов необходимой обороны. Во-вторых, предусмотрено освобождение от ответственности лица, подвергшегося трафикингу или эксплуатации людей. Анализ данной нормы показывает, что при совершении пострадавшим лицом деяния по принуждению отсутствует волевой признак – как составляющий элемент вины. Следовательно в данном случае мы имеем дело с обстоятельством, исключающим ответственность. В-третьих, предусмотрена конфискация орудия либо непосредственного объекта административного правонарушения либо имущества, как вид взыскания. Известно, что орудие либо другое имущество не может быть объектом правонарушения, так как объект – это общественные отношения, на которые посягает проступок. Следовательно, в указанной регламентации объект и предмет правонарушения отождествлены. В четвертых, при назначении взыскания не всегда возможно учитывать отягчающие, смягчающие и другие обстоятельства, так как в законопроекте встречаются абсолютно-определенные санкции.

Учитывая вышеуказанные наблюдения, автор представил предложения, которые в будущем помогут решить указанные проблемы регламентирования.

Ключевые слова: проект, кодекс, необходимая оборона, освобождение от административной ответственности.

Gevorg Israyelyan

*Head of the Scientific Research Center of Applied
problems in criminology of*

*National Bureau of Expertises of National Academy of
Sciences of the Republic of Armenia,*

Lecturer of the Law Department at Eurasia International University,

Ph.D. in Law, Associate Professor

Email: gevorg.israyelyan@eiu.am

ON SOME PROBLEMATIC REGULATION OF INDIVIDUAL INSTITUTIONS OF THE GENERAL PART OF THE DRAFT CODE OF ADMINISTRATIVE OFFENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

The article is devoted to the study of the regulations of the general part of the latest draft of the Code of Administrative Offences of the Republic of Armenia. The results of the author's research show that the regulation of institutions such as necessary defense, exemption from responsibility, penalties and their appointments are problematic. Firstly, the nature of the damage caused to an intruder, is not provided for, or is the range of acts that may be committed in excess of the limits of necessary defense. Secondly, provided the exemption from liability of a person who has been trafficked or exploited. An analysis of this rule shows that when a victim commits an act of coercion, there is no volitional element as an integral element of guilt. Therefore, in this case, we are dealing with circumstances that exclude liability. Thirdly, it provides for the confiscation of an instrument or a direct object of an offense or property as a type of penalty. It is known that an instrument or other property cannot be the object of an offense, since the object is a social relationship encroached upon by a misdemeanor. Consequently, in the specified regulation, the object and the subject matter of the offense are identified. Fourthly, when imposing penalties, it is not always possible to take into account aggravating, mitigating and other circumstances, since absolutely determinate sanctions are found in the draft.

Taking into account the above observations, the author presented proposals that will help solve these regulatory problems in the future.

Key words: draft, Code, necessary protection, exemption from administrative responsibility.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2025թ. մայիսի 5-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2025թ. մայիսի 7-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2025թ. հունիսի 11-ին:

Ալիկ Ազատյան

*Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության
փրկարար ծառայության ծառայության կազմակերպման
վարչության ծառայության կազմակերպման բաժնի ավագ հրահանգիչ,
Հայաստանում եվրոպական համալսարանի
իրավագիտության ամբիոնի հայցորդ
Էլ. հասցե՝ alik.azatyan.1987@mail.ru*

DOI: 10.53614/18294952-2025.1-17

ԵՐԵՒԱՅԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՇԱՀԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԿՈՆՎԵՆՑԻՈՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ու ապահովումը հանդիսանում են պետաիրավական կարևորագույն հիմնահարցերից մեկը: Նրանց իրավունքների պաշտպանությունը մշտապես գտնվել և գտնվում է միջազգային հանրության ուշադրության կենտրոնում:

Երեխաները բոլոր ժամանակներում ու հասարակարգերում մշտապես եղել են հասարակության ամենաանպաշտպան և խոցելի խավը, և կախված այն հանգամանքից, թե որքանով են պաշտպանված երեխայի իրավունքները՝ կախված է նաև մեր հասարակության ապագան:

Երեխայի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը ենթադրում է իրավական մեխանիզմների այնպիսի ձևերի համակարգ, որն ունակ կլինի կարգավորելու երեխայի՝ տարբեր տարիքային խմբերի առանձնահատկություններով պայմանավորված իրավահարաբերությունների շրջանակը:

Վերոգրյալը նշանակում է, որ խնդիրը, առաջին հերթին, պետք է դիտարկել երեխայի հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների և դրանցով պայմանավորված հարաբերությունների ասպեկտում, որտեղ, անշուշտ, նախապատվությունը պետք է տրվի երեխայի լավագույն շահից բխող օրենսդրական կարգավորումներին:

Հիմնաբառեր. կոնվենցիա, հռչակագիր, դաշնագիր, արձանագրություն, լավելու իրավունք, երեխայի լավագույն շահ:

Ներածություն

Սույն հոդվածի շրջանակներում անդրադարձ է կատարվել երեխայի լավագույն շահին ապահովող և նրա իրավունքների պաշտպանությանն առնչվող կոնվենցիոն մեխանիզմներին, դրանց իրավական հիմքերի ընդհանուր նկարագրին, միջազգային պրակտիկայում առկա ոլորտային ձեռքբերումներին, ինչպես նաև ներպետական իրավական համակարգում՝ երեխայի լավագույն շահին ամբողջացնող իրավական նորմերի առանձնահատկություններին ու առկա օրենսդրական բացերին:

Միջպետական նշանակության որոշ փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում փորձ է արվել սահմանել նաև երեխայի լավագույն շահի ձևակերպումը՝ վերջինիս ապահովման անմիջական գործոն դիտարկելով նրա՝ լսելի լինելու իրավունքի սկզբունքային կիրառումը:

Հոդվածը, անշուշտ, նպատակ չի հետապնդում երեխայի լավագույն շահը վեր դասել պետական շահից, որտեղ, կարող են, շրջանցվել կառավարման համակարգի համար անկյունաքարային նշանակություն ունեցող սահմանադրաիրավական երաշխիքներն ու սկզբունքները:

Այն, ավելի շուտ, նպատակ է հետապնդում երեխայի լավագույն շահին ամրագրող մի շարք նորմ-իրավունքներ դիտարկել նորմ-սկզբունքի իրավական հարթության առանցքում՝ փորձ անելով դրանք, նախևառաջ, ընկալել երեխայի սահմանադրական իրավունքների ընդհանուր համատեքստում:

Մեթոդ

Հետազոտության ընթացքում կիրառվել են համեմատական և իրավական վերլուծության մեթոդներ, ինչպես նաև իրավակիրառ փորձի ուսումնասիրություններ, որոնք օգտագործվել են միջազգայնորեն ընդունված՝ իրավական որոշ սկզբունքների բովանդակության ուսումնասիրության ընթացքում: Նշված մեթոդների կիրառման արդյունքում հնարավոր է եղել հանգել թեմայի շրջանակներում ցանկալի արդյունավետություն հետապնդող առաջարկությունների ձևակերպմանն ու հիմնավորել մի շարք խնդիրների քննարկման արդիականությունը՝ ներպետական իրավական համակարգում:

Երեխայի լավագույն շահի ապահովման միջազգային իրավական փորձն ու ներպետական իրավական ընկալումները

Հայրենական իրավական համակարգը «երեխայի լավագույն շահ» հասկացության սահմանման վերաբերյալ միանշանակ և սկզբունքային մոտեցում չի ցուցաբերում: Ավելին, այն, ըստ արժանվոյն, ուսումնասիրված չէ հայ անվանի իրավագետների կողմից, ինչը, առնվազն, մտահոգիչ է՝ հաշվի առնելով վերջինիս արդիականությունը մերօրյա կյանքում:

Ճիշտ է, տարբեր ժամանակներում որոշ հայ հեղինակներ, այս կամ այն կերպ, անդրադարձել են վերոգրյալին, սակայն այն վերջնական իրավական

ամրագրում և մեծ տարածում չի ստացել մասնագիտական լայն շրջանակներում:

Այս առումով, հարկ ենք համարում նշել, որ ի տարբերություն ներպետական օրենսդրության՝ միջազգային իրավական միտքը ժամանակի ընթացքում ունեցել է մի շարք ձեռքբերումներ՝ բազմաբևեռ իրավահարաբերությունների առանցքում բառացիորեն անդրադառնալով վերը նշված եզրույթին՝ փորձելով երեխայի մասնակցությամբ խնդրահարույց որոշ ասպեկտներ լուծել ի շահ վերջինիս, որտեղ, հնարավորինս, արտացոլված կլինի երեխայի առավելագույն իրավաբանական օգուտը:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ երեխայի իրավունքների պաշտպանությունը միջազգային պրակտիկայում իրականացվել և շարունակվում է իրականացվել՝ ինչպես մարդու իրավունքներին նվիրված մի շարք միջազգային իրավական փաստաթղթերի ընդհանուր համատեքստում, ինչպիսիք են, օրինակ, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը¹, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը², «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան (առավել հայտնի՝ որպես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա)³ և այլն, այնպես էլ՝ երեխայի իրավունքների պաշտպանությանը նվիրված հատուկ իրավական փաստաթղթերի շրջանակներում, որոնց շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան⁴ (այսուհետ՝ Կոնվենցիա), ինչը, ըստ էության, առաջին միջազգային իմպերատիվ ակտն է, որն ամբողջությամբ նվիրված է երեխայի իրավունքների պաշտպանությանը:

Պետք է նշել, որ նշված բոլոր միջազգային բնույթի փաստաթղթերը վավերացվել են Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) կողմից:

Ինչևէ, հարկ ենք համարում սույն հոդվածի շրջանակներում մեկ անգամ ևս անդրադարձ կատարել Կոնվենցիայի և միջպետական այլ փաստաթղթերի շրջանակներում երեխայի լավագույն շահն ամրագրող որոշ իրավական ընկալումներին, դրանց ընդհանուր նկարագրին ու պարզաբանումներին և ներպետական մակարդակում դրանց տեսական մոտեցումների հիմնախնդիրներին:

Կոնվենցիան ներառում է բոլոր այն կարևոր ու արժևոր միջոցները, որոնք վերաբերում են երեխայի սոցիալական, քաղաքական, տնտեսական ու բնական իրավունքներին (Malekian, Kerstin, 2012, էջ 64):

Այն բաղկացած է 54 հոդվածից, որի հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները՝

- 1) խտրականության արգելքը,
- 2) երեխայի լավագույն շահի ապահովման սկզբունքը,

1 ՀՀ-ի կողմից վավերացվել է 1993 թվականի դեկտեմբերի 13-ին:

2 ՀՀ-ի կողմից վավերացվել է 1993 թվականի սեպտեմբերի 23-ին:

3 ՀՀ-ի կողմից վավերացվել է 2002 թվականի ապրիլի 26-ին:

4 ՀՀ-ի կողմից վավերացվել է 1993 թվականի հուլիսի 22-ին:

3) կյանքի, փրկվելու և զարգացման սկզբունքը,

4) երեխայի մասնակցության սկզբունքը (Կոնվենցիա, հոդվ. 2, 3, 6, 12): Կոնվենցիան բաղկացած է նաև երեք կամընտիր արձանագրությունից: Դրանք են՝

1. Կոնվենցիայի՝ մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրությունը⁵.

2. Զինված հակամարտություններին երեխաների մասնակցության մասին կամընտիր արձանագրությունը⁶.

3. Հաղորդակցության վարույթի մասին կամընտիր արձանագրությունը⁷:

Պետք է նշել, սակայն, որ մինչ Կոնվենցիայի ընդունումը, միջազգային իրավունքում ընդունվել են՝ թեկուզև ոչ իմպերատիվ, սակայն այլ հիմնարար գաղափարական նշանակություն ունեցող փաստաթղթեր ևս:

Մասնավորապես՝ ՄԱԿ-ի 1959 թվականի Երեխայի իրավունքների հռչակագիրը, որի նախաբանը հռչակում է հետևյալը՝ «Երեխան հատուկ երաշխիքների ու խնամքի կարիք ունի՝ ներառյալ իրավական պաշտպանությունը՝ մինչև երեխայի ծնվելը և ծնվելուց հետո»:

Հռչակագրի հիմքում ընկած է այն գաղափարը՝ ըստ որի, երեխան պետք է վայելի «հատուկ պաշտպանություն», և պետք է ապահովվեն «հնարավորություններ ու կառուցակարգեր՝ երեխայի առողջ ու նորմալ ֆիզիկական, մտավոր, բարոյական, հոգևոր և սոցիալական զարգացման համար» (Dabney, Eldridge, 2013, էջ 4):

Այն սահմանում է երեխայի իրավունքները՝ որպես իրավական պաշտպանության հատուկ օբյեկտ և շեշտում, որ վերջինս պետք է ունենա անհատի իրավունքներ, այլ ոչ թե դիտարկվի որպես իր ծնողների մի մաս (Կոնվենցիան «Երեխա» է դիտարկում յուրաքանչյուր անձի, ում տասնութ տարեկանը դեռևս չի լրացել), ինչը նշանակում է, որ հռչակագիրը երեխաներին դիտարկում է՝ որպես իրավահարաբերության «խնդրություն», այլ ոչ թե «ածանցյալ» սուբյեկտ, որը, ըստ էության, հանդիսանում է յուրատեսակ ազդակ՝ ներպետական մակարդակով նման մոտեցման շուրջ համապատասխան իրավակարգավորումների համար:

Ասվածի համատեքստում հարկ ենք համարում, ավելի շատ, կենտրոնանալ Կոնվենցիայով ամրագրված՝ երեխայի լավագույն շահի ապահովման սկզբունքի վրա՝ այն դիտարկելով վերջինիս իրավունքների ապահովման հիմնական առանցքում:

Նախ, սկսենք ՄԱԿ-ի 1959 թվականի Երեխայի իրավունքների հռչակագրի վերոհիշյալ նախաբանից, որում խոսք է գնում դեռևս չծնված երեխայի իրավական պաշտպանության մասին:

Ամենապարզ տրամաբանությամբ և իրավունքի տեսական ընկալմամբ, ինչպես ընդունված է իրավաբանական գիտության կողմից, երբ խոսվում է իրավունքի սուբյեկտի մասին, հասկանալի է դառնում, որ խոսք է գնում, առաջին հերթին, կենսաբանորեն ծնված, իրականության մեջ ֆիզիկապես

5 ՀՀ-ի կողմից վավերացվել է 2005 թվականի հունիսի 30-ին:

6 ՀՀ-ի կողմից վավերացվել է 2005 թվականի դեկտեմբերի 30-ին:

7 Վերջին արձանագրությունը ՀՀ-ն դեռ չի ստորագրել:

գոյություն ունեցող, որոշակի իրավունակությամբ և գործունակությամբ օժտված անձի մասին:

Սակայն խնդիրն այլ է, երբ խոսքը վերաբերում է դեռևս ֆիզիկապես գոյություն չունեցող անձին, ում կենսաբանական ծնունդը, փաստացի, արձանագրված չէ, սակայն օրենսդրական մակարդակով նման իրավակարգավորման անհրաժեշտություն է նկատվում՝ հաշվի առնելով նման փաստի (ծնվելու) առաջացման օբյեկտիվ նախադրյալները (ներարգանդային վիճակում ապրող, սակայն ամբողջապես ձևավորված պտուղը, որն ունի արդեն իսկ ծնված մարդուն բնորոշ բոլոր կենսաբանական առանձնահատկությունները):

Ճիշտ է, կենսաբանական գիտության մեջ, դեռևս, շարունակում է խնդրահարույց մնալ այն հարցը, թե որ փուլից է մարդու կյանքը համարվում սկսված (առաջին ճիշ արձակելը, թե դեռևս սաղմնային վիճակում գտնվող, սակայն արտաքին ազդակներ ցույց տվող պտուղը), և որքան էլ դա իրավաբանական գիտության առաջնային խնդիրը չէ, այնուամենայնիվ, գտնում ենք, որ ասվածը, քննարկման կարիք ունի՝ թեկուզև անձի՝ զուտ սուբյեկտայնության իմաստով:

Երբ խոսքը գնում է մարդու իրավունքի և պարտականության անմիջական իրացման մասին, միանգամայն հասկանալի է դառնում, որ գործ ունենք արտաքին աշխարհում ապրող ֆիզիկական անձի հետ:

Խնդիրն այլ է, երբ արտաքին աշխարհում դեռևս գոյություն չունի ֆիզիկական անձը, սակայն նախքան նրա ծնունդը, օրենսդրական մակարդակով նման հարաբերության կարգավորման անհրաժեշտություն է նկատվում:

Առաջին հայացքից հարց է ծագում՝ ինչպես կարող է դեռևս ֆիզիկապես գոյություն չունեցող անձը դիտարկվել իբրև իրավունքի սուբյեկտ՝ հիմք ընդունելով այն տեսակետը, որ վերջինս, այդպիսով, փաստացի զրկված է օրենսդրորեն իրեն վերապահված իրավունքների և պարտականությունների անմիջական իրացումից:

Բանն այն է, որ իրավական նման կոնցեպտի համատեքստում ելակետային պետք է ընդունել ոչ թե հիշյալ հանգամանքը, այլ այն, որ նման մոտեցումը նպատակ է հետապնդում դեռևս չծնված անձի համար ստեղծել իրավական նախադրյալ՝ վերջինիս՝ օրենսդրորեն վերապահված իրավունքների հետագա իրացման ապահովման համար:

Այլ կերպ ասած, եթե ծնված երեխայի պարագայում առնչություն ենք ունենում օրենսդրությամբ նրան վերապահված իրավանորմների անմիջական իրացման հետ, ապա դեռևս չծնված երեխայի դեպքում վերոգրյալը դառնում է, ավելի շատ, իրավական երաշխիք՝ հետագայում այն իրագործելու օրենսդրական պայմանով:

Երեխայի իրավունքների պաշտպանության ինստիտուտի կայացման և հետագա զարգացման հեռանկարով պայմանավորված՝ Կոնվենցիայի շրջանակներում ստեղծվել է նաև Երեխայի իրավունքների կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), որը, ըստ էության, հանդիսանում է Կոնվենցիայի դրույթների կատարման միջազգային մշտադիտարկման առաջին մեխանիզմը, որի 44-րդ

հողվածը՝ մասնավորապես, իրավասու է յուրաքանչյուր հինգ տարին մեկ դիտարկել մասնակից պետությունների զեկույցները՝ Կոնվենցիայի դրույթները կյանքի կոչելու ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների ուղղությամբ (Астахов, 2010, էջ 24):

Կոնվենցիան առանձին հողվածով անդրադառնում է անչափահաս իրավախախտների պատժի առանձնահատկություններին, որով, մասնավորապես, արգելում է անչափահաս իրավախախտներին դատապարտել մահապատժի կամ ցմահ ազատազրկման՝ ազատազրկումը՝ որպես պատիժ, դիտարկելով ծայրահեղ դեպքերում՝ հնարավորինս՝ կարճ ժամանակահատվածով (Կոնվենցիա, հոդվ. 37):

Բացառությամբ հատուկ հանգամանքների՝ ազատությունից զրկված յուրաքանչյուր երեխա պետք է իրավունք ունենա անհապաղ օգտվել համապատասխան իրավական և այլ օգնությունից, ինչպես նաև դատարանի կամ այլ իրավասու, անկախ ու անկողմնակալ մարմնի առաջ վիճարկելու իրեն ազատությունից զրկելու օրինականությունը և անհապաղ որոշում ակնկալելու ցանկացած նման գործողության կապակցությամբ:

Միաժամանակ, հարկ է նշել, որ միջազգային պրակտիկայում վաղուց գերիշխում է այն տեսակետը՝ ըստ որի, դեռահասին դատախարակություն տալը հանդիսանում է առավել արդյունավետ միջոց, քան վերջինիս պատժի ենթարկելը, որը, բացի իր մարդասիրական սկզբունքից, հանդիսանում է նաև կարևոր օրենսդրական ազդակ և ընկած է քրեական օրենսդրության հիմքում՝ օրինակ, Ֆրանսիայում «Անչափահասների իրավախախտումների մասին» 1945 թվականի փետրվարի 2-ի № 45-174 օրենքը:

Օրենսդրական նման նախաձեռնության արդյունքում անչափահասին վերապահված նորմ-իրավունքը, այսպիսով, վերաճում է նորմ-սկզբունքի՝ համաձայն որի, յուրաքանչյուր անչափահաս իրավախախտ ունի ուղղվելու իրավունք և չի կարող զրկվել դրանից և ոչ մի պարագայում (Рудрәйб, 2000, էջ 40):

Անչափահասների նկատմամբ արդարադատության խնդրին է անդրադարձել նաև Արդարադատության հարցերով Երեխայի իրավունքների կոմիտեն, որը 2007 թվականի հունվարի 15-ին ժնկում սույն հարցի շրջանակներում ընդունել է երեխայի իրավունքների մասին N 10 ընդհանուր մեկնաբանությունը:

Կոմիտեն մեկնաբանությունում կոչ է անում պետություններին՝ մշակել անչափահասների նկատմամբ արդարադատության ամբողջական համակարգ, որը, իր հերթին, ենթադրում է ոչ միայն անչափահաս իրավախախտների իրավունքների պաշտպանություն երաշխավորող միջոցների ամբողջություն, այլև անչափահաս տուժողների իրավունքների պաշտպանություն և սոցիալական վերականգնում ապահովող համակարգի առկայություն:

Վերջինս շեշտադրել է անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացման հետևյալ հիմնական սկզբունքները՝

- 1) Խտրականության արգելքի սկզբունք,
- 2) Երեխայի լավագույն շահի սկզբունք,
- 3) Կյանքի, գոյատևման և ներդաշնակ զարգացման սկզբունք,

4) Լսվելու իրավունք,

5) Արժանապատվության սկզբունք (Կոնվենցիա, հոդվ. 2,3,6,12,40):

Վերոգրյալի համատեքստում, կարծում ենք՝ արժե կանգ առնել տեսական ընդհանրություններ ունեցող երկու հիմնական իրավադրույթի վրա: Դրանք են՝ երեխայի՝ դատարանի կամ այլ իրավասու, անկախ ու անկողմնակալ մարմնի առաջ իրեն ազատությունից զրկելու օրինականությունը վիճարկելու իրավունքը և լսվելու իրավունքը:

Կասկածից վեր է, որ երեխայի հետ կապված իրավահարաբերությունների հիմնական առանցքում պետք է ընկած լինի նրա՝ լսված լինելու իրավունքը, ինչը հանդիսանում է կարևոր օրենսդրական ազդակ՝ վերջինիս՝ իրավունքի լիարժեք սուբյեկտ դիտարկելու հարցում:

Միաժամանակ, գտնում ենք, որ հենց լսված լինելու իրավունքն է հանդիսանում երեխայի լավագույն շահի ապահովման կարևորագույն միջոցներից մեկը, քանի որ այս սկզբունքի իրացման միջոցով է, որ երեխան հնարավորություն է ստանում օրենսդրորեն արտահայտելու իր կամահայտնությունը, ինչը վերջինիս մասնակցությամբ մի շարք իրավական խնդիրների արդյունավետ հանգուցալուծման առումով, ունենում է իր դրական նշանակությունը:

Այն վերաբերելի է նաև ազատությունից զրկելու օրինականությունը վիճարկելու հետ կապված իրավահարաբերությանը, քանզի քիչ չեն դեպքերը, երբ ոչ պատշաճ արդարադատության հետևանքով է, որ, հաճախ, տուժող են հանդիսանում հենց երեխաները: Ուստի, նման պարագայում, նրանց լսելի լինելու իրավունքի իրացումն է, որ կարող է հանդիսանալ այլընտրանք չունեցող հանգամանք՝ անարդարության զոհ չդառնալու և արդարադատության վերականգնման տեսանկյունից:

Նման տեսակետը հիմնավորվում է նաև այն փաստով, որ երեխայի հետ կապված իրավահարաբերություններին առնչվող բազմաթիվ հարցերում երեխան է՝ որպես իրավունքի սուբյեկտ, հաճախ կարողանում, ըստ իրավիճակի, տալ ողջամիտ գնահատական՝ հանդիսանալով իր անձի շուրջ ծավալվող իրավահարաբերության անմիջական կրողը, և հենց նշված իրավունքի ապահովմամբ է հնարավոր դառնում կայացնել երեխայի համար բարենպաստ հետևանք ստեղծող որոշում՝ ապահովելով նրա լավագույն շահը:

Ասվածի վառ օրինակն է, մասնավորապես, ընտանեկան բռնությունը, երբ, իբրև դատախարակության միջոց, ծնողների կողմից գործադրված ֆիզիկական կամ հոգևոր հարկադրանքի կամ այլ սահմանափակումների արդյունքում ոտնահարվում են երեխայի սահմանադրական մի շարք իրավունքներ, ինչի կապակցությամբ դատական պրակտիկայում գործի համակողմանի քննության համար, հաճախ, անհրաժեշտություն է զգացվում հաշվի առնել նաև երեխայի կարծիքը:

Անշուշտ, քիչ չեն նաև այն դեպքերը, երբ դատավարության ընթացքում իր՝ իբրև զոհի, կարգավիճակն առավել ընդգծելու նպատակով երեխան տալիս է իրարամերժ կամ իրականության հետ աղերս չունեցող վկայություններ՝

այսկերպ գործի ընթացքը խճճելու արդյունքում փորձելով ստանալ առավելազույն իրավաբանական օգուտ, սակայն այն փաստը, որ երեխայի մասնակցությամբ ընտանեկան բռնության ցանկացած դեպքի օրյեկտիվ քննության համար օրենսդրորեն պետք է ապահովվի նրա լսված լինելու իրավունքը, կասկածից վեր է:

Երեխայի լավագույն շահն ամրագրող անկյունաքարային նորմ ենք համարում նաև պատժի փոխարեն նրան դաստիարակության միջոցով ուղղելը, որին, գտնում ենք, ներպետական մակարդակով պետք է վերաբերվել ոչ թե, սոսկ, որպես օրենսդրությամբ ամրագրված իրավունքի, այլ հիմնարար սկզբունքի՝ այն պարզ տրամաբանությամբ, որ պատժի ոչ մի տեսակ, ըստ էության, չի կարող այնքան մարդասիրական և արդյունավետ լինել, որքան երեխայի՝ բարենպաստ միջավայրում մեծանալն ու պատշաճ դաստիարակությունն ստանալը:

Կարևոր ենք համարում անդրադառնալ նաև իրավունքի համակարգում մեծ հետաքրքրություն ներկայացնող՝ տարբեր երկրների քաղաքացիություն ունեցող ծնողների բաժանվելու դեպքում երեխայի լավագույն շահի ապահովման հիմնախնդրին:

Սույն հարցը, իրավունքի տեսակետից, խնդրահարույց է այնքանով, որ այն, միաժամանակ, առնչվում է երկու (կամ ավելի) երկրի օրենսդրական համակարգին, և, եթե տեսական մակարդակով վերջինիս դրական ելքի մասին հնարավոր է պատկերացում կազմել միայն միջազգային իրավական-համեմատական վերլուծության կիրառման արդյունքում, ապա զուտ դատաիրավական պրակտիկայում, գործնականում, անհնար է դառնում նման համեմատությունը՝ հետևապես, և, երեխայի լավագույն շահի ապահովումը:

Ասվածից հետևում է, որ նման դեպքերում, հենց լսելի լինելու իրավունքի անվերապահ կիրառումն է, որ կարող է ունենալ անփոխարինելի նշանակություն՝ երեխայի լավագույն շահի ապահովման համար:

Հասկանալի է, որ մանկահասակ տարիքում երեխան չունի անհրաժեշտ գիտակցական մակարդակ՝ ստեղծված իրավիճակը, ըստ էության գնահատելու համար, սակայն սույն պարագայում, գտնում ենք՝ քննարկման առարկա պետք է դարձնել ոչ թե վերը նշվածը, այլ երեխայի հուզական կապվածությունը՝ ծնողների հետ:

Այս մոտեցման հիմքում ընկած է ոչ թե զուտ օրենսդրական իրավաչափ մոտեցման սկզբունքի կիրառման մեթոդը, այլ խնդրի բարոյական կողմը, որով պայմանավորված նորմի կիրառումը պակաս կարևոր չենք համարում ստեղծված իրավիճակը՝ ի նպաստ երեխայի հանգուցալուծելու տեսակետից:

Ասվածը պայմանավորված է նրանով, որ օրենսդրական տրամաբանված և իրավաչափ մոտեցումը ոչ միշտ է կարողանում ապահովել երեխայի լավագույն շահը, որքան էլ, որ այն շեշտը դնում է իրավահարաբերության կարգավորման համար փաստական նշանակություն ունեցող հանգամանքների վրա:

Երեխայի լավագույն շահի ապահովման հարցում կարևոր ենք համարում նաև այնպիսի գործոնի առկայությունը, ինչպիսին է նրա հոգեհուզական

ուրորտը, որը դատաիրավական պրակտիկայում երեխայի մասնակցությամբ մի շարք խնդրահարույց հարցերի շուրջ կարող է ունենալ որոշիչ նշանակություն:

Երեխայի լավագույն շահն ապահովող հիմնարար տարրերը

Դեռևս չծնված երեխային իրավունքի սուբյեկտ դիտարկելու կարևորությունը, գտնում ենք՝ նախևառաջ պետք է ընդունել տեսական մակարդակով, քանի որ նման մոտեցումը հնարավորություն կընձեռի ավելի ընդլայնել իրավունքի նշված սուբյեկտին «իրավաբանական ինքնությունությամբ օժտելու» իրավական ընկալման օբյեկտիվ հնարավորությունը:

Միաժամանակ, նշված սկզբունքի գերակայությունը հնարավոր կլինի էլ ավելի ամրապնդել երեխայի՝ լաված լինելու իրավունքի՝ անվերապահ իրացմամբ, քանզի արդարադատություն իրականացնելիս երեխան պետք է իրավունք ունենա արտահայտվելու իր կյանքի վրա ազդեցություն թողնող բոլոր որոշումների վերաբերյալ (վերջինս պետք է դիտարկել երեխայի սահմանադրաիրավական հարաբերությունների կարգավորման առանցքում՝ որպես հիմնարար սկզբունք):

Այս առումով, կողմ ենք այն տեսակետին, որ երեխայի լսելի լինելու իրավունքը պետք է կիրառվի նրանց՝ առօրյա կյանքի վրա ազդեցություն թողնող բոլոր ոլորտներում (Lücker-Bail, էջ 391–396, 1995):

Ճիշտ է, միջազգային իրավական համակարգն առանձնացնում է նշված երկու դրույթները՝ ներկայացնելով որպես առանձին իրավական կատեգորիաներ, սակայն, համոզված ենք, որ դրանց փոխկապվածությունն առավել քան ակնհայտ է, և որ հենց լաված լինելու իրավունքն է հանդիսանում այն ելակետային սկզբունքներից մեկը, որը, երեխայի լավագույն շահի ապահովման հարցում օգնում է հասնել ցանկալի արդյունքի, իսկ կծառայի նման մոտեցումը իր նպատակին, թե ոչ, կարծում ենք՝ այն, ամենից առաջ, կախված է մեր իրավընկալման մակարդակից և հետո, միայն, դրա նպատակային կիրառումից:

Իրավընկալման գործոնին է առնչվում նաև պատիժը երեխայի դատաիրակությամբ փոխարինելու՝ միջազգային հանրության կողմից վաղուց անկյունաքարային դարձած նորմը՝ քրեաիրավական համակարգի իրավակիրառ պրակտիկայում որպես սկզբունք դիտարկելը:

Հասկանալի է, որ պատիժը հետապնդում է նաև դատաիրակչական նպատակ, սակայն համոզված ենք, որ նման մոտեցմամբ և երեխայի լաված լինելու իրավունքի իրացմամբ է, առավելապես, հնարավոր ապահովել նրա լավագույն շահը:

Երեխայի լսելի լինելու իրավունքը կարող է հանդիսանալ այն կարևորագույն «իրավական» կամուրջը, որը հնարավորություն կտա պատիժը երեխայի դատաիրակությամբ փոխարինելու պրակտիկան նորմ-իրավունքի իրավական հարթակից «տեղափոխել» նորմ-սկզբունք իրավական հարթություն, որում, անշուշտ, պետք է իր դերակատարումն ունենա նաև պետության որդեգրած իրավական քաղաքականության հեռանկարը:

Եզրակացություն

Այսպիսով, վերլուծելով վերը նշված միջպետական նշանակություն ունեցող փաստաթղթերն ու որոշ միջազգային կառույցների դիրքորոշումները՝ երեխայի իրավունքների պաշտպանության վերաբերյալ՝ ականատես ենք լինում, որ թվարկված բոլոր փաստաթղթերի շրջանակներում միջազգային մակարդակով փորձ է արվել այս կամ այն կերպ ամրագրել երեխայի լավագույն շահից բխող՝ հիմնարար իրավակարգավորման շրջանակները՝ մի շարք դեպքերում այն նորմ-իրավունքից վերածելով նորմ-սկզբունքի:

Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաև այն, որ ներպետական օրենսդրության մեջ բացակայում է երեխայի լավագույն շահի վերաբերյալ միասնական մոտեցումն ու հստակ ձևակերպումը՝ առաջարկում ենք երեխայի լավագույն շահը սահմանել հետևյալ կերպ՝ «Երեխայի լավագույն շահը օրենսդրորեն ամրագրված իրավունք է, որը յուրաքանչյուր կոնկրետ դեպքով և իրավիճակով պայմանավորված՝ որոշում է երեխայի առավելագույն իրավաբանական օգուտը»:

Միաժամանակ, համակարծիք ենք այն մտքի հետ, որ երեխայի լավագույն շահը չի կարող վեր դասվել պետական շահից, ինչպես նաև այն չի կարող պետության կողմից դիտարկվել որպես հարմարակեցություն, քանի որ նման մոտեցումը կարող է երեխայի իրավունքների իրացման մեխանիզմը, գործնականում, վերածել իրավական կամայականության կամ, վերջինիս կողմից, իր իրավունքների չարաշահման:

Օգտագործված գրականության ցանկ

- «Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա: Ընդունվել է 04.11.1950թ.:ՀՀՊՏ 2002.06.05/17(192) Հոդ.367:
- «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա: Ընդունվել է 20.11.1989թ.:ՄՊՀՀՏ 2008/Հատուկ թողարկում:
- Астахов, П.А. (2010). *Права ребенка*. М.: Эксмо.
- Рудгрэйв, Т. (2000). Новозеландская революция в ювенальной юстиции // «Правосудие по делам несовершеннолетних. Мировая мозаика и перспективы в России». Выпуск 2, кн. 1. М.
- Lücker-Bail, F. (1995). The right of the child to express views and to be heard: An attempt to interpret Article 12 of the UN Convention on the Rights of the Child. *The International Journal of Children's Rights*. 3, էջ 391-404:
- Malekian, F., Nordlöf, K. (2012). *Confessing the International Rights of Children: The Basic Documents with Analysis*. Cambridge Scholars Publishing, UK.
- Dabney, B., Eldridge, M. (2013). *Series: Children's Issues, Laws and Programs Series*. Hauppauge, New York: Nova Science Publishers, Inc.

Алик Азатян

*Старший инструктор отдела организации службы департамента организации
службы Спасательной службы Министерства внутренних дел Республики Армения,
соискатель кафедры юриспруденции Европейского университета в Армении
Эл. адрес: alik.azatyan.1987@mail.ru*

ОБЕСПЕЧЕНИЕ НАИЛУЧШИХ ИНТЕРЕСОВ РЕБЕНКА В СИСТЕМЕ КОНВЕНЦИОННЫХ МЕХАНИЗМОВ

Защита и обеспечение прав и законных интересов ребенка являются одним из важнейших государственно-правовых вопросов.

Защита их прав всегда находилась и находится в центре внимания международного сообщества.

Дети во все времена и в обществе всегда были самой незащищенной и уязвимой группой общества, от того, насколько защищены права ребенка, зависит и будущее нашего общества.

Защита прав и законных интересов ребенка предполагает такую гибкую систему правовых механизмов, которая будет способна регулировать сферу правовых отношений, обусловленных особенностями ребенка в разных возрастных группах.

Вышеизложенное означает, что проблему, в первую очередь, следует рассматривать в аспекте психофизиологических особенностей ребенка и обусловленных ими отношений, где, безусловно, предпочтение должно отдаваться законодательным решениям, исходящим из наилучших интересов ребенка.

Ключевые слова: конвенция, декларация, пакт, протокол, право быть услышанным, наилучшие интересы ребенка.

Alik Azatyan

*Senior instructor of service organization Division of service
organization Department of Rescue Service of the Ministry of
Internal Affairs of the Republic of Armenia,
Ph.D. student of the Department of Jurisprudence
of the European University in Armenia
Email: alik.azatyan.1987@mail.ru*

ENSURING THE BEST INTERESTS OF THE CHILD IN THE SYSTEM OF CONVENTION MECHANISMS

Protecting and ensuring the rights and legitimate interests of a child is one of the most important State legal issues.

The protection of their rights has always been and remains the focus of the international community's attention.

At all times and in society, children have always been the most vulnerable and vulnerable class of society, and the future of our society depends on how well children's rights are protected.

The protection of the rights and legitimate interests of the child presupposes such a flexible system of legal mechanisms that will be able to regulate the sphere of legal relations determined by the characteristics of the child in different age groups.

The above means that the problem, first of all, should be considered in the aspect of the psychophysiological characteristics of the child and the relationships caused by them, where, of course, preference should be given to legislative solutions based on the best interests of the child.

Key words: convention, declaration, covenant, protocol, the right to be heard, the best interests of the child.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2025թ. ապրիլի 10-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2025թ. ապրիլի 17-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2025թ. հունիսի 11-ին:

Միլենա Ղազարյան
*Հայաստանում Եվրոպական
համալսարանի հայցորդ
a.khachatryan@inbox.ru*

DOI: 10.53614/18294952-2025.1-29

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Սույն հոդվածը անդրադառնում է սահմանադրական իրավունքի տեսության կարեւորագույն հիմնախնդիրներից մեկի՝ պետության տարածքային ամբողջականության ապահովման հիմնախնդիրների հետազոտությանը միջազգային իրավական առանձին չափորոշիչների շրջանակում:

Հոդվածում բացահայտվում է ժամանակակից իրավագիտության մեջ միջազգային իրավական ակտերում պետությունների և միջազգային իրավունքի այլ սուբյեկտների գործունեության ոլորտում տարածքային ամբողջականության սկզբունքի էությունն ու դրսևորման առանձնահատկությունները: Թեմայի ուսումնասիրության նպատակն է՝ հիմք ընդունելով կատարված հետազոտություն առանձնահատկությունները եւ ստացված արդյունքները, տարածքային ամբողջականության ապահովման վերաբերյալ իրավագետների տեսական-իրավական հայացքների ու ուսմունքների շրջանակում անհրաժեշտություն է առաջանում հետազոտել պետության տարածքային ամբողջականության ապահովման հիմնահարցերը միջազգային իրավական առանձին չափորոշիչների համատեքստում՝ նպատակ ունենալով ուսումնասիրելու սահմանադրական տվյալ սկզբունքի ձևավորման, զարգացման, իրականացման, ապահովման միջազգային իրավական նախադրյալները, կանխորոշելու դրանց հնարավոր հետևանքներն ու արդյունքները:

Առանձնակի ուշադրության են արժանացնել հատկապես

Ժողովուրդների իրավահավասարության ու ինքնորոշման իրավունքի և իր տարածքի նկատմամբ պետության ինքնիշխան իրավունքի միջև ենթադրյալ հակասությանն առնչվող հիմնախնդիրները: Ընդ որում, ուսումնասիրության արդյունքները հնարավորություն կընձեռնեն առավել մանրամասն պատկերացում կազմել միջազգային իրավակարգի ներկայիս պայմաններում պետության տարածքային ամբողջականության և ժողովուրդների ու ազգերի իրավահավասարության և ժողովրդի ինքնորոշման իրավունքի հարաբերակցության և իրավունքի գերակայության տրամաբանության շրջանակում հատկապես երկրորդին առաջնայնության վերապահման մասին:

Հիմնաբառեր. պետության տարածքային ամբողջականություն, սահմանադրական սկզբունք, միջազգային իրավական չափորոշիչ, պետության ինքնիշխան իրավունքը, ժողովուրդների ինքնորոշման իրավունքի և տարածքային ամբողջականության հարաբերակցություն:

Ներածություն.

Իրավական համակարգի արդիականացման պայմաններում տարածքային ամբողջականության սկզբունքն իր ամրագրումն է ստացել ոչ միայն պետությունների ազգային օրենսդրությամբ, այլև միջազգային իրավական աղբյուրներում, ինչը վկայում է ժամանակակից պետությունների գործունեության համար այդ սկզբունքի կարևորության և դրա անշեղորեն ապահովման անհրաժեշտության մասին: Այս առումով անհրաժեշտ է ընդգծել, որ պետության միասնության և տարածքային ամբողջականության ապահովման հետ կապված նման գործունեության իրականացումը մշտապես գործուն ազդեցություն է ունենում նույն պետության շահերի պաշտպանության երաշխավորման վրա: Այդ իմաստով արդարացի են հայ առանձին իրավագետների այն պնդումները, որ և՛ քաղաքական համակարգում, և՛ միջպետական հարաբերություններում՝ պետության տարածքային ամբողջականությունն առավելապես ընկալվում է որպես պետական ինքնիշխանության իրավական երաշխիք և, միաժամանակ՝ պետական իշխանության միասնականության ապահովման պայման (Այվազյան Ն., Այվազյան Ա., 2004. էջ 5-6, 4-6, Խաչատրյան Ա.Ա., 2016, էջ 83):

Հետևաբար՝ անհրաժեշտություն է առաջանում հետազոտել պետության տարածքային ամբողջականության ապահովման հիմնահարցերը միջազգային իրավական առանձին չափորոշիչների համատեքստում՝ նպատակ ունենալով ուսումնասիրելու սահմանադրական տվյալ սկզբունքի ձևավորման, զարգացման, իրականացման, ապահովման միջազգային իրավական նախադրյալները, կանխորոշելու դրանց հնարավոր հետևանքներն ու արդյունքները:

Մեթոդ.

Սույն ուսումնասիրության մեթոդական հիմքը ձևավորվում է ֆորմալ տրամաբանական եւ ֆորմալ իրավական մեթոդներով, համակարգային կա-

ռուցվածքային, տեխնիկական, համեմատական եւ իրավական վերլուծության մեթոդներով, որոնք օգտագործվել են ուսումնասիրության, համակարգման, հասկացությունների եւ իրավական բովանդակությունների բացահայտման ընթացքում:

Տարածքային ամբողջականության սկզբունքը միջազգային իրավական կարգավորումների համատեքստում

Տարածքային ամբողջականության որպես պետության ինքնիշխանության անբաժանելի մասի ապահովումն իրականացվում է ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային իրավական մակարդակներում քաղաքական, իրավական, կազմակերպչական, ազգային, դիվանագիտական, ռազմական, հատուկ և համալիր այլ միջոցների միջոցով:

Այդ առումով պետությունների և միջազգային իրավունքի այլ սուբյեկտների գործունեության ոլորտում տարածքային ամբողջականության սկզբունքին կարևորություն է տրվել միջազգային իրավական ակտերում (The Oxford Handbook on the United Nations, 2008, էջ 83): Հատկապես, անհրաժեշտ է նշել, որ այդ սկզբունքը ձևական առումով իր համընդհանուր նշանակությունն ունեցավ, երբ իր ամրագրումը ստացավ ՄԱԿ-ի 1945 թվականի կանոնադրությունում, այնուհետև՝ ՄԱԿ-ի 1970 թվականի Միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրում, հետագայում նաև՝ Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդաժողովի 1975 թվականի եզրափակիչ ակտում և միջազգային իրավական այլ փաստաթղթերում:

Մասնավորապես, Միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրում հիշատակվում է պետությունների այն պարտականությունների մասին, որ միջազգային հարաբերություններում պետք է ձեռնպահ մնալ ռազմական, քաղաքական, տնտեսական և այլ ձևով ճնշումներից կամ ներգործությունից, որոնք ուղղված կլինեն ցանկացած պետության տարածքային ամբողջականության դեմ: Չնայած այն հանգամանքին, որ ՄԱԿ-ի հիշատակված իրավական ակտերում տարածքային ամբողջականությունը չի առանձնացվել որպես ինքնուրույն սկզբունք, այդուհանդերձ բովանդակային նշանակությամբ այն հանդիսանում է միջազգային հանրաժանաչ սկզբունք և *ius cogens* նորմ, որը այլ սկզբունքների հետ էական նշանակություն ունի աշխարհակարգի ձևավորման համար (Cassese, 1987, էջ 184): Այդ հանգամանքն է ընդգծում նաև Մայքլ Վուդը՝ նշվելով, որ միջազգային իրավակարգի համար անհրաժեշտ է, որպեսզի «տարածքային ամբողջականության սկզբունքը» համարվի կարևոր, ինչպես դա նախատեսված է Միավորված Ազգերի Կազմակերպության Կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ կետում (ուժի գործադրման արգելք) և այլ կարևոր փաստաթղթերում (Sir Michael Wood):

Այս սկզբունքն իր հետագա զարգացումն ունեցավ միջազգային իրավական այլ ակտերում, որոնցում հավաստվեց, որ միջազգային իրավունքը առավելապես հակված է տարածքային ամբողջականության երաշխավորմանը և այդ սկզբունքի նկատմամբ ոտնձգությունը չպետք է խրախուսվի: «Տարած-

քային ամբողջականության սկզբունքի» այս աստիճանական զարգացումը հնարավորություն տվեց աշխարհի երկրներին իրենց տարածքային վեճերը լուծել նպատակահարմար կերպով և օրինական ճանապարհով՝ միջազգային իրավունքի անընդհատ զարգացող սկզբունքներին և նորմերին համապատասխան (Rahman, Sultan, & Zaman, 2023, էջ 948):

Հայ իրավագիտության պրակտիկայում այս սկզբունքի իրավական բովանդակության ու նշանակության մասին դեռևս ամբողջական խոսք չի կարող լինել, քանի որ կիրառական նշանակություն են ձեռք բերել ինչպես «տարածքային ամբողջականություն» եզրույթը, այնպես էլ՝ «տարածքային անձեռնմխելիությունը»:

Միջազգային իրավունքի դոկտրինում տարածքային ամբողջականության սկզբունքի իրավական էությունն ու բովանդակությունը նույնպես չեն բացահայտվել (Осройхов, 2013, էջ 244–245): Եվ առանձին դեպքերում այդ սկզբունքի տարաբնույթ մեկնաբանությունը և միջազգային իրավունքի հանրաձայն ալլ սկզբունքների, մասնավորապես, պետական սահմանի անխախտելիության, ժողովուրդների ու ազգերի իրավահավասարության և ինքնորոշման իրավունքի հետ հարաբերակցության ոչ հստակ սահմանումը ինքնին հանգեցնում է բովանդակային առումով տարաբնույթ ընկալմանն ու իրադարձությունների տարբեր գնահատմանը: Այս առումով համակարծիք են հեղինակների այն պնդման հետ, որ՝ «ավելի ճիշտ է խոսել «պետության տարածքային ամբողջականության պահպանման կամ հարգման»՝ որպես միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքի մասին, որը սերտորեն կապված է միջազգային իրավունքի այլ սկզբունքների հետ» (Осройхов, 2013, էջ 244):

Բացի այդ, հաճախ հենց տարածքային վեճերն են հանգեցնում պետության տարածքային ամբողջականության խախտման: Խաղաղ միջոցների կիրառումը հաճախ ուղղված է նման վեճերի արդարացի լուծմանը, նույնիսկ այս գործընթացի դրական արդյունքի դեպքում վիճող պետությունների նախկին տարածքային սահմանները կարող են փոխվել՝ բացառապես փոխադարձ համաձայնության հիման վրա՝ կապված իրենց տարածքների փոփոխությունների և պետական համատեղ սահմանի փոփոխությունների հետ (Maill, 1992, էջ 54):

Անհրաժեշտ է նկատել, որ պետության տարածքային ամբողջականության սկզբունքի խախտումը կարող է իրականացվել առանց պետության դեմ զինված ուժի կիրառման, դրա փոխարեն ուղղակի կամ անուղղակի ներգործություն ունենալ այլ պետության ներքին կյանքի վրա կամ նպաստել պետություններում տեղի ունեցող բացասական գործընթացներին: Եվ պատահական չէ, որ պետությունները բացահայտ կամ ոչ բացահայտ ձևերով աջակցում կամ խրախուսում են մեկ այլ պետության տարածքում ներպետական հակասությունների խորացմանը, որն ինքնին հանգեցնում է տվյալ պետության տարածքի մասնատմանը:

Ժողովուրդների ու ազգերի իրավահավասարության և ինքնորոշման իրավունքի և տարածքային ամբողջականության սկզբունքի հարաբերակցության հիմնահարցը

Միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրում առանցքային նշանակություն է տրվել ժողովուրդների ու ազգերի իրավահավասարության և ինքնորոշման իրավունքի և տարածքային ամբողջականության սկզբունքի հարաբերակցության հիմնախնդրին: Այն բարդ է և բազմաբևեռ, հանդիսանում է ժամանակակից իրավունքի հակասություններից մեկն է, որն առաջ է գալիս համամարդկային ինտեգրման ձգտումների և որպես ազգային անջատ միավորում գործելու, ինչպես նաև մարդու իրավունքների հարգանքի և ինքնիշխանության (պետական կամ ազգային) անձեռնմխելիության միջև (Чолахян, Чолахян, 2022, էջ 371):

Հարցի բովանդակային ուսումնասիրման համար անհրաժեշտ է հաշվի առնել, որ ժողովուրդների ու ազգերի իրավահավասարության և ինքնորոշման իրավունքը (միաժամանակ նաև՝ սկզբունք) համընդհանուր իրավական ճանաչում է գտել ՄԱԿ-ի կանոնադրության մակարդակում և դրանով ազդարարվել է, որ բոլոր ժողովուրդներն իրավունք ունեն ազատորեն որոշել իրենց քաղաքական կարգավիճակը՝ առանց արտաքին միջամտության և իրականացնել իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը, իսկ յուրաքանչյուր պետություն պարտավոր է հարգել այդ իրավունքը՝ ՄԱԿ-ի կանոնադրության դրույթներին համապատասխան (հոդվ. 49, 51): Միաժամանակ, ՄԱԿ-ի կանոնադրության դրույթների (հոդվ. 49, 51) տրամաբանությունից հետևում է, որ մյուս պետությունները պարտավոր են համատեղ և ինքնուրույն գործողությունների միջոցով նպաստել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, ներառյալ ժողովուրդների իրավահավասարության ու ինքնորոշման իրավունքի համընդհանուր հարգմանը և պահպանմանը: Նշված մոտեցումն իր արտացոլում է ստացել նաև ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1960 թվականի դեկտեմբերի 14-ի 1514 (XV) բանաձևով ընդունված «Գաղութային երկրներին և ժողովուրդներին անկախություն շնորհելու մասին» հռչակագրում: Ըստ Հռչակագրի 4րդ կետի «Կախյալ ժողովուրդների դեմ ուղղված բոլոր ռազմական գործողությունները կամ բռնաձնշողական բնույթի միջոցառումները պետք է դադարեցվեն, որպեսզի նրանք կարողանան խաղաղության և ազատության մեջ իրականացնել իրենց լիակատար անկախության իրավունքը, իսկ նրանց ազգային տարածքների ամբողջականությունը պետք է հարգվի»:

Բացի այդ, յուրաքանչյուր պետություն պարտավոր է զերծ մնալ բռնության ցանկացած այնպիսի գործողությունից, որը կզրկի նշված ժողովուրդներին՝ իրենց ինքնորոշման, ազատության և անկախության իրավունքների արդյունավետ իրականացնելուց:

Առաջին հայացքից ենթադրվում է, որ խոսք կարող է լինել ժողովուրդների իրավահավասարության ու ինքնորոշման իրավունքի և իր տարածքի նկատմամբ պետության ինքնիշխան իրավունքի միջև ենթադրյալ հակա-

սության մասին: Այնուամենայնիվ, ՄԱԿ-ի կանոնադրության և Միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրի տրամաբանության շրջանակում,

մի կողմից, ժողովուրդների ու ազգերի իրավահավասարության և ժողովրդի ինքնորոշման սկզբունքը չպետք է մեկնաբանվի որպես թույլտվություն կամ խրախուսող որևէ գործողություն, որը կհանգեցնի պետության տարածքի մասնատման կամ տարածքային ամբողջականության խախտման,

մյուս կողմից, պետության տարածքային ամբողջականության հետ կապված պետական սահմանների ոչ իրավաչափ փոփոխությունների արգելքի սկզբունքը չպետք է ընկալվի կամ մեկնաբանվի որպես ժողովուրդների ու ազգերի իրավահավասարության և ժողովրդի ինքնորոշման իրավունքի սահմանափակում:

Սակայն հարկ է նկատել, որ միջազգային բազմաբևեռության բացակայության պարագայում միջազգային իրավակարգը մի դեպքում զարգանում է առավելապես պետությունների տարածքային ամբողջականության ապահովման ուղղությամբ, երբ խրախուսվում է տարածքային ամբողջականության սպառնալիքներից պետությունների կենսական շահերի պաշտպանությունը, իսկ մեկ այլ դեպքում, պետության տարածքային ամբողջականության և ժողովուրդների ու ազգերի իրավահավասարության և ժողովրդի ինքնորոշման իրավունքի հարաբերակցության և իրավունքի գերակայության տրամաբանության շրջանակում առաջնությունը տրվում և պետք է տրվի երկրորդին՝ որպես մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների բաղադրիչ տարր:

Եզրակացություն.

Այսպիսով, ընդհանրացնելով, անհրաժեշտ է նկատել, որ նման երկակի մոտեցումները, թերևս, ոչ դրական ելքեր են կանխորոշում, այդուհանդերձ, հատկապես ժամանակակից իրողությունների պայմաններում, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության երաշխավորման և արցախահայության ինքնորոշման իրավունքի արդյունավետ իրականացման համատեքստում անհրաժեշտ է կատարել հետևյալ եզրահանգումները՝

1) **միջազգային անվտանգության երաշխավորման հիմքում պետությունների տարածքային ամբողջականության ապահովումը բխում է պետության և ազգային անվտանգության կենսական շահերի պաշտպանության անհրաժեշտությունից,**

2) **հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրավական ու ժամանակակից սահմանադրություն ունեցող պետությունների կենսական շահերը բովանդակող քաղաքացիների ու ժողովրդի՝ որպես քաղաքացիների հավաքական հանրույթի իրավունքներն ու ազատությունները գերակա են, ուստի պետության կենսական շահերի պաշտպանությանը պետք է բխի ինչպես մարդու և քաղաքացու իրավունքների ու հիմնարար ազատությունների, այնպես էլ՝ ժողովրդի ինքնորոշման իրավունքի արդյու-**

նավետ պաշտպանության բովանդակությունից,

3) պետության տարածքային ամբողջականության հարգումն ու պահպանումը իրավաչափ է ու արդարացված, եթե միջազգային իրավունքի նորմերի շրջանակում և դրանց հիման վրա հիմնավորվել է, որ տվյալ պետությանը չի ամրակցվել այլ պետության պատմական տարածք կամ տարածքի մաս՝ վերջինիս նկատմամբ ոչ իրավաչափ (այդ թվում՝ ոտնձգության) գործողության արդյունքում:

Օգտագործված գրականության ցանկ

- Այվազյան, Ն., Այվազյան, Ա. (2004): Պետության տարածքային կառուցվածքի և սահմանադրական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում // *Օրենք և իրականություն*։ Եր., հ.հ. 3,4,5,6:
- Խաչատրյան, Ա.Ա. (2016): *Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության հիմնախնդիրները, սահմանադրական ժամանակակից կարգավորումների համադրություն և դրանց լուծումները միջազգային իրավական ու սահմանադրական արդարադատության պրակտիկայում*: Եր.:
- Остроухов, Н.В. (2013). Территориальная целостность государства и ее обеспечение: теоретико-правовые и международно-правовые измерения // *Вестник РУДН, серия Юридические наук*. № 3, էջ 244–254:
- Чолахян, А. В., Чолахян В. А. (2022). Историко-правовые основы принципов территориальной целостности государств и права народов на самоопределение на современном этапе. *Известия Саратовского университета. Новая серия. Серия: История. Международные отношения*. Т. 22, вып. 3. էջ 370–377:
- Cassese, A. (1987). *International Law in Divided World*. – New York: Oxford University Press.
- Daws, Sam, and Thomas G. Weiss (eds). *The Oxford Handbook on the United Nations*(2008;online edn,Oxford Academic, 2 Sept. 2009),
Declaration on the Granting of Independence to Colonial Countries and Peoples. 14 December 1960, General Assembly resolution 1514 (XV) <https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/declaration-granting-independence-colonial-countries-and-peoples>
- The Oxford Handbook on the United Nations / Ed. by Thomas G. Weiss and Sam Daws. – Oxford University Press, 2008. <https://doi.org/10.1093/oxfordhb/9780199560103.001.0001>
- Maill, H. (1992). *The Peacemakers: Peaceful Settlement of Disputes since 1945*. New York: St. Martin's Press.
- Sami Ur Rahman, Muhammad Shahid Sultan, Nasir Zaman (2023). Critical Overview of Principle of Territorial Integrity Under International Law. *Pakistan Journal of Social Research*, Vol. 5, No. 2, June 2023, pp. 943-954.
- Sir Michael Wood, Territorial Integrity. In *Encyclopedia Princetoniensis*.

ОБЕСПЕЧЕНИЕ ТЕРРИТОРИАЛЬНОЙ ЦЕЛОСТНОСТИ ГОСУДАРСТВА В РАМКАХ МЕЖДУНАРОДНО-ПРАВОВЫХ СТАНДАРТОВ

В данной статье рассматривается один из важнейших вопросов теории конституционного права — исследование вопросов обеспечения территориальной целостности государства в рамках отдельных международно-правовых стандартов.

В статье раскрываются сущность и особенности проявления принципа территориальной целостности в международно-правовых актах в современной юриспруденции в сфере деятельности государств и иных субъектов международного права. Целью изучения темы является принятие за основу особенностей проведенных исследований и полученных результатов, в рамках теоретико-правовых воззрений и учений юристов по обеспечению территориальной целостности, необходимость исследования вопросов обеспечения территориальной целостности государства в контексте отдельных международно-правовых стандартов, с целью изучения международно-правовых предпосылок формирования, развития, реализации и обеспечения данного конституционного принципа, а также прогнозирования их возможных последствий и результатов.

Особое внимание следует уделить вопросам, связанным с предполагаемым противоречием между равенством народов и правом на самоопределение и суверенным правом государства на своей территории. Кроме того, результаты исследования дадут возможность сформировать более детальное представление о соотношении территориальной целостности государства с равенством народов и наций и правом на самоопределение народа в современных условиях международного правопорядка, а также приоритете последнего, в частности, в логике верховенства права.

Ключевые слова: территориальная целостность государства, конституционный принцип, международно-правовой стандарт, суверенное право государства, соотношение права на самоопределение народов и территориальной целостности.

Milena Ghazaryan*Ph.D. student at the European University in Armenia**Email: a.khachatryan@inbox.ru*

ENSURING THE TERRITORIAL INTEGRITY OF THE STATE WITHIN THE FRAMEWORK OF INTERNATIONAL LEGAL STANDARDS

This article examines one of the most important issues in the theory of constitutional law — the study of issues of ensuring the territorial integrity of the state within the framework of individual international legal standards.

The article reveals the essence and features of the manifestation of the principle of territorial integrity in international legal acts in modern jurisprudence in the sphere of activities of states and other subjects of international law. The purpose of studying the topic is to take as a basis the features of the conducted research and the results obtained, within the framework of theoretical and legal views and teachings of lawyers on ensuring territorial integrity, the need to study issues of ensuring the territorial integrity of the state in the context of individual international legal standards, in order to study the international legal prerequisites for the formation, development, implementation and provision of this constitutional principle, as well as predicting their possible consequences and results.

Particular attention should be paid to issues related to the alleged contradiction between the equality of peoples and the right to self-determination and the sovereign right of the state on its territory. In addition, the results of the study will provide an opportunity to form a more detailed understanding of the relationship between the territorial integrity of the state and the equality of peoples and nations and the right to self-determination of the people in the modern conditions of the international legal order, as well as the priority of the latter, in particular, in the logic of the rule of law.

Key words: territorial integrity of the state, constitutional principle, international legal standard, sovereign right of the state, relationship between the right to self-determination of peoples and territorial integrity.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2025թ. ապրիլի 30-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2025թ. մայիսի 7-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2025թ. հունիսի 11-ին:

Բորյա Չիլինգարյան
ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի անդրազգային, ինչպես նաև կոռուպցիոն
այլ բնույթի հանցագործությունների քննության վարչության պետի
պարտականությունները կատարող, Եվրասիա Միջազգային
համալսարանի իրավագիտության ամբիոնի հայցորդ
Էլ. հասցե՝ boryachilingaryan@gmail.com

DOI: 10.53614/18294952-2025.1-38

ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԸ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾՆԵՐԻ ՀԱՄԱՎԱՐԳՈՒՄ. ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հոդվածում ուսումնասիրվում է անմեղության կանխավարկածի տեղն ու նշանակությունը իրավական կանխավարկածների համակարգում՝ կենտրոնանալով դրա էության և բովանդակության վրա: Հետազոտության հիմնական խնդիրը անմեղության կանխավարկածի բովանդակային բազմաշերտության պարզաբանումն է, քանի որ այն հաճախ ընկալվում է միանշանակ՝ ունենալով խորը իրավական, սոցիալական և բարոյական նշանակություն: Աշխատանքի նպատակն է վերլուծել անմեղության կանխավարկածը՝ որպես միջնորդային իրավական սկզբունք, պարզաբանել դրա դատավարական և նյութաիրավական առանձնահատկությունները, ինչպես նաև ցույց տալ այս սկզբունքի կարևորությունը արդարադատության համակարգում: Հոդվածի նորույթը կայանում է անմեղության կանխավարկածի՝ ոչ միայն դատավարական, այլև նյութաիրավական բնույթի բացահայտման և դրա՝ որպես իրավական ու հումանիստական արժեքի ներկայացման մեջ, ինչը հաճախ դուրս է մնում այլ հետազոտությունների շրջանակներից: Հոդվածի գործնական նշանակությունը դրսևորվում է այն հանգամանքում, որ անմեղության կանխավարկածի բովանդակության և կիրառման առանձնահատկությունների հստակե-

ցումը թույլ կտա բարձրացնել արդարադատության արդյունավետությունը, կանխել իշխանության չարաշահումները, ինչպես նաև երաշխավորել մարդու իրավունքների պատշաճ պաշտպանությունը: Սա հնարավորություն է տալիս թե՛ իրավաբանական պրակտիկայում, թե՛ օրենսդրության զարգացման գործընթացներում ավելի հստակ հասկանալ անմեղության կանխավարկածի կիրառության սահմաններն ու բնույթը:

Հիմնաբառեր. իրավական կանխավարկած, անմեղության կանխավարկած, դատավարական սկզբունք, նյութաիրավական սկզբունք, իրավական պետություն, արդարադատության արդյունավետություն, միջձյուղային սկզբունք, մարդու իրավունքների պաշտպանություն:

Ներածություն

Անմեղության կանխավարկածը ժամանակակից իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկն է: Այս սկզբունքի էությունն ամենապարզ ձևով մեկնաբանելի է հետևյալ կերպ. յուրաքանչյուր մեղադրյալ պետք է համարվի անմեղ մինչ այն պահը, քանի դեռ նրա մեղավորությունը չի ապացուցվել օրինական կարգով և չի հաստատվել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Այս դրույթը հստակ ամրագրում է ստացել ժամանակակից պետությունների ազգային օրենսդրությունների մեջ, մասնավորապես՝ սահմանադրություններում և քրեական դատավարության օրենսգրքերում: Ազգային օրենսդրություններից զատ այն ամրագրվել է նաև միջազգային փաստաթղթերում. 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (հոդված 11¹), 1966թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (հոդված 142) և տարածաշրջանային կոնվենցիաներ (Zhiyuan, 2023, էջ 5–6):

Գտնում ենք, որ այս սկզբունքի համընդհանուր իրավական ամրագրումն արդեն իսկ վկայում է այն մասին, որ անմեղության կանխավարկածը միջազգային հանրության կողմից ճանաչված է որպես հիմնարար իրավական ստանդարտ, իսկ դրա իրացումը՝ մարդու անօտարելի իրավունք: Սահմանադրաիրավական հարթությունում այն ենթադրում է, որ պետությունն ունի պարտավորություն՝ հարգելու և ապահովելու այս սկզբունքի իրացումը՝ որպես արդարադատության հիմք, և անհատի՝ անհիմն քրեական հետապնդումից պաշտպանության կարևորագույն երաշխիք: Միևնույն ժամանակ, չնայած սույն սկզբունքի մեկնաբանության տեսանկյունի պարզությանը, անմեղության կանխավարկածը բովանդակային առումով բարդ և բազմաշերտ է:

Իրավական կանխավարկածների համակարգում անմեղության կանխավարկածը զբաղեցնում է հատուկ տեղ՝ որպես իրավունքի բազմաթիվ ճյուղերում դրսևորվող և արդարադատության կենսագործումը երաշխավորող սկզբունք: Ներկայացված թեզիսն ընդգծում է անմեղության կանխավարկածի սկզբունքի բազմաշերտ էությունը: Մեր կարծիքով, պետք է բացառել սկզբունքի դիտարկումը որպես բացառապես քրեական դատավարությանը բնորոշ տեխնիկա-իրավական գործիք, այլ ընդունել այն որպես համապար-

փակ սահմանադրաիրավական արժեք: Իրավական կանխավարկածների շարքում վերջինիս առանձնահատուկ դիրքը պայմանավորված է նրանով, որ այն միաժամանակ ուղղված է արդարադատության ու արդարության ապահովմանը և արտահայտվում է իրավունքի տարբեր ձյուղերում՝ համախմբելով դրանք հիմնարար սկզբունքների մակարդակում:

Մեթոդ

Սույն հոդվածի կատարման ընթացքում օգտագործվել են մի շարք մեթոդներ, այդ թվում՝ տեսաիրավական վերլուծության, համեմատության, պատմաիրավական, համակարգային, վերլուծական, աքսիոլոգիական և դասակարգման մեթոդները:

Տեսական-իրավական վերլուծության մեթոդն օգտագործվել է իրավական կանխավարկածների, մասնավորապես՝ անմեղության կանխավարկածի հասկացության և էության ուսումնասիրման համար: Կատարվել է հասկացությանը ապարատի, անմեղության կանխավարկածի իրավական բնույթի և հատկանիշների վերլուծություն, ինչը թույլ է տվել բացահայտել այն որպես բազմաշերտ իրավական երևույթ:

Համակարգային մոտեցումը թույլ է տվել ներկայացնել անմեղության կանխավարկածն իբրև իրավական կանխավարկածների համակարգի բաղադրիչ և բացահայտել դրա դերը իրավական սկզբունքների ընդհանուր կառուցվածքում, ինչպես նաև փոխկապակցվածությունը այլ նորմերի և իրավական ինստիտուտների հետ:

Վերլուծական մեթոդը կիրառվել է անմեղության կանխավարկածին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի և իրավակիրառ պրակտիկայի վերլուծության ժամանակ: Դա հնարավորություն է տվել բացահայտել դրա իրականացման պրակտիկ խնդիրները և ձևակերպել գործնական նշանակության վերաբերյալ եզրահանգումներ:

Աքսիոլոգիական (արժեքաբանական) մեթոդն օգտագործվել է անմեղության կանխավարկածը ոչ միայն որպես զուտ իրավական կատեգորիա, այլև հումանիստական և բարոյական արժեք դիտարկելու ժամանակ: Սա թույլ է տվել բացահայտել դրա նշանակությունը մարդու իրավունքների պաշտպանության և արդարադատության արդարացի իրականացման տեսանկյունից:

Դասակարգման մեթոդը կիրառվել է իրավական կանխավարկածների տեսակները դիտարկելիս և համակարգելիս, ինչը թույլ է տվել տարբեր հիմքերով (նյութաիրավական և դատավարական, ձյուղային, միջձյուղային և համաիրավական) որոշել անմեղության կանխավարկածի տեղը մյուս իրավական կանխավարկածների շարքում:

Այսպիսով, ներկայացված հետազոտությունը հիմնված է վերոնշյալ մեթոդների համալիր կիրառության վրա, ինչը հնարավորություն է տվել համակողմանի ուսումնասիրել և բացահայտել անմեղության կանխավարկածի էությունը, իրավաբանական բովանդակությունը, գործառնությունն ու նշանակությունը իրավական համակարգում:

Արդյունքներ

Անմեղության կանխավարկածի էության լուսաբանմանն անդրադարձել են բազմաթիվ հայ և օտարերկրյա հեղինակներ: Իրավական կանխավարկածների թվում հատուկ դիրք և դեր ունի անմեղության կանխավարկածը: Սույն սկզբունքի՝ իրավական կանխավարկածների շարքում զբաղեցրած հատուկ դիրքը պայմանավորված է դրա՝ արդարադատության հիմնարար սկզբունքների, մարդու իրավունքների պաշտպանության և արդար դատաբանության ապահովման հետ ուղղակիորեն կապված լինելու հանգամանքով: Ի տարբերություն այլ իրավական կանխավարկածների, որոնք հիմնականում ծառայում են իրավաբանական փաստերի ապացուցման գործընթացը հեշտացնելուն, անմեղության կանխավարկածի նպատակն է ապահովել անձի պաշտպանությունը անհիմն քրեական պատասխանատվության ենթարկվելուց: Այս հանգամանքը մասնագիտական շրջանակներում բուռն քննարկումների առիթ է տվել և շարունակում է տալ, քանի որ այս հիմքով որոշ հեղինակներ անմեղության կանխավարկածը համարում են ճյուղային՝ որպես քրեադատավարական սկզբունք, իսկ մյուսները՝ համաիրավական:

Կարծում ենք, որ այստեղ ի հայտ է գալիս անմեղության կանխավարկածի սկզբունքային տարբերությունը մյուս իրավական կանխավարկածներից: Վերջիններս հիմնականում կրում են գործառնական բնույթ՝ նպատակ ունենալով դյուրացնել ապացուցման գործընթացը և հանդես գալ որպես իրավակիրառ պրակտիկայի տեխնիկական գործիք: Մինչդեռ անմեղության կանխավարկածը հետապնդում է արժեքային նպատակ առավելագույն մակարդակով՝ պաշտպանել անհատին անհիմն պատասխանատվության ենթարկվելուց: Այն բարձրացվում է արդարադատության հիմնարար սկզբունքի աստիճանի՝ իրավապահ մարմինների և դատարանների գործունեության մեջ ներմուծելով հումանիստական չափում:

Անմեղության կանխավարկածի առանձնահատկությունների թվում պետք է նշել այն, որ վերջինս ոչ միայն զուտ պարզեցնում է դատավարական ընթացակարգերը, այլև հավասարակշռում է արդարադատությունը: Մեղադրանքի կողմն ունի գերակա դիրք, քանի որ դրանում ներգրավված են վարույթի հանրային 2 մասնակից՝ դատական վարույթին մասնակցող դատախազը, քննիչը: Մինչդեռ մեղադրյալը գտնվում է պաշտպանության դիրքում՝ հաճախ չունենալով բավարար ռեսուրսներ իր անմեղությունն ապացուցելու համար: Անմեղության կանխավարկածը սահմանում է առանցքային դատավարական պահանջ. մեղքի ապացուցման ողջ պատասխանատվությունը կրում է մեղադրանքի կողմը, իսկ բոլոր չփարատված կասկածները մեկնաբանվում են մեղադրյալի օգտին: Տվյալ դրույթը հաստատում է արդարացի հավասարակշռություն դատավարական կողմերի միջև: Սահմանադրական երաշխիքների տեսանկյունից ապացուցման բեռի՝ մեղադրանքի կողմի վրա դրվելը և չփարատված կասկածները մեղադրյալի օգտին մեկնաբանելու պահանջը նպաստում է կողմերի ի սկզբանե անհավասար դիրքերի հավասարեցմանը: Սա պարզապես գործընթացային տեխնիկական կանոն չէ, այլ անձի՝ պետական մեղադրական մեխանիզմի ճնշումից պաշտպանելու լայն

սկզբունքի դրսևորում է: Նման պահանջի շնորհիվ դատական գործընթացը դառնում է առավել օբյեկտիվ և արդար, իսկ դատական սխալի ռիսկը՝ նվազագույնի հասցված: Նշանակում է, որ անմեղության կանխավարկածն ազդում է իրավունքի մեկնաբանության վրա: Եթե քրեական կամ դատավարական նորմերը միանշանակ չեն, ապա դրանց մեկնաբանությունը պետք է հիմնվի անմեղության կանխավարկածի սկզբունքի վրա: Դա նշանակում է, որ եթե ապացույցներն ունեն երկակի մեկնաբանություն, ընտրվում է այն տարբերակը, որը բխում է մեղադրյալի շահերից:

Մեկ այլ առանձնահատկություն է այն, որ անմեղության կանխավարկածն, ի տարբերություն բազմաթիվ այլ իրավական կանխավարկածների, ամրագրված է թե՛ ազգային (երկրի հիմնական օրենքով՝ սահմանադրությամբ և ոչ միայն), թե՛ միջազգային մակարդակով (Berisha, 2020, էջ 249): Ժամանակակից իրավական համակարգերը ամրագրում են այս սկզբունքը՝ այն համարելով հիմնարար և կենսականորեն անհրաժեշտ՝ արդար դատաքննության իրավունքի իրացման համար: Մասնավորապես, ընդգծվում է, որ անմեղության նույնիսկ նվազագույն հավանականությունը չի կարող անտեսվել, որպեսզի կանխվի անմեղ անձի դատապարտման անուղղելի սխալը: Այս միտքն արտահայտում է բարոյահենք իրավական հիմնադրույթ. անգամ արդարադատության բարեհաճ նպատակների համար անթույլատրելի է «գոհաբերել» անմեղ անձի: Իրավական պետությունում ազատության և արդարության արժեքներն այն աստիճան բարձր են, որ արդարադատության համակարգը պարտավոր է ընդունել որոշակի իրավական անորոշություն՝ միայն թե բացառի անմեղի դատապարտման հնարավորությունը: Այս մոտեցումը քրեական դատավարությունում սահմանում է ապացուցման չափազանց բարձր նշանոդ և միաժամանակ արդար դատաքննության երաշխիքների ձևակերպման գործընթացում հանդես է գալիս որպես էթիկական ուղենիշ օրենսդրի համար:

Անմեղության կանխավարկածի կարևորությունն ընդգծվում է դրան վերագրված իրավական և սոցիալական նշանակալիությամբ: Ըստ Կ. Ա. Բաուժի-ցի (2019), որի հետ համակարծիք ենք, անմեղության կանխավարկածը քրեական դատավարության համակարգաստեղծ սկզբունքներից է: Այն դիտարկվում է որպես «հիմնարար իրավական կառուցվածք, որի շուրջ ձևավորվում է քրեական դատավարության ամբողջ համակարգը» (էջ 176-177): Քրեական դատավարությունը՝ սկսած ապացույցների հավաքումից մինչև դատավճռի կայացում, կառուցվում է այս սկզբունքի վրա: Այն ուղղորդում է օրենսդրության զարգացումը՝ պահանջելով կատարելագործել նորմերը՝ դրանք համապատասխանեցնելով իր պահանջներին (օրինակ՝ բացառել այնպիսի ընթացակարգեր, որոնք խախտում են մեղադրյալի՝ անմեղ համարվելու իրավունքը):

Անմեղության կանխավարկածն ունի բարձր սոցիալական նշանակություն: Այն ձևավորում և ժամանակի ընթացքում կատարելագործում է ինչպես իրավաբանների մասնագիտական իրավագիտակցությունը, այնպես էլ հասարակության իրավական գիտակցությունը: Վարույթի հանրային մասնակիցները՝ դատախազը, քննիչը, վարույթին ներգրավված անձինք, մասնավորապես՝ դատավորը և այլ պաշտոնատար անձինք, սովորում են մեղադրյալի

նկատմամբ լինել անաչառ և հարգել նրա իրավունքները: Հասարակությունը սովորում է դրսևորել պատշաճ սոցիալական վարքագիծ մեղադրյալի նկատմամբ՝ զերծ մնալ մեղադրանքներ առաջադրելուց, մինչև դատարանը չհաստատի մեղավորությունը:

Այսպիսով, անմեղության կանխավարկածի սկզբունքն իրականացնում է նաև հանրային դատարարակչական գործառույթ: Այն նպաստում է իրավագիտակցության ձևավորմանը՝ քաղաքացիների մեջ արմատավորելով մեղադրյալի՝ կանխավարկածով անմեղ լինելու նկատմամբ հարգանք: Ժողովրդավարական պետությունում ոչ միայն դատարանները, այլև հասարակության յուրաքանչյուր անդամ պարտավոր է զերծ մնալ վաղաժամ մեղադրական գնահատականներից: Ընդունելով այս սկզբունքը՝ սոցիալական միջավայրը ձևավորում է անհատի իրավունքների նկատմամբ հանդուրժողականություն և հարգանք, ինչը վերջնարդյունքում ամրապնդում է իրավական համակարգի նկատմամբ վստահությունը և արդարության գաղափարը:

Պատահական չէ, որ անմեղության կանխավարկածն անվանում են իրավական պետության առանցքային չափանիշներից մեկը: Ինչպես նշում են Է. Ա. Մամոնտովան և Դ. Ա. Դյատչինան, անձի իրավունքների և ազատությունների պաշտպանությունը ժամանակակից իրավական պետության հիմնական հատկանիշն է, իսկ անմեղության կանխավարկածն այս պաշտպանության իրավական երաշխիքներից մեկն է (Мамонтова, Дятчина, 2022, էջ 93–95): Քննության առնելով հեղինակի տեսակետը՝ կարելի է հավաստել, որ տրված բնութագիրն ընդգծում է անմեղության կանխավարկածի սահմանադրարվական նշանակությունը: Իրավական պետությունում անհատի իրավունքների և ազատությունների պաշտպանության աստիճանը հանդիսանում է իրավունքի գերակայության իրական գոյության չափանիշ, և անմեղության կանխավարկածն այս պաշտպանության հիմնասյուներից մեկն է: Այս սկզբունքը հանդիսանում է իրավական պետության վիճակի ցուցիչ. այնտեղ, որտեղ անմեղության կանխավարկածը հետևողականորեն պահպանվում է, իշխանությունը սահմանափակված է իրավունքի միջոցով, իսկ արդարադատությունն սպասարկում է մարդուն, այլ ոչ թե մարդը՝ արդարադատության մեխանիզմին: Այն պարտավորեցնում է պետությանը հարգել հանցագործության մեջ մեղադրվող անձի պատիվն ու արժանապատվությունը, մինչև նրա մեղավորությունն ապացուցվի խիստ սահմանված դատավարական ընթացակարգով: Այս կերպ ապահովվում է հասարակական շահի և անձնական իրավունքների հավասարակշռությունը, որտեղ անձի անհիմն դատապարտումը պետք է բացառվի անգամ պատասխանատվությունից խուսափելու գնով: Այս մոտեցումն է, որ տարբերակում է իրավական և հումանիստական արդարադատությունը ռեպրեսիվ արդարադատությունից:

Այս առումով բավականին ընդգրկուն ուսումնասիրություն է կատարել Օ. Ի. Ցիբուլևսկայան: Ըստ հեղինակի, որի հետ համակարծիք ենք, անմեղության կանխավարկածը ոչ միայն իրավական սկզբունք է, այլև բարձրագույն բարոյական և հումանիստական արժեք է: Այն ապահովում է ոչ միայն արդար դատաքննության իրավունքի իրացումը, այլև մարդու արժանապատ-

վության, ազատության և հասարակական իրավագիտակցության պահպանությունը: Սա հիմնարար սկզբունք է, որը պաշտպանում է անհատին պետական կամայականությունից և ապահովում է նրա իրավունքների իրացումը նույնիսկ հնարավոր բարդ իրավիճակներում: Հեղինակն ընդգծում է, որ անմեղության կանխավարկածը բացառում է կանխակալ վերաբերմունքը, միակողմանի մեղադրական կողմնակալությունը և արգելում է քաղաքացիների՝ միայն ենթադրությունների վրա հիմնված ցանկացած մեղադրանք: Այս սկզբունքն արգելում է անձին պատասխանատվության ենթարկել կամ «խարանել» դատավճռից առաջ՝ ապահովելով յուրաքանչյուր մարդու սահմանադրական իրավունքների իրացումը (Цыбулевская, 2010, էջ 571-573): Քննության առնելով հեղինակի տեսակետը՝ կարելի պնդել, որ այս ըմբռնմամբ անմեղության կանխավարկածը ստանում է բարձրագույն բարոյահեն իրավական իդեալի արժեք: Սույն սկզբունքը խարսխված է մարդկային արժանապատվության և ազատության նկատմամբ հարգանքի վրա, ուստի մեղադրյալի անմեղության պաշտպանության նշանակությունն անցնում է զուտ իրավական դաշտից և ձեռք է բերում բարոյական հարթություն: Անմեղության կանխավարկածը հանդես է գալիս իրավունքի և բարոյականության միջև կապող օղակ՝ վերահաստատելով հումանիտական արժեքների առաջնայնությունը պետության պատժիչ միտումներից:

Ստացվում է, որ անմեղության կանխավարկածը հումանիստական երաշխիք է՝ հիմնված բոլոր մարդկանց բարեխղճության և արժանապատվության կանխավարկածի վրա: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր մարդ համարվում է ոչ միայն իրավաբանորեն, այլև բարոյապես անմեղ, քանի դեռ ապացույցներով չի հաստատվել հակառակը: Այս սկզբունքը գտնվում է իրավունքի և բարոյականության հատման կետում: Այն ապահովում է օրենքի գերակայությունը, քանի որ պաշտպանում է անհատին անհիմն ճնշումից, ապահովում է բարձր ստանդարտներ ապացուցման գործընթացում, թույլ չի տալիս դատարաններին առաջնորդվել կանխակալ վերաբերմունքով:

Ընդհանրացնելով կարելի է պնդել, որ անմեղության կանխավարկածի իրավական բնույթի շուրջ ընթացող տեսական վեճը վկայում է այդ սկզբունքի՝ իրավական համակարգում ունեցած բացառիկ դիրքի մասին: Այս սկզբունքը, ծնվելով քրեական դատավարության ոլորտում, իր բովանդակությամբ գերազանցում է դրա սահմանները: Այն չի կարող վերագրվել ոչ ընդհանուր իրավական, ոչ էլ զուտ ճյուղային կանխավարկածների դասին: Իր կառուցվածքային ու գործառնական հատկանիշներով անմեղության կանխավարկածը հանդես է գալիս որպես միջճյուղային սկզբունք՝ ձևավորելով ամբողջ իրավական համակարգի հիմքում ընկած արժեքային չափորոշիչ, առանց իրաժարվելու կոնկրետ ոլորտներում ունեցած նորմատիվ դրսևորումներից:

Քննարկում

«Критика практического разума» Канта заканчивается вдохновляющими словами о небе, идеях и земной жизни: «Две вещи наполняют душу всегда новым и все более сильным удивлением и благоговением, чем чаще и продолжительнее мы размышляем о них, — это звездное небо надо мной и моральный закон во мне» (Кант, 1999, с. 435). Эти лучезарные слова высечены на надгробии Канта.

Кант прекрасно понимал, что ценность права заключается в его практическом осуществлении, для чего необходимо придать праву принудительный характер и обеспечить его государственным принуждением.

Кант определял государство как «объединение многих людей, подчиняющихся юридическим законам» (Кант, 1999, с. 689).

Государство, очерченное Кантом, — это либеральное государство, государственное устройство которого должно полностью соответствовать принципам права. Концепция государства великого философа впоследствии была признана философской основой современной идеи правового государства (Арендт, 2000, с. 142; Хабермас, 2010, с. 59–61).

Правовая организация властей и разделение властей. Таково требование морального закона Канта.

По форме правления он различал два типа государств: республика и диктатура. В республике, по определению Канта, действует принцип разделения властей, законы гуманны, защищают права и свободы людей. При диктатуре разделение властей отсутствует, законодательная и исполнительная власть принадлежит диктатору, а законы несовершенны и действуют против собственного народа.

Кант также был сторонником договорной теории возникновения государства, однако трактовал ее гораздо более основательно и убедительно. По его мнению, в общественный договор вступают только нравственно развитые люди. Поэтому государству запрещено выражать неуважение к ним. Кроме того, подписав договор общественного договора, они становятся партнерами, и по-

этому их интересы должны быть надлежащим образом защищены с обеих сторон. Государство, если оно не выполняет свои договорные обязательства, превращается в диктатуру. Государство также не должно выступать в качестве покровителя народа, не должно пытаться установить «отеческое» и опекуновское отношение к подданным, поскольку эта опека излишня для общества, ограничивает социальную активность и гражданскую ответственность людей.

Человек и гражданин Канта не был жалким, полностью подчиненным самодержцу подданным Гоббса, и он не был тем аспектом договорной теории, который рассматривался государством как несовершенная масса, лишенная морали и этики и нуждающаяся в государственной заботе и «отеческой заботе». Человек Канта носил в своей душе нравственный «категорический императив», исходящий из божественного закона, благодаря которому он становился суверенным, полноправным гражданином, наделенным достоинством.

Кант, защищая идею суверенитета народа, в то же время был крайне обеспокоен тем, что, руководствуясь этим положением, не будут предприняты крайне радикальные шаги. Во имя установления стабильности и мира он наложил запрет на то, чтобы не обсуждался вопрос происхождения действующей власти.

Он пишет: «Неважно, был ли договор о передаче власти государству первым или государство было первым, а договор — потом». Он требовал «подчинения существующим властям, независимо от характера их источника» (Кант, 1999, с. 696–697).

И почему Кант ограничивает права людей в этом вопросе? По двум причинам. Во-первых, по его мнению, «нет власти без воли Божией», а затем народу не дано права восставать против государства и бунтовать, выступать против монарха. Кант рассматривал каждый шаг, предпринятый в этом направлении, как государственное преступление. Для того чтобы народ имел право сопротивляться властям, должен быть публичный закон, а это значит, что народ должен превратиться из подданных в суверенов, что с точки зрения права является нонсенсом, поскольку сами люди становятся судьями своих собственных дел (Кант, 1999, с. 698–699).

В связи с этим Кант осуждает казнь короля Англии Карла I и короля Франции Людовика XVI, которая «содрогает души людей» и не изгладится из памяти людей на протяжении столетий, ни в этой жизни, ни в будущей.

По Канту, недостатки в устройстве и функционировании государственной власти должны быть исправлены сувереном путем реформ, а не революции. При этом сопротивление может быть оказано только исполнительной власти, и то со стороны избранных народом представителей в парламенте.

Особого внимания заслуживает идея «вечного мира», которую Кант развивал в последний период своей жизни.

Великий философ был убежден, что война является величайшим злом для всего цивилизованного мира и ее необходимо преодолеть.

По мнению Канта, существует шесть способов преодолеть войну:

Ни один мирный договор не должен признаваться таковым, если при его заключении тайно защищаются основания для новой войны.

Ни одно независимое государство, большое или малое, не должно терять свою независимость и быть приобретено другим государством посредством какой-либо сделки.

Постоянные армии со временем должны быть полностью ликвидированы.

Государственные средства не должны использоваться для внешних войн.

Ни одно государство не может вмешиваться силой во внутренние дела, политическую структуру или систему правления другого государства.

Ни одно государство не должно прибегать во время войны к враждебным мерам, которые могли бы подорвать взаимное доверие между воюющими государствами в будущем мирном времени (нарушение условий капитуляции, шпионаж, терроризм и т. п.).

По Канту, истребительные войны, в ходе которых страдают все воюющие стороны, могут установить «вечный мир» только на огромном кладбище всего человечества. Поэтому, отмечает Кант, чудовищные, дьявольские формы войны должны быть абсолютно запрещены.

Кант также последовательно отстаивал идею соответствия преступления и наказания, подчеркивая, что за преднамеренное убийство должна быть установлена смертная казнь. «Естественное право в данном случае ни при чем, так как, согласно естественному праву, каждый является собственником своих прав, а не чьих-либо других. Кроме того, естественное право и право вообще предполагают принцип равного наказания. Должно быть также равенство между преступлением и наказанием. Закон наказания категорически императивен, и его основания являются обязательными. Если эти требования не будут выполнены, справедливость исчезнет, и человеческая жизнь не будет иметь никакого смысла на этой земле, не будет иметь никакой ценности» (Кант, т.4, ч.2, 1965, с. 256).

«Истинная политика, — считает Кант, — не может сделать ни одного шага, не посвятив себя изначально морали. Хотя сама политика — трудное искусство, ее союз с моралью уже не есть искусство, ибо мораль разрубает узел, который политика не смогла развязать тогда, когда они сами находились в состоянии спора». **Права человека должны быть признаны священными, каких бы жертв это ни потребовало от действующих властей»** (Кант, 2022, с. 185).

Георг Вильгельм Фридрих Гегель был гениальным мыслителем новой эпохи, создавшим собственную целостную систему философской науки, неотъемлемой частью которой является его философия права.

Гегель, кажется, полностью выразил свои мысли в одном из своих мудрых изречений: «Стремитесь к солнцу, друзья, чтобы скорее наступило спасение человеческого рода! Что из того, что нам мешают листья! Или ветви! Пробивайтесь к солнцу, а если устанете, тоже хорошо! Тем приятней будет сон!» (Гегель, 1972, с.10).

Философия была всем для Гегеля. Если для других философия была сред-

ством познания бытия, другие мысленно общались с Богом или природой, то для Гегеля сам Бог есть философствующий разум, который достигает своего абсолютного совершенства в совершенной философии. Гегель разработал законы диалектики и учение о категориях. В основу развития природы и общества он положил «всеобщий разум» и «всеобщий дух». **Философия Гегеля приводит к существованию Бога.** Гегель также писал, что невозможно предсказать будущее, поскольку философия не может знать, что этот дух предпримет в будущем (Спиркин, 2008, с.150). О духе можно знать только после того, как его деятельность окончена. Цель всемирной истории, по Гегелю, — самопознание мирового духа. Этот процесс познания имеет ряд стадий и воплощается в национальном духе, который проявляется в законах, структуре государственных учреждений, искусстве, религии и философии. По мнению Гегеля, носителем национального духа является каждый. Национальный дух может быть даже у одного народа. В XVIII веке носителем этого «национального духа» была Франция, французская буржуазная революция, которая разрушала основы феодализма. И для своего друга Нитхаммера Гегель сравнил это с восходящим солнцем, а в письме от 13 октября 1806 года о французском лидере Наполеоне Бонапарте с восхищением отметил: «Я видел императора, эту мировую душу, в то время, когда он проезжал по городу на рекогносцировку. Испытываешь поистине удивительное чувство, созерцая такую личность, которая восседает здесь верхом на коне, охватывает весь мир и повелевает им» (Гегель, 1971, т.2, с. 255).

Более того, в другом письме, адресованному тому же Нитхаммеру, Гегель считает необходимым взять у французов основную идею свободы народа, участия в выборах, принятии решений, признания важной роли общественного мнения. В Германии по его оценке, в то время не было фактора свободы, не было четкой организации обязанностей органов власти, т.к. страна управлялась без конституции (Гегель, 1971, т. 2, с. 281).

Согласно Гегелю, основой права является свобода личности. Отчуждаться может только внешняя сфера права, тогда как жизнь, свобода и собственность человека неприкосновенны и неотчуждаемы. В этом смысле Гегель отдает предпочтение конституционной монархии, когда власть стабильна, практична, а права и свободы людей защищены законом.

Идея права, которое само по себе является свободой, разворачивается в государстве и праве.

А что такое свобода? Гегель затронул этот вопрос в своей работе «Введение в науку». Он поясняет: Эта свобода есть свобода воли. Это главное. Виды свободы — личная свобода выбора, политическая свобода, свобода вероисповедания, гражданская и юридическая свобода, свобода печати и т. д. — все это формы свободы воли.

Человек есть свободное существо, — отмечал Гегель, — это основа определения его природы». «Каждый человек, — отмечает философ, — поскольку он признан свободным существом, является личностью, поэтому принцип

права заключается в том, чтобы относиться к каждому как к личности». Люди, — продолжает мыслитель, — являются личностями по своей духовной природе, поэтому к ним не должно применяться принуждение.

«Свобода, — заключает Гегель, — **бывает вообще там, где господствует закон, а не произвол отдельного человека**» (Гегель, 1971, т. 2, с. 31, 37, 38).

Молодой Гегель был человеком мятежного духа, но зрелый и полностью осознанный Гегель позже был другим человеком. По мнению А. Спиркина, Гегель царствовал духовно в Германии, как абсолютный разум царствовал в мире. Он и поныне царствует в сфере мировой философии. Его иногда критикуют, но также изучают и преклоняются перед ним как перед величайшим гением. Он один из четырех величайших мыслителей за всю историю человечества (Платон, Аристотель, Кант, Гегель).

Гегель также является одним из основателей верховенства права. Как и его предшественники Локк и Монтескье, он видит в разделении властей средство установления общественной свободы. Однако Гегель считает наиболее эффективным не противопоставление разных ветвей власти друг другу, а их органическое единство.

По его мнению, такое единство обеспечивает суверенность государства. Кроме того, согласно Гегелю, «государство есть откровение Бога миру», поэтому раскалывание единой государственной власти и противопоставление одного ее крыла другому является неприемлемо. Государство не есть механическое объединение индивидов, агрегат, а живой организм, который обеспечивает свободу и права людей и их объединений посредством верховенства права. Гегель также не признает суверенитет народа, для него наиболее приемлемой является наследственная конституционная монархия. Рациональное государство, запланированное Гегелем, — это правовое государство, царство реализованной свободы и права.

Обращаясь к международному праву, Гегель отмечает, что оно существенно отличается от внутреннего, позитивного права. Внутреннее право имеет принудительную природу и обеспечивается государственным принуждением. Международное право, как правило, не имеет принудительной природы (приводятся лишь его 10 основных принципов). Выполнение норм этого права зависит от суверенной воли государств. Источником международного права являются двусторонние и многосторонние договоры, заключенные между государствами, которые должны добросовестно соблюдаться.

Известно, что Гегель выступал против идеи Канта о «мире во всем мире». Гегель не оспаривает, что война чужда идеям свободы и справедливости, но война, по Гегелю, имеет и свое оправдание. Война, по мнению Гегеля, «защищает моральное здоровье народов». Война защищает народы от гниения, которое происходит из-за длительного мира. Он сравнивает войну с ветром, который не дает озеру гнить и заболотиться (Гегель, 1973, с. 360).

Идеи Гегеля по основным вопросам права и морали несколько отличаются от идей Канта. Если в учении Канта источником права и морали является

разум, то в учении Гегеля — психика, идея, воля. Это не значит, что Гегель отрицает роль разума. Он подчеркивает, что воля есть одна из форм проявления разума. «Не следует думать, — пишет Гегель, — что человек есть существо мыслящее, с одной стороны, и существо волевое, с другой, что Разум находится в одном кармане, а воля в другом, ибо это было бы пустым понятием». Разница между разумом и волей заключается только в разнице между теоретическими и практическими отношениями, но это вовсе не два качества, поскольку воля – это особая форма мышления, ведущая к живому созерцанию» (Гегель, 1973, с. 32–33).

Право и мораль, по мнению Гегеля, не могут существовать отдельно, поскольку оба эти момента сами по себе не обладают реальностью.

«Мораль, согласно концепции Гегеля, имеет большое воспитательное значение. По его словам, педагогика есть искусство, делающее людей нравственными существами. Он рассматривает человека как дитя природы и показывает пути, по которым человек рождается заново, его первая сущность превращается в духовную сущность второй, и эта духовность становится для него привычкой» (Гегель, 1973, с. 206).

В философско-правовых концепциях Гегеля государство выступает под разными названиями как воплощение идеи свободы, как конкретное и высшее право, единый организм, политическое государство и т.д. Государство, которое он описывает, на самом деле является правовым государством и само является одним из разносторонних философских обоснователей этой идеи.

Рациональное государство Гегеля — это живая, могущественная, творческая, но также и богатая внутренними противоречиями политическая организация, где царят закон и справедливость, целесообразность и мораль.

Согласно диалектике Гегеля, единство и борьба этих внутренних противоречий являются движущей силой государства.

Если в учении Канта правовое государство есть принуждение, то в учении Гегеля оно есть действительность, практическое осуществление разума, при котором аппарат политического господства и механизм насилия обуздываются правом.

Гегель также был атеистом. Государство, которое он описал, не является «ночным сторожем», как это представляли себе английские либералы, а активно действует в сферах управления экономикой и общественной жизнью.

Гегель, как и Платон, отвергает концепцию «народ мудр», поскольку мудрость свойственна лишь весьма исключительным личностям.

Гегель соглашается с Аристотелем и другими, что цель государства — счастье его граждан. Если государство не достигает этой цели, его «основа слабая» ((Гегель, 1973, с. 291).

Однако Гегель видит «идею государства» и в «несовершенном государстве», что является важным моментом его существования. «Государство, — пишет Гегель, — не произведение искусства, оно находится в мире, в сфере произвола, случайностей и заблуждений, плохое поведение может исказить его.

Однако, даже самый уродливый человек, преступник, больной, инвалид, все еще живой человек. Важно существование государства» (Гегель, 1973, с. 285).

Идею государственного суверенитета Гегель развивал в дальнейшем после Жана Бодена. Согласно Гегелю государственный суверенитет бывает внутренний и внешний. Внутренняя власть заключается в том, что должна править целостная, которой должны подчиняться и зависеть от нее другие ветви власти. Гегель направлял свою критику против провозглашенного в США и Франции принципа разделения властей, считая, что независимость властей и их взаимное ограничение ложны, поскольку это разделение также порождает вражду между ними, взаимный страх и противодействие. В результате, согласно Гегелю, возникает «всеобщее равновесие, но не живое единство» (Гегель, 1973, с. 309).

Продолжением внутреннего суверенитета государства является его внешний суверенитет, который также должен быть признан и принят. Государства должны уважать суверенитет друг друга, равенство, принцип невмешательства во внутренние дела друг друга и должны признавать неприкосновенность своих территорий. Поскольку основой международного права являются договоры, заключенные между государствами, то Гегель требует, чтобы эти договоры выполнялись добросовестно.

Концепцию естественного права отстаивали все выдающиеся философы и юристы нового и новейшего времени: Н. Макиавелли, Ж. Боден, Г. Гроций, Б. Спиноза, Т. Гоббс, Дж. Локк, Ш. Монтескье, Ж. Руссо, И. Кант, Г. Гегель. Последний придавал божественную природу не только естественному праву, но и государству.

Человечество сегодня сталкивается с большими испытаниями. Пока не найдены пути преодоления этих испытаний с минимальными потерями, нет надежных стратегических решений и надежных концепций, но они будут найдены, потому что есть огромный спрос, который, по мнению одного из мудрецов, будет развивать науку быстрее, чем десятки университетов. Однако, новые спасительные идеи и концепции не возникают просто так в вакууме. Их родителем и воспитателем могут быть универсальные идеи и концепции, изложенные выше. Вооружиться этими идеями должно быть полезно для каждого человека и гражданина, которые судят и думают самостоятельно, особенно для каждого общественного политика.

Человечество уже не может смириться с той реальностью, что на протяжении тысячелетий главным регулятором общественной жизни и человеческих отношений является не право, а государство, которое постоянно склонно «злоупотреблять» своим положением.

Академик В. Нерсисянц отмечает: В трудах (Гегель, 1973, с. 3). «Государство и право» Платона, «Политика» Аристотеля, «О государстве» Цицерона, «О духе законов» Монтескье, «Об общественном договоре» Руссо, «Метафизика нравов Учения о праве» и «Философии права» Гегеля красной нитью проходит мысль о том, что целью права является установление справедливости. Если справедливость исчезнет, человеческая жизнь в стране не будет

иметь никакой ценности» (Кант, 1965, т 4, ч. 2, с. 256).

Заключение

Идеи философов французского Просвещения и представителей немецкой классической философии оказали фундаментальное влияние на формирование основ современного правового и политического мышления. Анализ взглядов Вольтера, Монтескье и Руссо показывает, что французская школа сосредоточилась на проблемах общественного договора, народного суверенитета и защиты естественных прав человека. Эти концепции заложили теоретические основы правового государства, разделения властей и демократического государства.

Кант и Гегель, принадлежащие уже к традиции немецкой классической философии, осуществили критическое переосмысление и дальнейшую систематизацию идей Просвещения. У Канта право предстает как область практического разума, обеспечивающая условия внешней свободы на основе универсального морального закона. Гегель, в свою очередь, развивает диалектическое понимание свободы и рассматривает право как проявление объективной этичности, воплощённой в институтах гражданского общества и рационального государства. Тем самым немецкая классическая философия придала правовой мысли более глубокое философско-этическое измерение.

Таким образом, французское Просвещение акцентировало социально-политические аспекты права и свободы, тогда как немецкая классическая философия предложила их философско-нравственное обоснование и систематизацию. В совокупности эти подходы сформировали интеллектуальную основу для современного представления о правовом государстве, где свобода личности, законность и моральная ответственность выступают взаимосвязанными элементами общественного порядка.

Проведённый анализ подтверждает, что идеи французских просветителей и их дальнейшая теоретическая обработка в немецкой классической философии не утратили своей актуальности: они продолжают служить концептуальным ориентиром для развития правового мышления и совершенствования демократических институтов в современном мире.

Список использованной литературы

- Арендт, Х. (2000). *О революции*. Москва: Республика.
- Вольтер, Ф.-М. (1956). *Трактат о веротерпимости*. М.: Гослитиздат.
- Гегель, Г. В.Ф. (1973). *Философия права*. Москва.
- Гегель, Г. В.Ф. (1990). *Философия права*, предисловие В.С.Нерсисянца, Москва, «Мысль».
- Гегель, Г.В.Ф. (1971). *Работы разных лет*. В двух томах. Т. 2. Сост., общая ред. А. В. Гулыги. М., «Мысль».
- Гобузов, И.Б. (1998). *Философия права*. Москва.
- История политических и правовых учений* (2003), под ред. В.С.Нерсисянца, Москва, «Норма».
- История политических и правовых учений* (2022). Учебник под ред. В. В. Лазарева. М.: Юрайт.

- Кант, И. (2022). *К вечному миру. РИПОЛ Классик*.
- Кант, И. (1999). *Основы метафизики нравственности*. «Мысль», Москва.
- Кант, И. (1965). *Сочинения в шести томах*. Под общ. ред. В. Ф. Асмуса. А. В. Гулыги, Т. И. Ойзермана, М., изд-во «Мысль». (Философское наследие. Акад. наук СССР. Ин-т философии) Т. 4. Ч. 2.
- Козлихин, И. Ю. (2019). *История политических и правовых учений: Учебное пособие*. СПб.: СПбГУ.
- Монтескье, Ш. (1957). *О духе законов*. Москва.
- Нерсесянц, В.С. (1999). *Философия права*. Москва, «Норма».
- Руссо, Ж.Ж. (1969). *Об общественном договоре*. Москва.
- Спиркин, А.Г. (2008). *Философия*. Москва.
- Хабермас, Ю. (2010). *Между натурализмом и религией*. Москва: Весь Мир.

Մարտին Մանուկյան

Երևանի «Գլաճոր» համալսարանի
Իրավագիտության ֆակուլտետի դասախոս,
ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան,
իրավաբանական գիտությունների թեկնածու
Էլ. փոստ՝ martin_manukyan_1955@mail.ru

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ. ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻՅ ՄԻՆԶԵՎ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

Սույն հոդվածը նվիրված է Եվրոպական լուսավորության դարաշրջանի փիլիսոփայական և իրավական գաղափարների վերլուծությանն ու դրանց ազդեցությանը իրավունքի, ազատության և պետության հասկացությունների ձևավորման, ինչպես նաև դասական գերմանական փիլիսոփայության հետագա զարգացման վրա: Հոդվածը կենտրոնանում է Վոլտերի, Մոնտեսքյոյի և Ռուսոյի՝ որպես լուսավորության դարաշրջանի հիմնական ներկայացուցիչների հայացքների վրա, որոնց անհատական ազատության, հասարակական պայմանագրի և իշխանությունների բաժանման գաղափարները հիմք հանդիսացան իրավական պետության հետագա ձևավորման համար: Հատուկ ուշադրություն է դարձվում Իմմանուիլ Կանտի և Գեորգ Հեգելի փիլիսոփայությանը, ովքեր, որպես դասական գերմանական փիլիսոփայության ներկայացուցիչներ, քննադատաբար վերաիմաստավորեցին և համակարգեցին լուսավորության դարաշրջանի գաղափարները: Ուսումնասիրության օբյեկտն է 18-րդ և 19-րդ դարերի եվրոպացի մտածողների փիլիսոփայական և իրավական ուսմունքներն են, իսկ առարկան՝ նրանց ազդեցությունը իրավունքի, օրինականության և պետականության ժամանակակից ընկալման վրա:

Հոդվածի նպատակն է բացահայտել լուսավորության դարաշրջանի իրավական մտքի հիմնական սկզբունքները և հետևել դրանց հայեցակարգային

փոխակերպմանը դասական գերմանական փիլիսոփայության մեջ: Ուսումնասիրության նորույթը կայանում է երկու ինտելեկտուալ ավանդույթների՝ լուսավորականության և գերմանական դասականների համապարփակ համեմատական վերլուծության և իրավական պետության գաղափարի զարգացման գործում դրանց ներդրման բացահայտման մեջ:

Հիմնաբառեր. լուսավորականություն, իրավական պետություն, բանականություն, հայեցակարգ, ազատություն, արդարություն, օրենքների ոգին:

Martin Manukyan

*Lecturer of the Law Department at Yerevan University “Gladzor”,
member of the Chamber of Advocates of the Republic
of Armenia, Ph.D. in Law*

Email: martin_manukyan_1955@mail.ru

EVOLUTION OF THE IDEAS OF LAW AND FREEDOM: FROM THE FRENCH ENLIGHTENMENT TO GERMAN CLASSICAL PHILOSOPHY

The article examines the philosophical and legal ideas of the European Enlightenment and their impact on the development of concepts of law, freedom, and the state, as well as on the subsequent evolution of German classical philosophy. Special attention is given to the views of Voltaire, Montesquieu, and Rousseau as key representatives of the Enlightenment, whose ideas of individual liberty, the social contract, and the separation of powers laid the foundation for the later emergence of the rule-of-law state. A particular focus is placed on the philosophies of Immanuel Kant and Georg Hegel, who, as leading figures of German classical philosophy, critically reinterpreted and systematized the intellectual legacy of the Enlightenment.

The object of the study is the body of philosophical and legal doctrines developed by European thinkers of the eighteenth and nineteenth centuries, while the subject is their influence on modern understandings of law, legality, and statehood. The aim of the article is to identify the key principles of Enlightenment legal thought and to trace their conceptual transformation within German classical philosophy. The novelty of the research lies in its comprehensive comparative analysis of these two intellectual traditions—the Enlightenment and German classicism—and in demonstrating their joint contribution to the development of the idea of the rule-of-law state.

Key words: Enlightenment, rule-of-law state, reason, concept, freedom, justice, spirit of the laws.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2025թ. մայիսի 5-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2025թ. մայիսի 7-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2025թ. հունիսի 11-ին:

Արմեն Միրզոյան

Երևանի պետական համալսարանի

Քաղաքագիտության ամբիոնի հայցորդ

Էլ. հասցե՝ armen.mirzoyan@ysu.am, armenmirzoian@gmail.com

DOI: 10.53614/18294952-2025.1-73

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Սույն հոդվածը անդրադառնում է գիտական գրականության մեջ պետության քաղաքական կայունության սահմանման հիմնախնդրին և դրա վերաբերյալ տարբեր մոտեցումների վերլուծությանը: Հոդվածում քննարկվում են քաղաքական կայունության վերաբերյալ պատկերացումների պատմական զարգացումը, քաղաքական և հասարակական կայունության ուսումնասիրության առավել համընդգրկուն մոտեցումները, պետության քաղաքական կայունության վերաբերյալ սահմանումների առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց միջև առկա մեթոդաբանական տարբերությունները: Վերհանելով պետության քաղաքական կայունության վերաբերյալ մեկ համընդհանուր սահմանման բացակայությունը՝ հեղինակն առաջարկում է սահմանում, որն արտացոլում է պետության քաղաքական կայունության բազմաչափ բնույթը, ապահովում վերլուծական հստակություն և կիրառելի է քաղաքական տարբեր համակարգերում ու համատեքստերում էմպիրիկ հետազոտությունների համար:

Հիմնաբառեր. պետության քաղաքական կայունություն, քաղաքական համակարգ, քաղաքական վարչակարգ, քաղաքական իշխանություն, լեգիտիմություն, համակարգերի տեսություն, սիներգետիկայի տեսություն, համակարգային մոտեցում, ադապտիվ ինքնակարգավորում:

Ներածություն

Պետության քաղաքական կայունություն երևույթը քաղաքագիտության մեջ ունի առանցքային դեր և արտահայտվում է պետական կառավարման համակարգի կանխատեսելիությամբ, իշխանության լեգիտիմությամբ, քաղաքական ինստիտուտների արդյունավետությամբ ու հասարակական համախմբվածությամբ՝ դրսևորվելով տարբեր կերպ՝ կախված տվյալ երկրի քաղաքական համակարգի բնույթից, սոցիալ-տնտեսական պայմաններից ու միջազգային հարաբերություններից: Այդուհանդերձ, գիտական գրականության մեջ պետության քաղաքական կայունության սահմանման վերաբերյալ պատկերացումները համանման չեն. չկա նաև մեկ միասնական սահմանում, իսկ տեսական հիմքերի և մեթոդաբանական գործածման շուրջ երբեմն, առկա է խորքային անհամաձայնություն: Հենց այդ կոնսենսուսի բացակայությունն է, որ հետազոտողների համար խնդիրներ է առաջացնում պետության քաղաքական կայունության չափումների ժամանակ, քանի որ բացակայում են չափման մեկ միասնական մեխանիզմներն ու միջոցները: Հասկացության վերաբերյալ տերմինաբանական երկիմաստությունը խաբխուրում է ոչ միայն առանձին հետազոտությունների նկատմամբ վստահությունը, այլև դրանց արդյունքների համադրելիությունը: Արևմտյան գրականության մեջ լայն տարածում գտած «հայեցակարգային առաձգականություն»-ը (conceptual stretching)՝ երբ նույն եզրույթը (այս պարագայում՝ քաղաքական կայունությունը) կիրառվում է տարբեր երևույթների բնութագրման համար (օր.՝ ինստիտուտների կայունություն, քաղաքականության կանխատեսելիություն, բռնի հակամարտությունների բացակայություն), մեթոդաբանական առումով հաճախ խոչընդոտում է համեմատական վերլուծություններին:

Այս հետազոտությունը նպատակ ունի որոշակիորեն լրացնելու այդ բացը՝ ոչ միայն վերհանելով մասնագիտական գրականության մեջ պետության քաղաքական կայունության վերաբերյալ առկա սահմանումները, այլև տալու սահմանում, որը հետազոտողներին կարող է օգնել ձևավորելու դրա չափման հստակ և համընդհանուր մեխանիզմներ: Պետության քաղաքական կայունության սահմանումների առանձնահատկությունների ուսումնասիրությունը և նոր սահմանման առաջարկումը չի հետապնդում միայն ակադեմիական նպատակներ, այլ միտված է նաև հիմք հանդիսանալ նոր էմպիրիկ հետազոտությունների իրականացման համար ու նպաստել պետության քաղաքական կայունության առավել համակարգված և բազմակողմանի ընկալմանը:

Եվ ի վերջո, այս հետազոտությունը փորձում է հասկանալ, թե որն է քաղաքական կայունության այն մեկ միասնական սահմանումը, որը կարտացոլի քաղաքական կայունության բազմազափ բնույթը, կապահովի վերլուծական հստակություն և կիրառելի կլինի քաղաքական տարբեր համակարգերում ու համատեքստերում էմպիրիկ հետազոտությունների համար:

Մեթոդներ

Հետազոտության իրականացման ժամանակ կիրառվել են համեմատական և վերլուծական մեթոդները: Համեմատական մեթոդը կիրառվել է կայունության տեսակների, ինչպես նաև պետության քաղաքական կայունության վերաբերյալ տարբեր հեղինակների սահմանումները դիտարկելու ժամանակ: Մինչդեռ վերլուծական մեթոդը կիրառվել է այդ սահմանումների մեկնաբանության, ինչպես նաև հետազոտության հարցի ուսումնասիրության ժամանակ:

«Քաղաքական կայունություն» հասկացության սահմանման ժամանակակից մոտեցումները

«Կայունությունը» միջգիտակարգային հասկացություն է, որն առաջացել է լատիներեն «*stabilitas*» բառից և բնորոշվում է որպես «կարծրացում, մշտական կայուն վիճակի բերում կամ դրա պահպանում, ցանկացած գործընթացի կայունության ապահովում»: Չնայած այն հանգամանքին, որ գիտական տարբեր աշխատություններում վերլուծվել են կայունությանը վերաբերող հիմնահարցերը, քիչ բան է արվել կայունության առավել ընդգրկուն և համապարփակ բնութագրերն առանձնացնելու ու սահմանելու առումով: Սվեն Ուվե Հանսոնը և Գերթ Հելգեսոնն իրենց «Ինչ է կայունությունը» հոդվածում առանձնացնում են կայունության երեք հիմնական տեսակ՝ հաստատունություն (constancy), տոկունություն (robustness), և դիմակայունություն (resilience) (Hansson, 2003, էջ 220): Ընդ որում, ըստ հեղինակների, հաստատունություն ասելով հասկանում ենք մի իրողություն, երբ համակարգում ինչ-որ փոփոխական կամ ասպեկտ չի փոփոխվում կամ աննշան է փոփոխվում, տոկունություն՝ երբ ինչ-որ փոփոխական կամ ասպեկտ որոշակի գործոնների ազդեցության պարագայում միտում չունի փոփոխվելու կամ նույնիսկ աննշան փոխվելու, դիմակայունություն՝ երբ ինչ-որ փոփոխական կամ ասպեկտ փոփոխության է ենթարկվում որոշ գործոնների ազդեցության ներքո, այդուհանդերձ դարձյալ վերադառնում է իր նախկին վիճակին կամ էլ դրան շատ մոտ ինչ-որ վիճակի:

Եթե փորձենք ավելի պարզ ներկայացնել, ապա հաստատունությունն առնչվում է այն իրավիճակին, որը տեղի է ունենում ինչ-որ կոնկրետ պահի, և չի վերաբերում միտումներին կամ էլ այն ամենին, ինչ կարող էր տեղի ունենալ, եթե այդ հանգամանքներն այլ լինեին: Փոխարենը, տոկունությունը վերաբերում է ոչ միայն տեղի ունեցող փոփոխություններին, այլև, թե ինչպես համակարգը կարծագանքի այն հանգամանքներին, որոնք դեռ տեղի չեն ունեցել և կարող են պատահել ապագայում: Այս իմաստով համակարգը չի համարվում կայուն, եթե այն մնում է անփոփոխ միայն խոչընդոտների բացակայության պատճառով (Hansson, 2003, էջ 221): Այսինքն՝ քաղաքական համակարգը կայուն է, եթե այն կարող է հակազդել բավականին լուրջ ցնցումներին: Եվ վերջապես դիմակայունությունը վերաբերում է համակարգի վերականգնմանը կամ վերադարձին իր սկզբնականին մոտ վիճակին, որի փոփոխությունը տեղի էր ունեցել որոշակի գործոնների ազդեցության ներքո:

Ռուսալեզու գիտական գրականության մեջ ևս առաջ է քաշվում դիտարկվող եզրույթի երկու տարբերակ. կայունություն (стабильность) և կանգունություն (устойчивость): Թեպետև երկուսն էլ մասնագիտական հայերենում արտահայտում են կայունություն իմաստը, սակայն միանգամայն տարբեր նշանակություններ ունեն: Այսպես, եթե առաջինը քաղաքական համակարգի վիճակն է, ապա երկրորդը՝ դրա հնարավորություններն ու կարողությունները (Гаджиев, 2020, էջ 163): Հեղինակներն այս երկու բառերի տարբերությունը պատկերավոր նկարագրելու համար բերում են 2016 թվականին Թուրքիայում տեղի ունեցած հեղաշրջման անհաջող փորձի օրինակը: Ըստ նրանց՝ հեղաշրջման այս փորձը տեղի ունեցավ Թուրքիայում առկա քաղաքական անկայունության (нестабильность) պատճառով, սակայն այդ փորձի ձախողումը վկայում է քաղաքական համակարգի «կանգունության» մասին (устойчивость):

Ընդհանուր առմամբ, պետության քաղաքական կայունությունը հաճախ դիտվում է որպես սոցիալական կայունության հիմնարար գործոններից մեկը: Դեռ հնագույն ժամանակներից պետության և հասարակության կայունության հիմնախնդիրները կարևոր դեր են ունեցել մարդկության ինտելեկտուալ որոնումներում: Իրենց աշխատություններում մի շարք փիլիսոփաներ փորձել են հասկանալ, թե որոնք են այն գործոնները, որոնք ապահովում են կարգ ու կանոն, կանխում հասարակության փլուզումը և ստեղծում պայմաններ իշխանության կայուն գոյության համար: Այս թեմայի նկատմամբ հետաքրքրությունը պայմանավորված էր ոչ միայն իշխող դասակարգի կարիքներով, որոնք ձգտում էին պահպանել իրենց իշխանությունը և ապահովել անվտանգ միջավայր, այլև արտաքին սպառնալիքների ու ներքին հակամարտությունների պայմաններում համայնքների գոյատևման հիմնարար հարցերով: Այնպիսի հեղինակներ, ինչպիսիք Պլատոնը և Արիստոտելն էին, բարձրացնում էին հարցեր, որոնք կապված էին արդարության, օրինականության և քաղաքական կայունության հետ: Նրանք պետության գոյության շարունակականությունը կապում էին սոցիալական տարբեր խմբերի միջև համերաշխության առկայությամբ: Իսկ արդեն Հին Զինաստանում կոնֆուցիականության հետևորդները կայունությունը դիտարկում էին որպես բարոյական նորմերի, ինստիտուցիոնալ կարգի և իշխանության կողմից խիստ վերահսկողության ճիշտ համադրման արդյունք: Հնդկական քաղաքական փիլիսոփայության մեջ էլ (օրինակ՝ «Արտհաշաստրա» տրակտատում) շեշտը դրվում էր կառավարչի՝ տնտեսական բարգավաճման, ռազմական ուժի և սոցիալական հիերարխիայի միջև հավասարակշռությունը պահպանելու ունակության վրա: Ստացվում է, որ պետության և հասարակության կայունության նկատմամբ հետաքրքրությունը դեռևս հին ժամանակներից ուներ համընդհանուր բնույթ ու բնորոշ էր տարբեր քաղաքակրթությունների: Դեռ այդ ժամանակաշրջանում մարդիկ գիտակցում էին, որ կայունությունն անհնար է պահել միայն ուժի կամ վախի հենքի վրա: Այն պահանջում է համաձայնություն, լեգիտիմություն և ինստիտուցիոնալ կարգ: Փոխարենը, միջնադարում քաղաքական կայունությունը ձեռք էր բերվում ավանդույթի ուժի

և քրիստոնեական եկեղեցու հեղինակության շնորհիվ: Իսկ արդեն մարքսիստական հայեցակարգում փորձեր են արվել գտնելու հասարակության քաղաքական կայունության հայեցակարգային հիմքը: Կայուն համակարգն այստեղ հանդես է գալիս որպես սոցիալական կառուցվածքի ինքնատիպ իդեալ:

20-րդ դարից սկսած պետության քաղաքական կայունության հարցերը դարձան քաղաքագիտության համակարգային վերլուծության առարկա: Դա պայմանավորված էր նաև համաշխարհային քաղաքականության մեջ կտրուկ փոփոխություններով՝ համաշխարհային պատերազմներ, գաղութատիրական կայսրությունների փլուզում, նոր պետությունների ձևավորում, ինչպես նաև Սառը պատերազմի պայմաններում ժողովրդավարական և ավտորիտար վարչակարգերի միջև գլոբալ դիմակայություն: Քաղաքագետներին հետաքրքրում էր, թե որոնք են այն գործոնները, որ ապահովում են քաղաքական համակարգերի կայունությունը, պետություններին թույլ տալիս հաղթահարել ձգնաժամերն ու կանխել իշխանության մարմինների փլուզումը: Մեծ տարածում գտան հատկապես այն հետազոտությունները, որոնք ուղղված էին կայունության և արդիականացման միջև առկա կապերի բացահայտմանը (Mirzoyan, 2024, էջ 67):

Ժամանակակից քաղաքագիտական գրականության մեջ պետության քաղաքական և հասարակական կայունության ուսումնասիրության առավել համընդգրկուն մոտեցումները համարվում են սոցիալական փոփոխության ֆունկցիոնալ տեսությունը, սիներգետիկայի տեսությունը և համակարգային մոտեցումը: Հատկապես կարևոր է Թալբոթ Պարսոնսի սոցիալական փոփոխության ֆունկցիոնալ տեսությունը, որն առաջարկում է հասարակական կայունության ամբողջական վերլուծություն: Իր հասարակության հայտնի մոդելում՝ Պարսոնսը սոցիալական համակարգը որպես կառուցվածք բնութագրելու համար օգտագործում է «կայունություն» հասկացությունը, որը տվյալ պարագայում համարժեք է «կայուն հավասարակշռությանը»: Վերջինս կարող է արտահայտվել թե՛ ստատիկ, և թե՛ դինամիկ ձևերով: Ավելին, ըստ Պարսոնսի, կայունությունը կոնկրետ համակարգի ներսում գործընթաց է, որն ապահովվում է համակարգի ենթահամակարգերի միջև մուտքային և ելքային տվյալների փոխանակմամբ, ինչպես նաև համակարգի և արտաքին միջավայրի միջև կապերի միջոցով (Parsons, 1961, էջ 55): Այսպիսով, ըստ Պարսոնսի, համակարգի կայունությունը հնարավոր է, երբ գործում է արժեքների և նորմերի որոշակի ամբողջություն: Սիներգետիկայի տեսությունն էլ նոր մոտեցում է առաջարկում կայուն և անկայուն գործընթացների փոխհարաբերությունների ուսումնասիրության համար: Այն կենտրոնանում է ինքնակազմակերպման վրա՝ բացատրելով բաց համակարգերում կայուն կառուցվածքների ձևավորման մեխանիզմները (Rizaev, 2023, էջ 318–319): Տեսությունը հիմնված է այն գաղափարի վրա, որ բոլոր համակարգերը ենթարկվում են զարգացման ընդհանուր օրենքների, որտեղ քառսն ու կարգուկանոնը սերտորեն կապված են: Հետևաբար, սոցիալական համակարգերի զարգացումը կանխորոշված չէ. դրանք կարող են քառսից անցնել

հնարավոր տարբեր վիճակների և գտնել ինքնակազմակերպման առավել արդյունավետ ձևը: Համակարգային մոտեցումն էլ փորձում է համընդհանուր տեսանկյունից բացատրել քաղաքական կայունության էությունը: Այն ընդգծում է, որ համակարգերի զարգացումը որպես բարդ և օրգանապես ամբողջական համակարգերի, տեղի է ունենում բարդության և կազմակերպվածության մակարդակի աճի միջոցով, ինչի արդյունքում առաջանում է ավելի բարձր կարգուկանոն: Այս մոտեցման շրջանակում կայունությունը չի սահմանափակվում միայն սոցիալական խմբերի շահերի համընկմամբ կամ բախումներով. այն կախված է նաև հակասությունների հաղթահարման մեխանիզմներից և շահերի բախումների կարգավորման եղանակներից: Այլ կերպ ասած՝ քաղաքական կայունության պահպանումը պայմանավորված է ոչ միայն համաձայնությամբ, այլ նաև կոնֆլիկտի արդյունավետ կառավարմամբ:

Պետության քաղաքական կայունությունը համարվում է քաղաքագիտության կիրառական խիստ կարևորություն ունեցող ուղղություններից մեկը, իսկ քաղաքագիտական ուսումնասիրություններում բավականին մեծ տեղ է հատկացվում դրա պրակտիկ հետազոտությանը: Տարիներ շարունակ քաղաքագետները բանավիճել են քաղաքական կայունության սահմանման և չափման մեխանիզմների շուրջ: Առավել ավանդական մոտեցումները հիմնական շեշտադրումը դնում էին արդյունքների վրա՝ հեղաշրջումների քանակ, իշխող քաղաքական ուժի պաշտոնավարման ժամկետ, բողոքի ակցիաների բացակայություն: Իսկ արդեն 20-րդ դարի վերջին շեշտադրումը փոխվեց գործընթացների վրա: Հետազոտողներին ավելի հետաքրքրում էր, թե ինչպես են քաղաքական համակարգերը հաղթահարում առկա մարտահրավերները: Այդուհանդերձ, մինչ օրս մասնագիտական գրականության մեջ չկա «քաղաքական կայունություն» եզրույթի մեկ միասնական սահմանում, չնայած այդ սահմանումներից շատերում առկա ընդհանրություններին: Ընդ որում, քաղաքագետների համար բարդությունը կայանում է նրանում, որ պետք է տալ այնպիսի միասնական սահմանում, որը, առաջինը, քաղաքական կայունությունը կսահմանի իր կառուցվածքային ու ֆունկցիոնալ ասպեկտներով հանդերձ ու, երկրորդը, այն կներառի վստահելի ցուցիչներ, որոնք հնարավորություն են տալիս համեմատել քաղաքական տարբեր համակարգեր: Հենց այս հանգամանքն է, որ ուսումնասիրությունների բաց դաշտ է ստեղծում հետազոտողների համար:

Հայկական քաղաքագիտական գրականության մեջ այդ պակասը ևս խիստ զգացվում է: Քչերից մեկը, որն անդրադարձել է քաղաքական կայունության սահմանման հարցին Իշխան Բալյանն է: Նա իր «Քաղաքական կայունության հարցի շուրջ» հոդվածում առաջ է քաշում քաղաքական կայունության մի քանի սահմանում: Այսպես, հեղինակի պնդմամբ, քաղաքական կայունությունը տվյալ համակարգի ընդունակությունն է երկարաժամկետ ժամանակահատվածում գործառել և պահպանել իր ամբողջականությունը, առանց կտրուկ փոփոխությունների (Բալյան, 2004, էջ 3): Հեղինակի մեկ այլ սահմանման համաձայն՝ քաղաքական կայունությունը հասարակության քա-

ղաքական կյանքի բնական վիճակն է, որը դրսևորվում է հասարակության մեջ առկա քաղաքական բոլոր ինստիտուտների կայուն գործունեության մեջ՝ իրավական, քաղաքական, սոցիալական ու բարոյական բոլոր նորմերի պահպանմամբ: Նա այն կարծիքն է, որ քաղաքական կայունությունը պետությանն ու դրա հասարակական-քաղաքական համակարգին հնարավորություն է տալիս արդյունավետորեն գործել ու զարգանալ՝ պահպանելով իր ընդհանուր կառուցվածքը:

Ընդհանուր առմամբ, հատկապես արևմտյան մասնագիտական գրականության մեջ պետության քաղաքական կայունության սահմանումները կարելի է բաժանել մի քանի խմբերի: Քաղաքական տեսաբանների մի մասը քաղաքական կայունության սահմանումը տալիս է՝ ընդգծելով դրա ինչ-որ գործոններից կախված լինելու հանգամանքը, որոնք, ըստ նրանց, կարևոր են:

Ամենատարածված սահմանումների խմբերից մեկը պետության քաղաքական կայունությունը դիտարկում է որպես իրավիճակ, որի պարագայում բացակայում են ներկոնֆլիկտային իրավիճակների օջախները, իշխանության փոփոխության պարագայում բացակայում է բռնի, ագրեսիվ վարքագիծը կամ էլ չեն գրանցվում անսպասելի փոփոխություններ (Баталов, 2023, էջ 16): Իվո և Ռոզալինդ Ֆայերաբենդները իրենց սահմանման մեջ հիմնվում են հենց այս սկզբունքի վրա. պետության քաղաքական կայունությունը ցույց է տալիս «քաղաքական համակարգի շրջանակներում անհատների կամ խմբերի կողմից այլ խմբերի կամ պետական ապարատի պաշտոնյաների դեմ ուղղված ագրեսիայի աստիճանը <...>» կամ էլ հակառակը (Feierabend, 1966, էջ 250): Սահմանումից ստացվում է, որ ինչքան ցածր է ագրեսիայի աստիճանը, այնքան քաղաքական կայունության մակարդակը բարձր է և հակառակը:

Նմանատիպ մոտեցում են ցուցաբերում նաև Ֆրենք Բիլին իր «Կայունություն և ձգնաժամ. մտահոգություններ ժողովրդավարության սպառնալիքների վերաբերյալ» հոդվածում, Քիթ Դաուդինգը և Ռիչարդ Քիմբերն իրենց «Քաղաքական կայունության նշանակությունն ու կիրառումը» աշխատությունում՝ պետության քաղաքական կայունություն հասկացությունը կապակցելով իշխանությունների կարողությունների ու ռեսուրսների հետ, որոնց միջոցով նրանք կարողանում են չեզոքացնել քաղաքական համակարգին ուղղված սպառնալիքները: Մասնավորապես, Բիլին պետության քաղաքական կայունությունը բնորոշում է սոցիալական համակարգի վերացման իրական սպառնալիքի պարագայում պետության ինքնապահպանման կարողությամբ (Bealey, 1987, էջ 687): Այս տրամաբանության մեջ մեկ այլ մոտեցման համաձայն էլ՝ պետության քաղաքական կայունությունը կապված է քաղաքական համակարգի ապակայունացման վախերի հետ, որը գտնվելով ինչ-որ սպառնալիքի տակ, կարող է ձևավորել քաղաքացիների արժեքները և ապագայի նկատմամբ վստահությունը (Kuzenbayev, 2023, էջ 1-2): Մի փոքր այլ տրամաբանությամբ է շարժվում Լ. Պերլիկովսկին: Նա պետության քաղաքական կայունությունը դիտարկում է որպես պոտենցիալ: Նրա կարծիքով՝ քաղա-

քական կայունությունը լոկ փոփոխությունների բացակայությունը չէ, այլ դրանք ընկալելու ու դրանք սահուն կառավարելու իշխանության ունակությունը (Perlikowski, 2021, էջ 229):

Երկրորդ խմբի սահմանումները հիմնավորում են, որ պետության քաղաքական կայունությունը պետք է ապահովվի երկրում գործող իշխանության կառավարման շարունակականությամբ: Նման մոտեցում են առաջ քաշում Արթուր Բենքսը, Ռոբերտ Թեքսթորը, Արթուր Գոլդբերգը, Էքարթ Ցիմերմանը և այլք: Այս մոտեցման կողմնակիցների կարծիքով՝ պետության քաղաքական կայունությունը որոշակի ժամանակահատվածում կոնկրետ իշխանության գործունեությունն է, իսկ ավելի կոնկրետ այդ իշխանության՝ փոփոխվող իրողություններին հաջողությամբ հարմարվելու ու դիմակայելու կարողությունը: Այսինքն՝ երկու երկրներից առավել կայուն կդիտարկվի այն երկիրը, որի գործող կառավարությունը առավել երկար է գտնվում իշխանության դեկին: Մեկ այլ սահմանման համաձայն էլ՝ պետության քաղաքական կայունությունը բնորոշվում է որպես կառավարության հաճախակի փոփոխությունների, սոցիալական անկարգությունների, քաղաքական բռնության և քաղաքականության անկանխատեսելիության բացակայություն (Khan, 2016, էջ 91): Վերջինս նախորդ և այս մոտեցումների համադրություն է: Այս առումով, սակայն, տեղին է նշել, որ պետության քաղաքական կայունությունն ավելի լայն կատեգորիա է, որը չի ասոցացվում միայն պետությունների առաջին դեմքերի կամ իշխող էլիտայի հետ: Մեծ հաշվով դա կապված է քաղաքական ինստիտուտների գործառնության և, ընդհանուր առմամբ, քաղաքական համակարգի հետ: Ժամանակակից համեմատական հետազոտությունները վկայում են, որ շատ դեպքերում քաղաքական համակարգի կայունությունը բնավ կախված չէ միայն քաղաքական վարչակարգից ու առավել ևս դրա ժողովրդավարության մակարդակից (White, 2017, էջ 5):

Հաջորդ հաճախ հանդիպող մոտեցումը պետության քաղաքական կայունության դիտարկումն է լեգիտիմ սահմանադրական կարգի պահպանման պրիզմայով: Այսինքն, այդ կայունությունը բնորոշվում է «լեգիտիմություն» հասկացությամբ: Այս մոտեցման սահմանումների հիմքում այն գաղափարն է, որ իշխող ուժը պետք է կարողանա պահպանել սահմանադրական կարգը, արդյունավետ իրականացնել քաղաքականությունը և ապահովել կայուն ու շարունակական կառավարում՝ պահպանելով հասարակության վստահությունը (Vaghamshi, 2025, էջ 53), (Gao, 2023, էջ 2): Ստանիսլավ Բիլյուզան նշում է, որ այս դեպքում առաջին պլան է մղվում առկա կարգը պահպանելու ձգտումը՝ հասարակությանը պաշտպանելով հնարավոր պատերազմներից, հակամարտություններից և հեղափոխություններից (Билкога, 2018, 51): Բիլյուզայի կարծիքով՝ «լեգիտիմություն» կատեգորիան աստիճանաբար վերածվում է «քաղաքական կարգ» կատեգորիայի: Ընդ որում՝ քաղաքական կարգ ասելով տվյալ համատեքստում ի նկատի են առնվում քաղաքական հարաբերությունների կազմակերպվածությունը, ֆունկցիոնալությունը և կայունությունը: Դոնալդ Սիրինգը հավելում է, որ այս մոտեցման զարգացման հաջորդ փուլում քաղաքագետները «կարգ» կատեգորիայից անցնում են

բնակչության կողմից տվյալ քաղաքական համակարգին և դրա արժեքներին աջակցելուն (Searing, 1986, էջ 348): Հաշվի առնելով Բիլյուզայի և Սիրինգի մոտեցումները՝ փաստացի ստացվում է, որ սա փակ շրջապտույտ է, որտեղ լեգիտիմությունը բերում է կարգի, կարգը՝ բնակչության կողմից քաղաքական համակարգին առավել մեծ աջակցությանը, իսկ շրջապտույտում որևէ խախտում կարող է հանգեցնել տվյալ հասարակությունում քաղաքական կայունության խաթարմանը՝ ընդհուպ մինչև իշխանափոխության: Այդուհանդերձ, մոտեցման ամենահայտնի ներկայացուցիչը Սեմուել Հանթինգթոնն է: Պետության քաղաքական կայունության վերաբերյալ Հանթինգթոնի բանաձևը պարզ է՝ քաղաքական կայունության առկայության պարագայում բացակայում է բռնությունը ու գործում է լեգիտիմ, արդյունավետ քաղաքական իշխանություն: Փաստացի, Հանթինգթոնի պնդմամբ, այս կամ այն երկրում քաղաքական կայունությունը հնարավոր է, եթե չկան բացասական (կոնկրետ այս պարագայում՝ բռնություն) ու առկա են դրական գործոններ (տվյալ դեպքում՝ լեգիտիմությունն ու իշխանության գործունեության արդյունավետությունը) (Huntington, 1968, էջ 1): Ընդհանուր առմամբ Հանթինգթոնը մեծ կարևորություն է տալիս քաղաքական կարգին՝ որպես կայունության հիմնարար ասպեկտի: Նա նշում է, որ քաղաքական կարգն անհրաժեշտ է տնտեսական զարգացման, սոցիալական առաջընթացի ու անձնական ազատությունների համար:

Քաղաքական կայունությունը որպես արտաքին և ներքին փոփոխությունների արձագանքի պետության կարողություն

Մի խումբ գիտնականներ էլ պետության քաղաքական կայունությունը վերլուծում են համակարգի՝ արտաքին և ներքին փոփոխություններին արձագանքելու կարողության դիտակետից: Այդ տեսաբանների թվում են Գաբրիել Ալմոնդը, Դևիդ Իսթոնը, Թալքոթ Պարսոնսը և ուրիշներ: Պարսոնսը, ուսումնասիրելով սոցիալական համակարգերի կայունության հարցերը, նշել է, որ համակարգը կայուն է կամ գտնվում է հարաբերական հավասարակշռության մեջ, եթե դրա կառուցվածքի և դրա ներսում տեղի ունեցող գործընթացների ու շրջապատող աշխարհի միջև փոխհարաբերությունների արդյունքում համակարգի կառուցվածքն էական փոփոխություններ չի կրում (Parsons, 1991, էջ 18): Այսինքն, Պարսոնսը հասարակությունը տեսնում էր որպես բարդ համակարգ, որը ձգտում է հավասարակշռության: Նրա կարծիքով՝ պետության քաղաքական կայունությունը վիճակ է, երբ քաղաքական համակարգը ունակ է արդյունավետորեն կառավարել՝ վերացնելով լարվածությունը, վերահսկելով բախումները և կանխելով սոցիալական կարգի վրա դրանց բացասական ազդեցությունը: Ալմոնդն էլ պետության քաղաքական կայունությունն ընկալում էր որպես ժամանակի ընթացքում քաղաքական համակարգի հիմնական մոդելների պահպանման կարողություն: Իր աշխատություններից մեկում նա քննարկում է «համակարգային կայունությունը» ու դրա կապը պետության քաղաքական կայունության հետ: «Համակարգա-

յին կայունություն ասելով՝ մենք պարզապես նկատի ունենք համակարգի պահպանումը որպես այդպիսին: Դա համակարգի շարունակական կարողությունն է գործել և պահպանել իր ամբողջականությունը՝ շրջապատող աշխարհի հետ հարաբերվելիս: Սա չի նշանակում, որ համակարգը չի փոփոխվում. այն փոխվում է որոշակի սահմաններում և որոշակի ձևով, որոնք չեն խաթարում դրա ինքնությունը որպես համակարգ», - նշում է Ալմոնդը (Almond, 1970, էջ 19): Այս միտքն ընդգծում է Ալմոնդի այն տեսակետը, որ քաղաքական կայունության պայմաններում համակարգի ներսում փոփոխությունները հնարավոր են, եթե պահպանվում են դրա հիմնական բնութագրերը: Իսթոնն ևս անդրադառնում է պետության քաղաքական կայունության հարցին և առաջարկում դրա վերաբերյալ իր մոտեցումները: Նա ևս քննարկում է «համակարգային կայունությունը» ու դրա կապը պետության քաղաքական կայունության հետ: Իսթոնի կարծիքով՝ կայուն քաղաքական համակարգը ստատիկ չէ, այլ ավելի շուտ ունակ է արձագանքել և հաղթահարել տարբեր մարտահրավերներ (Easton, 1965, էջ 349): Այսինքն՝ քաղաքական կայունություն ասելով ամերիկացի քաղաքագետը հասկանում էր որպես քաղաքական համակարգի՝ ժամանակի մեջ պահպանվելու կարողությունը, ներքին և արտաքին փոփոխվող պայմաններին հարմարվելը: Փաստացի այս հավաքական սահմանումն ընդգծում է համակարգի հարմարվելու և զարգանալու կարողությունը՝ միաժամանակ պահպանելով իր հիմնական գործառնությունները:

Որոշ քաղաքագետներ էլ առաջ են քաշում կայունության դասակարգման սեփական մոտեցումները: Նրանցից ոմանք դասակարգումն իրականացնում են հասարակության զարգացման գնահատման հիման վրա՝ հաշվի առնելով դրան հասնելու միջոցները: Օրինակ՝ ամերիկացի քաղաքագետ Ջոն Յավորսկին սահմանազատում է անցկացնում ժողովրդավարական և նվազագույն կայունության միջև: Ըստ նրա՝ քաղաքական կայունության նվազագույն մակարդակը պետության տարածքում քաղաքացիական պատերազմների կամ զինված հակամարտության այս կամ այն ձևի բացակայությունն է (Jaworsky, 1995, էջ 3-4): Փոխաբենը, ժողովրդավարական կայունությունը պայմանավորված է ժողովրդավարական կառույցների՝ փոփոխվող հանրային տրամադրություններին արագ արձագանքելու ունակությամբ, որը միտված է հասնելու քաղաքացիական խաղաղության և քաղաքացիական համաձայնության: Ստացվում է, որ կայունությունն այս տեսանկյունից դիտարկվում է որպես ժողովրդավարության գործառնություն, որն իր մեջ ներառում է նաև պետության կառավարմանը քաղաքացիների մասնակցությունը:

Քաղաքագիտական գրականության մեջ դասական են Կլոդ Ալկեի և Լեոն Հուրվիցիի՝ պետության քաղաքական կայունության վերաբերյալ ուսումնասիրությունները, քանի որ նրանք ևս ընդհանուր մոտեցումներից տարբերվող այլ մոտեցում են առաջ քաշում: Իր աշխատություններում Ալկեն քննադատում է կայունությունը վարչակարգերի պարզ գոյատևման հետ նույնականացնելու միտումը, ինչպես դա անում էին երկրորդ խմբի գիտնականները: Ըստ նրա՝ նմանատիպ նեղ սահմանումն անտեսում է հասարակության մեջ առկա

սոցիալական և տնտեսական լարվածությունը, որը երկարաժամկետ հեռանկարում կարող է հանգեցնել անկայունության (Ake, 1975, էջ 280): Փոխարենը, Ակեն տալիս էր կայունության ավելի համապարփակ պատկերացում՝ ընդգծելով օրինականության, սոցիալական արդարության և տնտեսական զարգացման կարևորությունը: Նա պնդում էր, որ իսկապես կայուն քաղաքական համակարգը պետք է արձագանքի իր քաղաքացիների կարիքներին և ձգտումներին՝ ապահովելով նրանց ներգրավվածությունը և ռեսուրսներին արդար հասանելիությունը: Հուրվիցն էլ քաղաքական կայունությունը սահմանում է հետևյալ կերպ. «Կայուն պետական կառուցվածքը դիտարկվում է որպես խաղաղ, օրինապահ հասարակարգ, երբ որոշումների կայացումը և սոցիալ-քաղաքական փոփոխությունները ինստիտուցիոնալացված և ֆունկցիոնալ ընթացակարգերի արդյունք են, և ոչ թե անօրեն գործընթացների, որոնց պարագայում խնդիրները լուծվում են հակամարտությունների և ագրեսիայի միջոցով» (Hurwitz, 1973, էջ 449): Փաստացի, նա առաջ է քաշում 5 գործոն, որոնք հնարավորություն են տալիս հասկանալ քաղաքական կայունության առկայությունը. բռնության բացակայություն, իշխանության պաշտոնավարման տևողության երկարություն, լեգիտիմ սահմանադրական վարչակարգի գոյություն, կառուցվածքային փոփոխությունների բացակայություն և բազմաշերտ հասարակություն: Հուրվիցը շեշտում է, որ այս մոտեցումները կարող են համատեղ կիրառելի լինել՝ քաղաքական համակարգի կայունությունը վերլուծելիս:

Ուսումնասիրելով պետության քաղաքական կայունության վերաբերյալ մոտեցումները և հասկանալով դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները՝ կարելի է տալ այն սահմանման մոտավոր կառուցվածքը, որը կիրառելի կլինի հետազոտության հարցի պարագայում: Այսպես, այդ սահմանումը, նախ և առաջ, պետք է լինի բազմաչափ, քանի որ պետության քաղաքական կայունությունը ներառում է ինստիտուցիոնալ, սոցիալական, լեգիտիմ և ադապտիվ ասպեկտներ, որոնք պետք է լինեն չափելի: Բացի դա, սահմանումը պետք է լինի դինամիկ ու համակարգային, քանի որ այն պետք է արտահայտի ներքին և արտաքին մարտահրավերներին արձագանքելու համակարգի բնույթը: Այն պետք է լինի նաև գիտական մոտեցումների վրա հիմնված: Եվ վերջապես՝ էմպիրիկ հետազոտությունների տեսանկյունից սահմանման ցանկացած կոմպոնենտ կարող է վերածվել քաղաքական կայունության չափման առանձին ցուցիչի (քանակական կամ որակական), որոնք կիրառելի կլինեն քաղաքական տարբեր համակարգերի և համատեքստերի համար:

Եզրակացություն

Փաստացի, սահմանումների խմբերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ մասնագիտական գրականության մեջ «պետության քաղաքական կայունություն» եզրույթի վերաբերյալ չկա միասնական և համընդհանուր մոտեցում, որը, հատկապես, կարտացոլի քաղաքական կայունության բազմաչափ բնույթը, կապահովի վերլուծական հստակություն և կիրառելի

կլինի քաղաքական տարբեր համակարգերում ու համատեքստերում էմպիրիկ հետազոտությունների համար: Ավելին, այդ բացը խիստ առկա է հատկապես հայալեզու քաղաքագիտական գրականության մեջ: Նման սահմանումը պահանջում է ոչ թե կայունության առանձին ասպեկտների վրա շեշտադրման իրականացում, այլ բուն քաղաքական համակարգի կայունության և ֆունկցիոնալության շեշտադրում:

Ուստի, հետազոտության հարցի տեսանկյունից ընդունելի սահմանումը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. քաղաքական կայունությունը պետության ադապտիվ ինքնակարգավորման համակարգային ունակությունն է, երբ ներքին և արտաքին փոփոխությունների ազդեցության պարագայում այն շարունակում է գործել արդյունավետորեն, բնորոշվում է որոշակի ամբողջականությամբ և ֆունկցիոնալությամբ, հասարակության անդամների բավարարվածությամբ, ինչպես նաև հասարակության զարգացման նպատակների և գործընթացների շուրջ սոցիալ-քաղաքական հիմնական ուժերի մոտ առկա կոնսենսուսով: Փաստացի սա ոչ թե նոր սահմանում է, այլ պետության քաղաքական կայունության վերաբերյալ տարբեր պատկերացումների և մոտեցումների համատեղում մեկ սահմանման մեջ: Այն միջգիտակարգային է, քանի որ միավորում է քաղաքագիտության, հոգեբանության, և սոցիոլոգիայի մեջ կիրառվող երևույթները: Սահմանման նորարական մոտեցումը թերևս «ադապտիվ ինքնակարգավորում»-ն է, որը գալիս է հոգեբանության մեջ կիրառվող կայունության տեսությունից (Resilience theory): Ադապտիվն այս համատեքստում արտահայտում է ընթացիկ ցնցումներից և փոփոխություններից համակարգի դասեր քաղելը՝ ապագա նմանատիպ իրավիճակները հաղթահարելու համար: Իսկ ինքնակարգավորումը հնարավորություն է տալիս կայունության ապահովման նպատակով համակարգի ներսում կատարել փոփոխություններ, առանց արտաքին միջամտության: Հենց այս ադապտիվ ինքնակարգավորումն է, որը փորձում է հասկանալ, թե ինչպես է քաղաքական համակարգը հաղթահարում առկա մարտահրավերները:

Կայունությունը սահմանելով ադապտիվ ինքնակարգավորման համատեքստում՝ սահմանումը դուրս է գալիս իրավական կարգի վերաբերյալ պատկերացումների ստատիկ շրջանակից և ներառում դիմադրողականության ու ադապտացման համակարգի կարողությունները: Հենց այս համատեքստում է, որ սահմանումն օգնում է լուծել նաև քաղաքագիտության հիմնարար խնդիրներից մեկը՝ իրապես կայուն համակարգը տարբերել ստաց-նացիայի մեջ գտնվողից՝ սրա միջոցով վերլուծելով ինքնակարգավորման համակարգի ունակությունը: Սա նշանակում է, որ սահմանումը կիրառելի է նաև քաղաքական տարբեր համակարգերի պարագայում, քանի որ կապված է կառավարման որևէ հատուկ ձևի հետ: Եվ բացի այդ, սահմանումը նաև համադրելի է բազմաչափ մեթոդաբանության հետ: Այն հետազոտողներին հնարավորություն է տալիս կենտրոնանալու կայունության մեխանիզմների վրա, այլ ոչ թե միայն անկայունության պատճառների: Զուտ քանակական չափում անելուց զատ՝ հետազոտողները կարող են անել նաև որակական գնահատում՝ ուսումնասիրելով համակարգի կարողությունը դիմակայելու

այն մարտահրավերներին, որոնք կարող են դրա ներսում ցնցումներ առաջացնել:

Օգտագործված գրականության ցանկ

- Բալյան, Ի. (2004). «Քաղաքական կայունության հարցի շուրջ», «Բանբեր Երևանի համալսարանի», 1 (112), Երևան, URL: http://www.old.ysu.am/files/01I_Balyan.pdf:
- Баталов, О., Паламарчук, М. (2023). 'Поняття Політичної Стабільності Та Політичних Конфліктів', Вісник Харківського національного університету імені В. Н. Каразіна, серія «Питання політології», 2023, випуск 44. URL:<https://periodicals.karazin.ua/politology/article/view/23798/21675>
- Билюга, С. (2018). Политическая стабильность: Основные подходы к анализу устойчивости политических систем. *Век глобализации*. 2/2018, URL: <https://cyberleninka.ru/article/n/politicheskaya-stabilnost-osnovnye-podhody-k-analizu-ustoychivosti-politicheskikh-sistem>.
- Гаджиев, Х., Семченков, А. (2020). "Индекс устойчивости политической системы: опыт измерений в трех странах", PolitBook, 1, URL: <https://cyberleninka.ru/article/n/indeks-ustoychivosti-politicheskoy-sistemy-opyt-izmereniy-v-treh-stranah>.
- Ake, C. (1975). A Definition of Political Stability. *Comparative Politics*. 7(2), URL: <https://www.jstor.org/stable/421552>.
- Almond, G. (1970). *Political Development: Essays in Heuristic Theory*. Boston, Little Brown.
- Bealey, F. (1987). Stability and Crisis: Fears About Threats to Democracy. *European Journal of Political Research*, 15(6).
- Easton, D. (1965). *A Systems Analysis of Political Life*. Chicago, University of Chicago Press.
- Feierabend, I. & Feierabend, R. (1966). Aggressive Behaviors Within Politics, 1948-1962: A Cross-National Study. *The Journal of Conflict Resolution*, 10(3), URL: <https://www.jstor.org/stable/173000>.
- Gao, R. & Liu, H. (2023). Political stability as a major determinant of the Covid-19 pandemic outcomes. *Heliyon*, Vol. 9, Issue 10.
- Hansson, S. & Helgesson, G. (2003). What Is Stability? *Synthese*, 136(2), URL: <https://www.jstor.org/stable/20118329>.
- Huntington, S. (1968). *Political Order in Changing Societies*. New Haven, CT: Yale University Press.
- Hurwitz, L. (1973). Contemporary Approaches to Political Stability. *Comparative Politics*, 5(3), URL:<https://www.jstor.org/stable/421273>.
- Jaworsky, J. (1995). *Ukraine: Stability and instability*. Washington D.C., Institute for National Strategic Studies, National Defense University, URL: <https://www.files.ethz.ch/isn/23520/mcnair42.pdf>.
- Khan, A.A. (2016). The Influence of Political and Economic Stability on Foreign Direct Investment Decisions: A Study. *Journal of Emerging Technologies and Innovative Research*. Volume 3, Issue 1, URL:<https://www.jetir.org/papers/JETIR1701A08.pdf>
- Kuzenbayev, N. & Pelizzo, R. (2023). Political Stability, Confidence in the Future, and Val-

- ues. *Social Sciences*, 12(2), URL:<https://www.mdpi.com/2076-0760/12/2/82?>
- Mirzoyan, A. (2024). Theoretical Approaches to Political Stability: How Do Theories Interpret the Factors Influencing It? *Journal of Political Science: Bulletin of Yerevan University*, 3(2(8)), 65–80. <https://doi.org/10.46991/JOPS/2024.3.8.065>
- Parsons, T. (1961). An Outline of the Social System. In *Theories of Society: Foundations of Modern Sociological Theory*. Edited by Talcott Parsons, Edward Shils, Kaspar D. Naegle, and Jesse R. Pitts, vol. 1.
- Parsons, T. (1991). *The Social System*. London, Routledge, URL: <https://voidnetwork.gr/wp-content/uploads/2016/10/The-Social-System-by-Talcott-Parsons.pdf>.
- Perlikowski, L. (2021). *Political Stability as a Phenomenon and a Potential*, Athenaeum–Polish Political Science Yearbook. URL:<https://bibliotekanauki.pl/articles/1860401>
- Rizaev, I. (2023). Synergetics: The Path from General Systems Theory to Self-Organization. *Global Scientific Review*, Volume 22, December 2023.
- Searing, D. (1986). A Theory of Political Socialization: Institutional Support and Deradicalization in Britain. *British Journal of Political Science*. 16(3).
- Vaghamshi, D. (2025). Impact Of Political Stability on Businesses Settling in a State in India. *Journal Of Humanities and Social Science*. Volume 30, Issue 1, Series 2 URL:<https://iosrjournals.org/iosr-jhss/papers/Vol.30-Issue1/Ser-2/I3001025362.pdf>
- White, S., McAllister, I. & Munro, N. (2017). Economic Inequality and Political Stability in Russia and China. *Europe-Asia Studies*. Vol. 69(1), URL: <https://www.tandfonline.com/doi/full/10.1080/09668136.2016.1270580#d1e284>.

Армен Мирзоян

Соискатель кафедры политологии Ереванского государственного университета

Эл. адрес: armen.mirzoyan@ysu.am, armenmirzoian@gmail.com

ТЕОРЕТИЧЕСКИЕ И МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ОСНОВЫ ОПРЕДЕЛЕНИЙ ПОЛИТИЧЕСКОЙ СТАБИЛЬНОСТИ ГОСУДАРСТВА

Данная статья посвящена проблеме определения политической стабильности государства в научной литературе и анализу различных подходов к её изучению. В статье рассматриваются историческая эволюция представлений о политической стабильности, более всеобъемлющие подходы к исследованию политической и социальной стабильности, особенности существующих определений политической стабильности государства, а также методологические различия между ними. Выявив отсутствие единого универсального определения политической стабильности государства, автор предлагает собственное определение, которое отражает многомерный характер политической стабильности, обеспечивает аналитическую ясность и может быть применено в эмпирических исследованиях в различных политических системах и контекстах.

Ключевые слова: Политическая стабильность государства, политическая система, политический режим, политическая власть, легитимность, теория систем, теория синергетики, системный подход, адаптивная саморегуляция.

Armen Mirzoyan

*Ph.D. student in the Department of Political Science
at Yerevan State University*

Email: armen.mirzoyan@ysu.am, armenmirzoiian@gmail.com

THE THEORETICAL AND METHODOLOGICAL FOUNDATIONS OF DEFINING THE POLITICAL STABILITY OF THE STATE

This article explores the problem of defining the political stability of the state within the scholarly literature and analyzes the diverse approaches to its conceptualization and study. It traces the historical evolution of perspectives on political stability, considers more comprehensive approaches to examining political and social stability, highlights the distinctive features of existing definitions of state political stability, and identifies the methodological differences among them. Recognizing the absence of a universally accepted definition, the author advances a formulation that captures the multidimensional nature of political stability, provides analytical clarity, and can be applied in empirical research across different political systems and contexts.

Key words: Political stability of the state, Political system, Political regime, Political power, Legitimacy, Systems theory, Synergistic theory, Systemic approach, Adaptive self-regulation

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2025 թ. ապրիլի 4-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2025թ. ապրիլի 8-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2025թ. հունիսի 11-ին:

Բագրատ Բագրատյան
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի հայցորդ
Էլ. հասցե՝ bsbagratyan@gmail.com

DOI: 10.53614/18294952-2025.1-88

**ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԶԱՐԳԱՅՄԱՆ ԴԻՏԱՆԿՅՈՒՆՆԵՐԸ**

Ազգային անվտանգությունը պետության ինքնիշխանության հիմնապատկերից է, որի ապահովումն ընդգրկում է ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործոնների համադրված ազդեցությունը: Այն դիտարկվում է որպես բազմաշերտ համակարգ, որտեղ աշխարհաքաղաքական միջավայրի, սոցիալ-տնտեսական զարգացման և պետական ինստիտուցիոնալ կարողությունների փոխազդեցությունը ձևավորում են անվտանգության ապահովման իրական մակարդակը:

Հետազոտության նպատակն է վերլուծել ազգային անվտանգության ինստիտուտի տեսական հիմքերը, դրա ձևավորման ու զարգացման առանձնահատկությունները, ինչպես նաև գնահատել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության կառուցակարգերի կատարելագործման և առանձին ենթաոլորտների արդյունավետության բարձրացման հնարավորությունները:

Հիմնաբառեր. Ազգային, անվտանգություն, Հայաստանի Հանրապետություն, տեսություն, քաղաքականություն, պետություն, հասարակություն:

Ներածություն

Ազգային անվտանգությունը ցանկացած պետության ինքնիշխանության հիմքն է, որի ապահովումը պետության կարևորն գործառնություններից է: Այն պետությունները, որոնք չեն կարողանում ապահովել իրենց ազգային անվտանգությունը, ինքնաբերաբար կորցնում են ինքնիշխանությունը և նրանց արտաքին ու ներքին քաղաքականությունը սահմանվում է այլ հզոր պետությունների կամ վերազգային կազմակերպությունների ուղղորդմամբ:

Ազգային անվտանգությունը անհրաժեշտ է դիտարկել որպես բազմաշերտ համակարգ, որի ձևավորման վրա ազդում են ինչպես արտաքին՝ աշխարհաքաղաքական գործոնները, այնպես էլ ներքին՝ սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը: Անվտանգության ապահովման հիմքում ընկած է պետության համապարփակ հզորությունը, որը արտահայտվում է նրա մարդկային, ինստիտուցիոնալ և տնտեսական ռեսուրսների համադրմամբ: Բայց այս դրույթը չի նշանակում, որ տվյալ կապը գծային է և դետերմինացված: Այսինքն, պետության զարգացվածության մակարդակը դեռևս չի երաշխավորում անվտանգության քաղաքականության բարձր մակարդակ: Որպես հիմնական պատճառ ընդգծվում է այն, որ արդի պայմաններում անվտանգության թե ազգային, թե միջազգային մակարդակներում մարտահրավերներն ու սպառնալիքներն ավելի են ընդլայնվում՝ ընդգրկելով նաև խառնածին բնույթի աղբյուրներ (քաղաքականից սոցիալ-տնտեսական, տեղեկատվականից կիբեռտիրոյթ, բնապահպանականից պարենային և այլ շրջանակներ) (Peltriaux Emmanuel, 2023, էջ 49): Ընդ որում, եթե ավանդական սպառնալիքները հիմնականում պետությունների գործողությունների հետևանք են, ապա նոր տիպի սպառնալիքների հետևում հաճախ կանգնած են ոչ պետական կազմավորումներն ու կազմակերպությունները, ինչպես նաև առանձին անհատներ (Kelly Ph., 2016, էջ 210): Հետևապես, պետության զարգացման և անվտանգության ապահովման խնդիրները, ըստ էության ունեն հակադարձ ուղղվածություն. եթե առաջինը պահանջում է մշտական նորարարություններ, փոփոխություններ և այլն, ապա երկրորդը՝ հաստատուն վիճակ, ամեն տեսակ նորարարությունների (հատկապես՝ ռիսկային տարր պարունակող) սահմանափակում: Իհարկե, այս երկու գործընթացները ունեն ավելի բարդ դիալեկտիկական կապ (The role of NGOS in European governance, 2010, էջ 32): Հոդվածի թեմայի արդիականության համատեքստում հարկ է ընդգծել, որ Հայաստանի արդի անվտանգային միջավայրի առանձնահատկություններից բխող սպառնալիքների բնույթը, ազգային անվտանգության երաշխավորվածության վրա ազդող քաղաքական, ռազմական, տնտեսական, սոցիալական, հասարակական, մշակութային և մյուս բոլոր գործոններն ու գործընթացները ձևավորում են ոչ միայն անվտանգության քաղաքականության խնդիրը՝ դրանց դիմագրավման և չեզոքացման առումով, այլև անմիջական ազդեցություն են գործում անվտանգային կարողությունների զարգացման միտումների ու հնարավորությունների վրա:

Հոդվածում որպես հիմնական նպատակ առանձնացվում է ազգային անվտանգության ինստիտուտի հայեցակարգի ձևավորման, զարգացման փու-

լերը և արդի առանձնահատկությունների համատեքստում ՀՀ ազգային անվտանգության ապահովման կառուցակարգերի կատարելագործման, առանձին անվտանգային ենթաոլորտների արդյունավետության բարձրացման հնարավորությունների գնահատումը:

Նշված նպատակին հասնելու համար առանձնացվում են հետազոտական հետևյալ խնդրադրվող ուղղությունները.

- ուսումնասիրել ազգային անվտանգության ինստիտուտի և դրա երաշխավորման հայեցակարգի էվոլյուցիոն զարգացումները,
- ներկայացնել ազգային անվտանգության ապահովման հիմնական կառուցակարգերը և դրանց իրականացման մեթոդաբանական մոտեցումները,
- վերլուծել ՀՀ ազգային անվտանգության իրավաքաղաքական հիմքերի փուլային զարգացումները, այս համատեքստում ազգային շահերի արժևորման մոտեցումները, ինչպես նաև քաղաքականության կատարելագործմանն ուղղված կարգավորիչ և այլ փաստաթղթերի նորացման առաջարկներ:

Մեթոդ

Հետազոտության ընթացքում կիրառվել են ինչպես ընդհանուր գիտահետազոտական, այնպես էլ մասնավոր բնույթի մեթոդներ՝ ապահովելու վերլուծության բազմակողմանիությունն ու խորությունը: Ընդհանուր մեթոդներից առանձնացվել են դիալեկտիկական և համակարգային մոտեցումները, որոնք հնարավորություն են տվել դիտարկել ազգային անվտանգության ինստիտուտը որպես փոխկապակցված տարրերից բաղկացած ամբողջական համակարգ՝ նրա ներքին ու արտաքին գործոնների փոխազդեցության համատեքստում:

Մասնավոր մեթոդների շարքում օգտագործվել են իրավաքաղաքական վերլուծության, համեմատական, համակարգակառուցվածքային, պատմաիրավական և վիճակագրական գնահատման գործիքները, որոնք ապահովել են հետազոտության հստակեցումն ու գործնական կիրառելիությունը:

Հոդվածում համադրվել և վերլուծվել են մասնագիտական գրականության մեջ առկա տեսական մոտեցումները, պաշտոնական գնահատականներն ու դիրքորոշումները: Ուսումնասիրվել է ազգային անվտանգության ոլորտը կարգավորող նորմատիվ-իրավական փաստաթղթերը, իրականացվել է համեմատական վերլուծություն՝ արտասահմանյան առաջատար երկրների փորձի հիման վրա՝ բացահայտելու ազգային անվտանգության ապահովման քաղաքականության զարգացման միտումները և դրանց տեղայնացման հնարավորությունները ՀՀ-ում:

Ազգային անվտանգության ինստիտուտի էվոլյուցիոն առանձնահատկությունները. Ժամանակակից մարտահրավերները ՀՀ անվտանգային միջավայրի համար

Ազգային անվտանգության ապահովման հիմնարար նպատակն է ոչ միայն ազգի գոյապահպանության, պետականության, հասարակական-քաղաքական կյանքի ամրապնդման, զարգացման դեմ ուղղված առկա սպառնալիքներից պաշտպանությունը, այլև նախատեսի դրանք կանխարգելող միասնական ու համակարգված կառուցակարգեր: Ժամանակակից աշխարհում անվտանգությունը այլևս չի սահմանափակվում պետությունների միջև մրցակցության համատեքստում ազդեցության գոտիների տարանջատմամբ բնական ռեսուրսների հասանելիության ապահովման կամ միայն պետությունների միջև ավանդական շփումների և ռազմավարական հավասարակշռության պահպանմամբ (Շահվերդյան, 2024, էջ 36): Զանգվածային ոչնչացման զենքի հնարավոր կիրառման և մյուս նմանատիպ սպառնալիքների կողքին արագ տեմպերով աճել և զգալի են դառնում նոր տիպի մարտահրավերներ ու սպառնալիքներ՝ միջազգային ահաբեկչություն, քիմիական և կենսաբանական զենքերի տարածումն ու կիրառումը, կիբեռհանցավորությունը և այլն (Ayling, 2017, էջ 499):

Ժամանակակից ազգային անվտանգության տեսության հիմնական հասկացությունների վերլուծությունը և համեմատական գնահատումն նաև մեծ գործնական նշանակություն ունի: «Սպառնալիք», «վտանգ», «մարտահրավեր», «ռիսկ» հասկացությունների բազմիմաստ ու ոչ միանշանակ մեկնաբանությունները հաճախ հանգեցնում են անվտանգության համակարգի ռազմավարական առաջնահերթությունների աղճատման, քաղաքական որոշումների հակասականությանը և անվտանգության ապահովման նպատակների անհամաչափ բաշխմանը: Ազգային անվտանգության տեսական դաշտում այս հասկացությունները ձևավորում են անվտանգության համակարգի կառուցվածքային հիմքը՝ որպես ենթակարգեր առանձնացնելով ազգային շահերը, անվտանգության սպառնալիքները, ինչպես նաև դրանց չեզոքացմանն ու դիմակայելուն ուղղված պաշտպանական կարողությունները (Քոչարյան, 2012, էջ 73): Այս փոխկապակցված տարրերի ձիշտ սահմանումն ու տարբերակումը հնարավորություն են տալիս ապահովել ազգային անվտանգության ռազմավարության ամբողջականությունը, ռիսկերի կառավարման արդյունավետությունը և սպառնալիքների կանխարգելման նպատակային քաղաքականության ձևավորումը: Տեսագործական շրջանակներում բավականին տարածված՝ «վտանգ սպառնալիքի միջոցով» և «սպառնալիք վտանգի միջոցով» սահմանելու պրակտիկան հաճախ հանգեցնում է անվտանգության ապահովման համակարգի մասին ապատեղեկացմանը, ազգային ռեսուրսների օգտագործման անարդյունավետությանը, անձի, հասարակության ու պետության կենսականորեն կարևոր շահերին վնաս պատճառող իրական աղբյուրների քողարկմանը:

Կարևոր է ընդգծել, որ թե՛ ազգային անվտանգությունը, թե՛ դրա ապա-

հովմանն ուղղված քաղաքականությունը կրում է միջդիսցիպլինար բնույթ, քանի որ դրանք միավորում են քաղաքական, իրավական, սոցիալ-տնտեսական, ռազմական և տեղեկատվական բաղադրիչներ: Այս համակարգի կայունությունն ու արդյունավետությունը հնարավոր է միայն պետական կառավարման ամբողջական ներգրավման և հասարակական ու անհատական կարողությունների նպատակային համախմբման միջոցով:

«Ազգային անվտանգություն» հասկացությունն առաջին անգամ կիրառվել է 1904 թվականին ԱՄՆ Կոնգրեսին ուղղված նախագահ Դ. Ռուզվելտի ուղերձում: Ըստ ամերիկյան քաղաքագետների՝ ազգային անվտանգությունը երկրի ամբողջականությունը, քաղաքական, տնտեսական, սոցիալական և այլ խնդիրների լուծման, ինչպես նաև միջազգային կառույցներում որպես ինքնուրույնություն հանդես գալու կարողությունը պահպանելն է (US National Security, 1985, էջ 4): Սառը պատերազմի տարիներին ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունն անվտանգության ապահովումն ու սպառազինությունների մրցավազքն էր: Ուստի, այդ շրջանում անվտանգության ավանդական սահմանումը ենթադրում էր պետության ինքնիշխանության ապահովումը և այդպիսով նվազեցնում անվտանգության ամբողջական կոնցեպցիայի նշանակությունը՝ ընդամենը սահմանելով այն որպես «ուժի, իշխանության հոմանիշ» (Buzan, 1991, էջ 7):

Ներկայումս էլ արևմտյան իրավաքաղաքական փորձագիտական աղբյուրներում «ազգային անվտանգություն» եզրույթը գնահատվում է բնակչության ու երկրի տարածքի պաշտպանություն ցանկացած արտաքին սպառնալիքներից և պատասխան հարված հասցնելու կարողությունից: Ամերիկյան ավանդույթներում ռազմական ուժը անվտանգության էական բաղադրիչ է: ԱՄՆ-ն, որի համար ազգային անվտանգությունը ոչ միայն պաշտպանվածությունն է, այլ նաև հզորությունն ու ազգային շահի ապահովումը, հատուկ և կարևոր նշանակություն է տալիս բանակին: ԱՄՆ զինված ուժերը և ռազմական արդյունաբերությունը ծառայում են որպես ամերիկյան հզորության հիմք (Hartman, 2012, էջ 12): Հակառակ դեպքում ռազմական վտանգների առկայությունը համարվում է պետության հետաքրքրությունների գլխավոր սպառնալիք (Trager, Kronenberg, 1973, էջ 5-6): Հետևապես, սպառնալիքները կարող են ծագել թշնամական պետություններից, քաղաքական անկայունությունից, ահաբեկչությունից, լրտեսությունից, կիբեռպատերազմից, տեղեկատվական պայքարի գործողություններից և այլն: Այդ առումով անցյալի իրադարձությունները վերլուծելով և ապագայի համար ռազմավարական ուղեգիծ ձևավորելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև փոխկապակցված «ազգային շահերի բարդ համակարգը» (Էոնեստ, 2025, էջ 5):

Ազգային անվտանգությունը արևմտյան արժեհամակարգում ավանդաբար դիտարկվում է ժողովրդի և երկրի տարածքների պաշտպանություն ցանկացած տեսակի սպառնալիքից, ինչպես նաև վտանգավոր երևույթների և գործընթացների վրա արդյունավետորեն հակազդելու ունակություն, ինչը հիմնավորվում է ոչ միայն լեգիտիմության մենաշնորհի վրա հիմնված պետության առկայությամբ, այլև այնպիսի բնութագրիչներով, ինչպիսիք են՝

քաղաքական գործընթացների կայունությունը և կանխատեսելիությունը (Prisms and Policy: U.S. Security Strategy after the Cold War, 1994, էջ 39–40):

21-րդ դարասկզբին արտասահմանյան քաղաքագիտության շրջանակներում ընդգծվում է «համապարփակ անվտանգության» հայեցակարգը: Այն հատկապես մեծ տեսագործական արտահայտվածություն ստացավ 2022 թ. ռուս–ուկրաինական հակամարտության պայմաններում, որի արդյունքում առավել համընդգրկուն արժևորումներ ամրագրվեցին, օրինակ, ՆԱՏՕ-ի և դրա անդամ–պետությունների հավաքական գործողությունների գնահատումներում (Leoni Elisa, 2024, էջ 44): Համապարփակ անվտանգային կառուցակարգերում արդարացիորեն ներառվում են նաև ազգային շահերը պաշտպանելու իրավունքի գործընթացներով հավելյալ այնպիսի սուբյեկտների, ինչպիսիք են՝ քաղաքացիների խմբերը, ոչ կառավարական կազմակերպությունները, տեղական ինքնակառավարման մարմինները և այլն (Rothschild, 1995 էջ 3):

Արդի աշխարհակարգում «անվտանգություն» տերմինը իր ուրույն նշանակությունն ունի գրեթե բոլոր պետությունների ազգային շահերի ապահովման ռազմավարական դոկտրիններում: Չնայած այն հանգամանքին, որ դարաշրջանը հակված է դեպի գլոբալացում, համընդհանուր արժեքների կայացում, այնուամենայնիվ, ազգային անվտանգության համակարգի ձևավորումը, հստակեցումը յուրաքանչյուր պետության շահերի, ազգային արժեքների պաշտպանության, ինչպես նաև տնտեսական զարգացման համար էական և առաջնային դեր ունի (Աթոյան, 2014, էջ 12):

Վերջին տարիների աշխարհաքաղաքական զարգացումները, միջազգային և տարածաշրջանային իրադրության փոփոխությունները, անվտանգության և ռազմաքաղաքական ծավալվող փոփոխությունները անհրաժեշտություն են առաջացնում վերանայելու Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության, պաշտպանության և արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները, սպառնալիքներն ու առաջնահերթությունները: Տևական ժամանակ Հայաստանի Հանրապետությունում նույնպես ազգային անվտանգության ապահովման խնդիրը դիտարկվել է բացառապես ուժային բաղադրիչի կիրառման տեսանկյունից և առավելապես արտաքին սպառնալիքներին հակազդելու համատեքստում, որը գտնվել է որոշակիորեն «գերարժևորված» համատեքստում: Սակայն աշխարհաքաղաքական արդի գործընթացները սրընթաց փոփոխվում են, և այսօր ազգային անվտանգության ռազմավարության՝ բացառապես պաշտպանվածության միջոցով ապահովման հայեցակարգային մոտեցումը լիովին չի համապատասխանում անվտանգության ապահովման քաղաքականության ժամանակակից մոտեցումներին, ինչը ենթադրում է նաև ազգային անվտանգության ապահովման և սոցիալ–տնտեսական զարգացման հիմնախնդիրների անխզելի փոխկապակցվածություն և փոխադասավորվածություն: Պատճառն ակնհայտ է, քանզի այդ քաղաքականությունը պետք է լինի ոչ թե հակազդեցությունը բոլոր տեսակի մարտահրավերներին և սպառնալիքների համար ապահովման վիճակի պաշտպանվածությունը, այլ նաև անհրաժեշտ պայմանների

ստեղծման, պլանների և ծրագրերի զարգացման, անձի, հասարակության և պետության պաշտպանվածության առաջնահերթությունների ընդգծումը՝ հաշվի առնելով արտաքին, ներքին և տարածաշրջանային մարտահրավերների ու սպառնալիքների իրողությունները: Հետևապես, ազգային անվտանգության ապահովման քաղաքականությունը կոչված է երաշխավորելու պետության ու ազգաբնակչության սոցիալ-տնտեսական զարգացման նպատակների իրագործումը՝ նրանց ապահովելով կայունություն հարափոփոխ ու «անհանգիստ» աշխարհում:

Անվտանգությունը, նախ և առաջ, ցանկացած պետության պաշտպանվածությունն է արտաքին և ներքին վտանգներից, պետության կայունությունն ու հնարավորությունը զարգանալու, ինչպես նաև իր քաղաքացիների համար անվտանգ, ապահով միջավայրի ստեղծումը: Ազգային անվտանգությունն ունի մի շարք բաղկացուցիչներ՝ կապված մարդկանց կենսագործունեության տարբեր կողմերի և առաջին հերթին մարդկության գոյապահպանության համար անհրաժեշտ պայմանների հետ (Joseph, 2009, էջ 21): Ազգային անվտանգության բաղկացուցիչների առանձնացումն անհրաժեշտ է իրականացնել անձ-հասարակություն-պետություն-միջազգային հանրություն քառամիասնական մեխանիզմի հիման վրա:

Մասնագիտական գրականության մեջ ազգային անվտանգության հարցերը քննարկվում են երկու ուղղվածությամբ: Նեղ առումով անվտանգության ապահովման հարցերը, որպես կանոն, վերաբերում են հասարակական-քաղաքական կյանքի առանձին կողմերին ու գործընթացներին, որը պայմանավորված է տվյալ ժամանակաշրջանի կոնկրետ հանգամանքներով: Լայն առումով ազգային անվտանգության խնդիրն ընդգրկում է մարդկանց կենսագործունեության բոլոր կողմերը, առնչվում է ինչպես մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության, այնպես էլ հասարակական-քաղաքական կարգի պահպանման ու ամրապնդման հետ (ներքին և արտաքին համաչափ սպառնալիքների հաշվառմամբ) (Քոթանջյան, 2010, էջ 686-688):

Անվտանգության հիմնախնդիրը դիտարկելիս անհրաժեշտ է առանձնացնել միջազգային, տարածաշրջանային, պետական և անհատական մակարդակները: Ընդ որում, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ յուրաքանչյուր մակարդակին կարող են համապատասխանել անվտանգության որոշակի ոլորտներ և ուղղվածություններ, որոնք կարող են կապված լինել այս կամ այն կոնկրետ խնդիրների իրականացման հետ:

Միջազգային անվտանգության արդի մարտահրավերները, մասնավորապես՝ աշխարհակարգի փոփոխման միտումները, ուժային կենտրոնների միջև մրցակցության սրումը, ազդեցության գոտիների բաժանման համար մղվող պայքարը (օրինակ՝ աշխարհաքաղաքական առանցքի՝ Ատլանտյան օվկիանոսից դեպի Խաղաղ օվկիանոս տեղաշարժում, համընդհանրացում, կրոնական բախումներ և միջէթնիկական հակամարտությունների անընդմեջ զարգացումներ (Kissinger, 2009, էջ 98) և այլն) բացասական ազդեցություն են ունենում անվտանգային մյուս բոլոր մակարդակների վրա: Ներկայումս ձևա-

վորվող բազմակենտրոն աշխարհակարգում էականորեն սկսում է նվազել միջազգային անվտանգության ապահովման մեխանիզմների արդյունավետությունը, միջազգային անվտանգային կազմակերպությունների զսպող դերը: Աշխարհակարգի փոփոխման պայմաններում էականորեն նվազում է լիբերալիստական սկզբունքներով կառուցվող անվտանգային համակարգերի արդյունավետության աստիճանը, քանի որ պետության անվտանգության ապահովման համատեքստում դադարում են առաջնային նշանակություն ունենալ միջազգային իրավունքը, պետության ժողովրդավարացումը և մարդու իրավունքների պաշտպանությունը: Եվ որպես որոշակի հետևյալաց քայլեր՝ փոփոխվող աշխարհակարգում միջազգային անվտանգային համակարգի կառուցվածքը դառնում է առավել անարխիկ, և միջազգային իրավակարգի էական թուլացման պայմաններում՝ պետությունների համար կրկին մեծ կարևորություն են ստանում ռազմական ուժի կուտակումը, ռազմական զսպումը, սեփական ուժերով անվտանգային կարիքների բավարարման հնարավորությունները և հիբրիդային սպառնալիքներին դիմակայելու հնարավորությունները:

Տարածաշրջանային անվտանգությունը ենթադրում է տարածաշրջանում բնակվող ազգերի և ժողովուրդների, ինչպես նաև պետությունների կենսական շահերի նկատմամբ սպառնալիքի բացակայություն: Տարածաշրջանային անվտանգությունը պայմանավորված է ուժերի հարաբերակցության պահպանմամբ, տարածաշրջանի բոլոր երկրներում խաղաղության համաչափ արմատավորմամբ: Վերջին տարիներին մեծ պետությունների ազգային անվտանգության հայեցակարգերում գերակայում է տարածաշրջանային մոտեցումը, քանզի տարածաշրջանային անվտանգության համակարգերի դերն ու նշանակությունը գլոբալ անվտանգության և առանձին պետությունների անվտանգության ապահովման գործում անհամեմատ բարձրացել են:

Որպես օրինակ՝ Արևելյան Եվրոպայում և Մերձավոր Արևելքում ծավալվող հակամարտությունները նոր անվտանգության աղբյուրներ են ստեղծում Հարավային Կովկասի ուժային բալանսի պահպանման և անվտանգության համալիրի վերակառուցման համար: Մերձավորարևելյան տարածաշրջանին բնորոշ հիբրիդային սպառնալիքների ազդեցության մեծացման միտումները անխուսափելիորեն իրենց տարածումն են գտնում նաև Հարավային Կովկասում, ինչը երկարաժամկետ առումով Հայաստանի աշխարհաքաղաքական ինքնուրույնության պահպանման համար մեծ ռիսկեր է ստեղծում:

Հարավկովկասյան պետությունների հետ համագործակցությունը ուժային կենտրոնների կողմից շարունակում է ընկալվել ոչ թե երկկողմ հարաբերությունների մակարդակով, այլ որպես տարածաշրջանում ազդեցության մեծացման գործողություններ: Տարբեր տարածաշրջանների մակարդակներում ծավալվող անկայունության խորացման պայմաններում Հարավային Կովկասին վերաբերող անվտանգային հիմնախնդիրները արդեն չեն սահ-

1 Որպես նմանօրինակ իրավիճակ գնահատելի է COVID-19 համավարակի պայմաններում թե միջազգային հանրության, թե ազդեցիկ գերտերությունների, մասնավորապես, ԱՄՆ-ի քաղաքականության փոփոխությունները անվտանգային բոլոր մակարդակներում՝ միջազգայինից տարածաշրջանային և ազգային մակարդակներ (Հավելյալ տե՛ս Bolan, Harper and Hillison, 2021, էջ 99-110):

մանափակվում միայն դրանում անմիջականորեն ներգրավված պետություններով: Հետխորհրդային Հարավային Կովկասը միշտ էլ գնահատվել է որպես գլոբալ աշխարհաքաղաքական մրցակցության գոտի, որտեղ ՌԴ-ն ջանքեր է գործադրում վերականգնելու իր նախկին ռազմավարական դերակատարությունը (Tsygankov, 2019, էջ 172-173), իսկ մնացյալ ուժային կենտրոնները փորձում են ուղղակի կամ անուղղակի լրացնել տարածաշրջանում ՌԴ աշխարհաքաղաքական թուլացմամբ առաջացած վակուումը:

Պետական անվտանգությունը կարևորագույն բաղկացուցիչներից է, որը ներառում է այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են, օրինակ՝ տնտեսությունը, քաղաքականությունը, մշակույթը, սոցիալական ոլորտը, տեղեկատվական և էներգետիկ ուղղությունները: Պետության անվտանգության մասին խոսելիս անհրաժեշտ է անվտանգությունը առանձնացնել տարբեր դիտանկյուններով: Նախ և առաջ, պետական անվտանգությունը նշանակում է տարածքի, ազգաբնակչության և կառավարման համակարգի նկատմամբ սպառնալիքի ու վտանգի բացակայություն: Տվյալ դեպքում հարկ է խոսել նաև պետության՝ որպես քաղաքական համակարգի անվտանգության կրողի մասին: Եվ հաջորդը՝ պետական անվտանգությունը ենթադրում է պետական կառավարման համակարգի նկատմամբ սպառնալիքին դիմակայելու հնարավորություն, համապատասխան համակարգ: Այս առումով պետական անվտանգությունը կոչված է ոչ միայն կանխարգելելու և չեզոքացնելու անվտանգային սպառնալիքները, այլև ամրապնդելու ազգային շահի²՝ անձի և քաղաքացիների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանվածությունը, հասարակության հոգևոր և նյութական արժեքների պահպանումը, պետության սահմանադրական կարգն ու ինքնավարությունը:

Պետությունը ոչ միայն արտահայտում է ազգային շահերը, այլ նաև երաշխավորում է դրանց իրականացումը օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունների միջոցով: Պետական մարմիններից յուրաքանչյուրն իր իրավասությունների շրջանակում որևէ կերպ մասնակցում է ազգային անվտանգության ապահովման խնդիրների լուծմանը: Այնուամենայնիվ, այդ գործընթացում նրանց զբաղեցրած տեղն ու դերը էականորեն միմյանցից տարբեր են:

Բազմաթիվ պետություններում, անկախ ժողովրդավարական կամ այլ կառավարման համակարգի առանձին զարգացման մակարդակից, մասնավոր շահեր որդեգրած սուբյեկտները ճանապարհներ են փնտրում իրենց այդ շահերը «ազգային» շահերի մակարդակի բարձրացնելու և պետական կառավարչական գործընթացներին այդպիսի ուղղվածություն տրամադրելու համար: Հաշվի առնելով տվյալ հանգամանքները և պետական քաղաքական ինստիտուտների կողմից ռազմավարության մշակման գործում իրականացվող միջոցառումները, վերլուծելով և գնահատելով դրանց գործիքակազմը՝

2 Ազգային շահերի կառուցվածքային վերլուծության տեսանկյունից ազգի բովանդակության տակ առաջին հերթին հարկավոր է հասկանալ պետության տարածքում կենսագործող ազգային միատարր կամ բազմատարր կառուցվածք, էթնոմշակութային բնութագրիչներ ունեցող որոշակի միասնություն, որն օժտված է իր տարածքին բնորոշ ինքնիշխան կառավարչական ինտեգրատիվ և մենաշնորհային գործառնություն (Լրացուցիչ տե՛ս Դևոնյան, 2011, էջ 35):

ըը՝ կարևորվում է պետության ազգային շահերի փոխակերպումն ազգային անվտանգության հիմնախնդիրների, ինչպես նաև դրանց համար ֆինանսական աղբյուր հանդիսացող տնտեսական անվտանգության ապահովման պահանջների գնահատումները:

Ազգային մակարդակում անվտանգության ապահովումը առաջին հերթին ենթադրում է միջազգային ու տարածաշրջանում քաղաքական և անվտանգային հավասարակշռության երաշխավորում: Հայաստանի ազգային անվտանգության գլխավոր սպառնալիքները արտաքին հարաբերությունների համապարփակ կարգավորման և արժանապատիվ երկարաժամկետ խաղաղության մեխանիզմների ներդրման հեռանկարների փուլային ոչ հստակությունն ու միջազգային/տարածաշրջանային զարգացումներով պայմանավորված «նպատակային անորոշություններ» են: Հայաստանի անվտանգության սպառնալիքներից է համարվում նաև միջազգային նշանակություն ունեցող տնտեսական, տրանսպորտային, էներգետիկ և այլ հաղորդակցային ուղիների մասնակցության և ՀՀ-ի մեկուսացման դեմ իրականացվող գործողությունները: Ազգային մակարդակում անվտանգային շահերը թելադրում են, որ Հայաստանը հնարավորինս փորձի ձեռնպահ մնալ տարածաշրջանային և արտատարածաշրջանային ուժային կենտրոնների միջև մրցակցությունը խորացնող գործողություններից:

Եզրակացություն

Յուրաքանչյուր պետություն ձգտում է հավասարակշռել իր անվտանգային հարաբերությունները հարևան երկրների, տարածաշրջանային տերությունների և միջազգային դերակատարների հետ՝ միաժամանակ հետապնդելով իր ազգային շահերը և անվտանգային նպատակները: Վերլուծությունը ցույց է տալիս, որ աշխարհում ներկայումս տեղի են ունենում անվտանգության վերաբերյալ գոյություն ունեցող հայացքների փոփոխություններ երեք հարթություններում. անվտանգության հասկացության աշխարհայացքային մեկնաբանության մեջ, անվտանգության ապահովման նկատմամբ հայեցակարգային մոտեցումներում և անվտանգության ապահովման քաղաքականության իրականացման ձևերի, այն է՝ կյանքի տարբեր ոլորտներում անձի, հասարակության և պետության անվտանգության պաշտպանության միասնական խնդրի լուծման գործում:

Ազգային անվտանգության բաղկացուցիչների առանձնացումն անհրաժեշտ է իրականացնել մարդ-հասարակություն-պետություն-միջազգային հանրություն քառամիասնական մեխանիզմի հենքի վրա, չնայած մինչև այժմ առանձնացնում են մարդ-հասարակություն-պետություն եռամիասնական համակարգը, ինչը սակայն գլոբալացման գնացող աշխարհում չի կարող արտացոլել ազգային անվտանգության բոլոր կողմերը՝ ընդգծելով անվտանգության քաղաքականության և համակարգի քաղաքացիական վերահսկողության (հասարակական) կառուցակարգերը:

Հայաստանի Հանրապետության անվտանգային միջավայրի ձևավորումը և վերափոխումները մշտապես պայմանավորվել են գլոբալ և տարածաշր-

ջանային աշխարհաքաղաքական գործընթացների դինամիկայով, Հարավային Կովկասում և նրա լայն հարևանությունում ուժային կենտրոնների մրցակցության հետ: Այս գործոնների փոխազդեցությունը մշտապես ազդել է ՀՀ արտաքին և ներքին անվտանգության կառուցակարգերի ձևավորման, պետական ինքնիշխանության պահպանման և ռազմավարական կայունության մակարդակի վրա:

Հայաստանի ներկա իրավիճակի գնահատման և ապագա անվտանգության քաղաքականության ձևավորման գործընթացում անհրաժեշտ է առավել փաստարկված մոտեցում ազգային անվտանգության հետևյալ հիմնադրույթների վերաբերյալ.

1. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությունը պետության՝ որպես պետական կառավարման համակարգի, և հասարակության՝ որպես քաղաքացիական հասարակության, անվտանգ գոյության առաջնահերթությունն է:
2. Հայաստանի ազգային անվտանգության երաշխիքն է համընդհանուր ժողովրդավարական արժեքների՝ պետության, հասարակության և անհատի (իրենց հիմնարար իրավունքներով և ազատություններով հանդերձ) երաշխավորված պաշտպանության արդյունավետ ու համապարփակ համակարգը:
3. Հայաստանի ազգային անվտանգության ապահովումը պետության գոյության դեմ ուղղված սպառնալիքների գնահատումն է, դրանց կանխումն ու չեզոքացումը, ինչպես նաև ներքին ու արտաքին քաղաքականության տարանջատումներով կայուն զարգացման երաշխավորումը:

Հետևաբար, անվտանգության ապահովման գործում առաջնային է, որ անհատները, հասարակական կազմակերպությունները և պետական մարմիններն ակտիվ, գործուն մասնակցություն ունենան անվտանգության կառուցակարգերի ամրապնդման ու զարգացման գործում: Անվտանգության ամրապնդման քաղաքականությունը պետք է հավասարակշռված հիմնվի անվտանգության ապահովման պետական ու ոչ պետական (հասարակական) ենթահամակարգերի վրա՝ հիմքում ունենալով համադասված ոլորտային տարանջատումները:

Հայաստանի Հանրապետությունում անցած տարիների ընթացքում ընդունվել են տարբեր անվտանգային փաստաթղթեր, որոնք՝ նպատակաուղղված լինելով անվտանգության ապահովմանը, կատարողական առումով փաստացի չեն ապահովել դրանցով նախանշված խնդիրների համընդգրկուն կարգավորումը: Այդպիսի անվտանգային փաստաթղթերի շարքում առաջին հերթին առանձնանում է ազգային անվտանգության ռազմավարությունը: Այս համատեքստում ազգային անվտանգության ռազմավարության մշակման կարևոր հարցերից է կոնկրետ մեթոդաբանության ընտրությունը: Որպես հիմնական ուղղություններ՝ առանձնացվում են երկու եղանակներ. ազգային անվտանգության համակարգային կայացում ու դրա հիման վրա ոլորտային ռազմավարությունների ստեղծում և առանձին ոլորտային ռազմավարությո-

յունների մշակում ու դրանց համընդհանրացմամբ մեկ ամբողջական փաստաթղթի ստեղծում: Հայաստանում մինչ օրս փաստացի կիրառվել է առաջին եղանակը:

Այս համատեքստում Հայաստանը մշակում և իրականացնում է ազգային անվտանգության քաղաքականությունը, որն ունի բազմավեկտոր բնույթ և ընդգրկում է տարբեր ոլորտներ: ՀՀ ազգային անվտանգության քաղաքականության բարելավման հիմնական առաջարկությունը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. անհրաժեշտ է ապահովել ռազմավարական մակարդակի փաստաթղթերի հստակ աստիճանակարգության և փոխկապակցվածության երաշխավորումը: Այդ համակարգը պետք է կառուցվի հետևյալ տրամաբանությամբ՝ ազգային անվտանգության ռազմավարություն – ոլորտային ռազմավարություններ (օրինակ, ազգային պաշտպանության ռազմավարություն) – ոլորտային ծրագրային հայեցակարգեր (օրինակ, ռազմական դոկտրին կամ պաշտպանական համակարգի/զինված ուժերի զարգացման ծրագիր) – առանձին ենթաոլորտային ուղղություններ ծրագրային փաստաթղթեր (օրինակ, ռազմական արդյունաբերության զարգացման տեսլական, ռազմագիտակրթական համակարգի զարգացման տեսլական և այլն):

Օգտագործված գրականության ցանկ

- Աթոյան, Վ. (2014): *Ազգային անվտանգության հիմնախնդիրներ*: Եր.
- Էռնեստ, Բ. (2025): *Հայաստանի անվտանգության և պաշտպանության քաղաքականության վերափոխման նկարագրումներ*: Անվտանգային վերլուծությունների ինստիտուտ, Եր., Հունիս 2025.
- Ղևոնդյան, Ա. (2011): *Ազգային շահերի հիմնահարցը ՀՀ անվտանգության ապահովման առաջնային միջավայրում*: Երևան:
- Շահվերդյան, Ա. (2024): *Էկոլոգիական անվտանգություն. ռազմավարական և քաղաքագիտական գնահատումներ*: Եր.:
- Քոթանջյան, Հ.Ս. (2010): *Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները*: Եր.: ՀՀ ՊՆ Դ.Կանսայանի անվան ԱՌՀԻ:
- Քոչարյան, Ս. (2012): *Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համայնաբարում*: Եր.: ԵՊՀ հրատ.
- Peltriaux Emmanuel (2023). *Three Major International Security Challenges that Face the World*. *Journal of the National Defense College. India*, Volume 44, Number 1.
- Ayling, J. (2017). *Prevention of Transnational Environmental Crime and Regulatory Pluralism. In Regulatory Theory: Foundations and Applications*, Edited by P. Drahos, Australian National University Press.
- Buzan, Barry (1991). *People, States and Fear: An Agenda for International Security Studies in the Post-Cold War Era*. Harlow: Pearson Education Limited.
- Christopher, J., Bolan, Jerad I. Harper, and Joel R. Hillison (2021). *Diverging Interests: US Strategy in the Middle East*. *The US Army War College. Quarterly Parameters*. Vol. 50, N 4.
- Hartman, Jim (2012). *Sustainability and National Security*. Center for Strategic Leadership,

- U.S. Army War College, Carlisle, PA.*
- Henry Kissinger (2009). *The Intellectual Underpinnings of the Trilateral Partnership in the 21st Century*. "Seeking Opportunities in Crisis: Trilateral Cooperation in Meeting Global Challenges". http://www.trilateral.org/download/doc/seeking_opportunities2.pdf
- Joseph, S. Nye, Jr. (2009). *Get Smart: Combining Hard and Soft Power*. Center for Strategic and International Studies, July/August.
- Kelly, Ph. (2016). *Classical Geopolitics*. Stanford University Press, California, US.
- Leoni Elisa (2024). *Exploring the Interconnection Between Space and Cyberspace: The Due Diligence Principle as a Tool of International Law to Counter Cyberattacks on Space Systems*. *Strategic Leadership Journal. Challenges for Geopolitics and Organizational Development*, Roma, Vol. 4, Dec.
- Prisms and Policy: *U.S. Security Strategy after the Cold War (1994)*. Ed. by N. Levin. Santa Monica: RAND.
- Rothschild, E. (1995). *Common Security in Asia: New Concepts of Human Security*. T. Matsumae, L.C. Chen Tokyo.
- The role of NGOS in European governance. The Analyses of the "Stefancel Mare" University of Suceava. *Fascicle of The Faculty of Economics and Public Administration*. Vol. 10, N 2 (12), 2010, էջ 284–289:
- Trager, F., Kronenberg, P. (1973). *National Security Studies. Scope and Structure of the Field*. In *National Security and American Society: Theory Process Policy*. Lawrence: Univercity of Kansas Press.
- Tsygankov, Andrei P. (2019). *Russia's Foreign Policy Change and Continuity in National Identity*. Lanham: Rowman & Littlefield, Fifth edition.
- US National Security: A Framework for Analysis (1985)*. Ed. by Daniel J. Kaufman, Jeffrey S. McKittrick, Thomas J. Leney. Lexindton Books.

Баграт Багратян

Сотискатель Института философии, социологии и права
Национальной академии наук Республики Армения
Эл. адрес: bsbagratyan@gmail.com

ТЕОРЕТИКО-КОНЦЕПТУАЛЬНЫЕ ПОДХОДЫ К ИНСТИТУТУ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ В КОНТЕКСТЕ РАЗВИТИЯ СИСТЕМЫ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ РА

Национальная безопасность является одним из столпов государственного суверенитета, обеспечение которого включает в себя совокупное влияние как внешних, так и внутренних факторов. Она рассматривается как многоуровневая система, где взаимодействие геополитической среды, социально-экономического развития и институциональных возможностей государства формирует реальный уровень обеспечения безопасности.

Цель исследования – анализ теоретических основ института национальной безопасности, особенностей его формирования и развития, а также оценка возможностей совершенствования структур национальной безопасности Республики Армения и повышения эффективности отдельных подсекторов.

Ключевые слова: Национальная, безопасность, Республика Армения, теория, политика, государство, общество.

Bagrat Bagratyan

*Ph.D. Student of the Institute of Philosophy, Sociology and Law
at the National Academy of Sciences of the Republic of Armenia*

Email: bsbagratyan@gmail.com

THEORETICAL AND CONCEPTUAL APPROACHES TO THE INSTITUTE OF NATIONAL SECURITY IN THE CONTEXT OF THE DEVELOPMENT OF THE NATIONAL SECURITY SYSTEM OF THE REPUBLIC OF ARMENIA

National security is one of the key pillars of state sovereignty, the protection of which depends on the combined impact of both external and internal factors. It is conceptualized as a multi-layered system where the interaction between the geopolitical environment, socio-economic development, and the institutional capacities of the state shapes the actual level of security.

The purpose of this research is to analyze the theoretical foundations of the institute of national security, explore the particularities of its formation and development, and assess the possibilities for improving the national security structures of the Republic of Armenia, as well as enhancing the effectiveness of individual subsectors.

Key words: National, security, Republic of Armenia, theory, politics, state, society.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2025թ. մարտի 6-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2025թ. մարտի 15-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2025թ. հունիսի 11-ին:

Ալվարդ Խառատյան

Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Էլ. հասցե՝ alvardkharatyan@ysu.am

Անահիտ Ստեփանյան

Հայէկոնոմբանկի հաշվապահ-գանձապահ

Էլ. հասցե՝ anahit-s02@mail.ru

DOI: 10.53614/18294952-2025.1-102

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃՐ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ, ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հոդվածում վերլուծվել է Հայաստանում առկա սոցիալական հիմնախնդիրները և հետազոտվել տնտեսական աճի դերը այդ հիմնախնդիրների լուծման գործում: Առաջադրվել են վարկածներ, որոնց ստուգման նպատակով կառուցվել են էկոնոմետրիկ մոդելներ: Bounds թեստի արդյունքներով՝ տնտեսական աճ, աղքատության մակարդակ, Զինիի եկամտային գործակից փոփոխականների միջև երկարաժամկետ կապերը բացակայում են: Ռեգրեսիոն և ARDL մոդելների կիրառմամբ գնահատվել են այդ փոփոխականների կարճաժամկետ փոխազդեցությունները: Արդյունքների համաձայն՝ Հայաստանում տնտեսական աճը նպաստում է աղքատության կրճատմանը, սակայն եկամուտների անհավասարության վրա նշանակալի ազդեցություն չունի: Տնտեսական աճի տեմպի արագացումը մեկ տոկոսային կետով ընթացիկ տարում նպաստում է աղքատության մակարդակի նվազմանը 0.88%-ով: Մյուս կողմից, աղքատության և անհավասարության բարձր մակարդակները կասեցնում են ՀՀ տնտեսական աճը. աղքատության մակար-

դակի 1% աճը ընթացիկ տարում հանգեցնում է տնտեսական աճի նվազմանը 0.35 տոկոսային կետով, իսկ Զինիի գործակցի 1% աճը՝ երեք տարի հետո կասեցնում է տնտեսական աճը 0.45 տոկոսային կետով:

Հետազոտության արդյունքները գործնական կարևոր նշանակություն ունեն ՀՀ սոցիալական հիմնախնդիրների մեղմացմանը միտված արդյունավետ մակրոտնտեսական քաղաքականության մշակման տեսանկյունից:


Հիմնաբառեր. տնտեսական աճ, աղքատություն, անհավասարություն, Զինիի գործակից, գործազրկություն, ռեգրեսիոն և ARDL մոդելներ, կոինտեգրացիա:

Ներածություն

Աղքատությունը, անհավասարությունը և գործազրկությունը ցանկացած երկրի կարևոր սոցիալական հիմնախնդիրներից են, որոնք միշտ պետք է գտնվեն մակրոտնտեսական քաղաքականություն մշակողների ուշադրության կենտրոնում: Անհավասարությունը մեղմելու, գործազրկության և աղքատության մակարդակները կրճատելու ուղիներից մեկը երկրում կայուն տնտեսական աճի ապահովումն է: Բայց հնարավոր է, որ այն նշանակալի ազդեցություն չունենա երկրում առկա սոցիալական հիմնախնդիրների լուծման վրա:

1990-ականների սկզբին Հայաստանում սոցիալական բոլոր հիմնախնդիրները սրվեցին. ԽՍՀՄ փլուզման արդյունքում 1993թ. տնտեսական անկումը հասավ 53.1%-ի, 1996թ. աղքատության մակարդակը կազմեց 54.7%, իսկ Զինիի եկամտային գործակիցը՝ 0.602¹: Հետագա տարիներին իրավիճակը բարելավվեց: 2001-2007թթ. Հայաստանում միջինում գրանցվել է 12.84% տնտեսական աճ, որի արդյունքում աղքատության մակարդակը 50.9%-ից նվազեց մինչև 26.4%, իսկ Զինիի եկամտային գործակիցը՝ 0.535-ից մինչև 0.371: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը 2009թ. հանգեցրեց 14.1% անկման, 2008թ. աղքատության մակարդակը նախորդ տարվա համեմատ աճեց 1.2%-ով՝ կազմելով 27.6%, իսկ 2009թ. հասավ 34.1%-ի: Հետճգնաժամային 2010թ. գրանցվեց 2.2% տնտեսական աճ, սակայն աղքատության և անհավասարության մակարդակները շարունակեցին աճել: Զինիի եկամտային գործակիցը 2008թ. 0.339-ից 2010թ. աճեց մինչև 0.362: 2008թ. համեմատ աղքատությունը 2010թ. ավելացավ 8.2%-ով և կազմեց 35.8%, ծայրահեղ աղքատության մակարդակը 2008թ. 3.1%-ից 2011թ. աճեց մինչև 3.7% (գծապատկեր 1):

1 Զինիի եկամտային գործակիցը արժեքներ է ընդունում 0-ից 1 միջակայքից, որտեղ 0-ն նշանակում է եկամուտների լիովին հավասարություն, 1-ը՝ լիովին անհավասարություն:



Գծապատկեր 1. ՀՀ տնտեսական աճը, աղքատության և ծայրահեղ աղքատության մակարդակները 1996–2023թթ.

Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք (ՀՎՏ) 2014, 2019, 2024

2010–2016թթ. Հայաստանում տնտեսական աճի տեմպը միջինում կազմել է 3.5%, 2017–2019թթ.՝ 6.8%: Ինչպես 2001–2007թթ., այնպես էլ 2017–2019թթ. տնտեսական աճի ապահովման գործում մեծ ներդրում է ունեցել տնտեսության ոչ արտահանելի հատվածը. 2001–2007թթ. իրական ՀՆԱ-ի աճը հիմնականում պայմանավորված էր շինարարության ծյուղի աճով, իսկ 2017–2019թթ.՝ ծառայությունների, մասնավորապես խաղային ոլորտի ծառայությունների աճով: 2020թ. COVID-19 համավարակի և ռազմական դրությանազդեցությունների արդյունքում տնտեսական անկումը երկրում կազմեց 7.4%, աղքատության մակարդակը՝ 27.0%, Զինիի եկամտային գործակիցը՝ 0.363 (Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2023, էջ 36): Հետագա տարիներին տնտեսական աճը վերականգնվեց՝ 2022թ. Հայաստանում գրանցվել է 12.6%, իսկ 2023թ.՝ 8.3% տնտեսական աճ: Աղքատության մակարդակը 2023թ. կազմել է 23.7%՝ 2020թ. համեմատ նվազելով 3.3 տոկոսային կետով (Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2024, էջ 32):

Ընդհանուր առմամբ 1996–2023թթ. Հայաստանի բնակչության եկամուտների և ծախսերի անհավասարությունը կրճատվել է: Եթե 1996թ. ամենահարուստ քվինտիլի բնակչության եկամուտները 39.5 անգամ գերազանցել են ամենաաղքատ քվինտիլի բնակչության եկամուտները, ապա 2016թ. այդ ցուցանիշը նվազել է մինչև 9.2, իսկ 2023թ.՝ 7.16 (Աղյուսակ 1): Եթե 1996թ. ամենաաղքատ 10%-ը ստանում էր ընդհանուր եկամտի 0.3%-ը, իսկ ամենահարուստ 10%-ը՝ 45.8%-ը, ապա 2005թ. այդ մասնաբաժինները կազմել են համապատասխանաբար 1.6% և 28.4%, 2023թ.՝ 2.2% և 27.3%: Եկամուտների հարաբերակցության դեցիլային գործակիցը 1996թ. 152.7-ից նվազել է մինչև 17.75 2005թ., իսկ 2023թ. կազմել է 12.41: Ծախսերի դեցիլային գործակիցները եկամուտների համեմատ ցույց են տալիս անհավասարության ավելի ցածր մակարդակներ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Բնակչության դրամական եկամուտներն ըստ քվինտիլային խմբերի, %²

Տարի	1996	1999	2001	2004	2008	2010	2013	2016	2020	2021	2023
Դրամակ. եկամուտներ, այդ թվում	100	100	100	100	100	100	100	100	100	100	100
1-ին (նվազագույն եկամուտներով)	1.6	1.9	4	7	7	5	7	5	6	6	6
2-րդ	5.6	6.0	9	12	14	11	14	10	12	11	12
3-րդ	10.3	11.1	12	16	17	16	18	16	17	16	16
4-րդ	19.3	18.8	20	22	24	23	23	23	22	23	23
5-րդ (առավելագ. եկամուտներով)	63.2	62.2	55	43	38	45	38	46	43	44	43

Եկամուտների անհավասարության դեցիլային և քվինտիլային գործակիցները չեն բնութագրում եկամուտների մասնաբաժինների փոփոխությունը միջին դեցիլներում և կվինտիլներում: Բնակչության եկամուտների անհավասարությունը բնութագրող առավել կիրառելի ցուցանիշը Զինիի եկամտային գործակիցն է, որը 1996–2023թթ. 0.602–ից նվազել է մինչև 0.348 (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2. ՀՀ բնակչության եկամուտների և ծախսերի անհավասարության դեցիլային գործակիցները և Զինիի եկամտային գործակիցը³

Տարի	1996	2000	2005	2010	2015	2020	2023
1-ին դեցիլ, եկամուտ	0.3	0.95	1.6	2.1	2.0	1.9	2.2
10-րդ դեցիլ, եկամուտ	45.8	42.8	28.4	29.1	32.2	27.4	27.3
Եկամուտների հարաբերակցության դեցիլային գործակից	152.7	45.05	17.75	13.86	16.1	14.42	12.41
1-ին դեցիլ, ծախս	2.1	3.2	2.9	3.3	3.2	3.3	3.4
10-րդ դեցիլ, ծախս	35.0	27.25	28.5	27.1	28.6	27.5	24.5
Ծախսերի հարաբերակցության դեցիլային գործակից	16.7	8.52	9.83	8.21	8.94	8.33	7.21
Եկամուտների անհավասարության Զինիի գործակից	0.602	0.564	0.359	0.362	0.374	0.363	0.348

Հասարակության սոցիալական հիմնախնդիրներից է գործազրկությունը: Հայաստանի Հանրապետության գործազրկության պաշտոնական տվյալները դիտարկելիս կարելի է առանձնացնել երեք ժամանակահատված. 1) գործազրկության ոչ հավաստի տվյալների (1996–2000թթ.)՝ 1990–ականների

2 Աղբյուրը՝ ՀՎՏ 2019, էջ 115, ՀՎՏ 2021, էջ 135, ՀՎՏ 2024, էջ 90, 91

3 Աղբյուրը՝ 2014, էջ 105, ՀՎՏ 2019, էջ 117, ՀՎՏ 2024, էջ 160

սկզբի ՀՀ տնտեսության ավելի քան 50% անկման պայմաններում 1992թ. գործազրկության պաշտոնական մակարդակը կազմել է 1.8%, 1995թ.՝ 6.7%, 1996թ.՝ 9.3%, 2) գործազրկության նշանակալի կրճատման (2001–2008թթ.)՝ գործազրկության մակարդակը 38.4%-ից նվազել է մինչև 16.4%, 3) գործազրկության հարաբերականորեն կայուն մակարդակի (2009–2023թթ.)՝ գործազրկության մակարդակը միջինում կազմել է 16% (Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2024, էջ 158):

Տնտեսագիտական գրականությունում առկա են տնտեսական աճ, գործազրկություն, անհավասարություն և աղքատություն փոխազդեցությունները գնահատող մի շարք էմպիրիկ հետազոտություններ: Չեներիի և համահեղինակների (Chenery et al., 1974), Ադելմանի և Մորիսի (Adelman and Morris, 1973) հետազոտությունների արդյունքներով տնտեսական աճը բավարար չէ զարգացող երկրներում աղքատության մակարդակը նվազեցնելու համար: Կուզնեցյան վարկածը (1955, 1963) պնդում էր, որ տնտեսական զարգացման վաղ փուլերում տնտեսական աճին զուգընթաց եկամուտների անհավասարությունն աճում է և չի բարելավվում, մինչև երկրները չհասնեն միջին եկամուտ ունեցող երկրի կարգավիճակի՝ տնտեսական աճի և անհավասարության միջև կապը ներկայացվում է շրջված U-աձև կորի տեսքով: Այս վարկածի ձմարտացի լինելը նշանակում է, որ զարգացող երկրներում, չնայած տնտեսական աճին, շատ տարիներ են պետք աղքատությունը կրճատելու համար:

1990-ականների շատ հետազոտություններ մերժեցին Կուզնեցյան վարկածը, նաև ցույց տվեցին, որ տնտեսական աճը նպաստում է աղքատության կրճատմանը: Ըստ Դեյնինգերի և Սքուայրի (Deininger and Squire, 1996) 1985–1995թթ. զարգացող աշխարհում բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն աճել է 26%-ով, մինչդեռ Զինիի գործակիցներն աշխարհում տարեկան փոխվել են ընդամենը 0.28%-ով: Բրունոն, Ռավալիոն և Սքուայրը (Bruno, Ravallion and Squire, 1998) զարգացող երկրների համար ստացել են, որ 1% տնտեսական աճը (ընտրանքի միջին եկամտով չափված) կրճատում է աղքատության մակարդակը 2.12%-ով, իսկ անհավասարության 1% աճը մեծացնում է աղքատությունը 3.86% տոկոսով:

Հետագա էմպիրիկ հետազոտությունների մի մասում ցույց է տրվում տնտեսական աճ-աղքատության մակարդակ հակադարձ կապի գոյությունը, մյուսներում կասկածներ է ներկայացվում աղքատության կրճատման գործում տնտեսական աճի արդյունավետության վերաբերյալ: Ադամսը (Adams, 2004) զարգացող երկրների համար ստացել է, որ ընտրանքի միջին եկամտով չափվելու դեպքում տնտեսական աճի տեմպի 1% արագացումը կնվազեցնի աղքատությունը 2.79%-ով, իսկ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ով չափվելու դեպքում՝ կապը վիճակագրորեն ոչ նշանակալի է: Հեղինակը գտնում է, որ տնտեսական աճը քիչ է ազդում եկամուտների անհավասարության վրա: Պերերան և Լին (Perera and Lee, 2014), Ասիայի զարգացող երկրների համար ուսումնասիրելով տնտեսական աճի և երկրի ինստիտուտների որակի ազդեցությունը աղքատության և եկամուտների անհավասարության վրա, ստացել են, որ տնտե-

սական աճը հանգեցնում է աղքատության կրճատմանը, բայց չի ազդում եկամուտների անհավասարության վրա: Չնայած կառավարության կայունության և օրենքի ու կարգի բարելավումները նվազեցնում են աղքատությունը, սակայն կոռուպցիայի մակարդակի, ժողովրդավարական հաշվետվողականության և բյուրոկրատական որակի բարելավումները մեծացնում են աղքատության մակարդակը և եկամուտների անհավասարությունը:

Քիմհին (Kimhi, 2004) զարգացող երկրներում անհավասարության վրա տնտեսական աճի ազդեցության էմպիրիկ գրականության վերլուծությունից եզրակացրել է, որ տնտեսական աճի և եկամուտների անհավասարության միջև հստակ կապ գոյություն չունի: Բացի այդ, առանձին երկրների ուսումնասիրություններ ցույց են տվել, որ տնտեսական աճի հետ մեկտեղ աշխատավարձի անհավասարությունն աճում է: Սալիմը և համահեղինակները (Saleem et al., 2021) զարգացող երկրների համար ցույց են տվել, որ աղքատությունը և եկամուտների անհավասարությունը բացասաբար են անդրադառնում տնտեսական աճի վրա, մյուս կողմից՝ համախառն կապիտալի ձևավորումը, աշխատուժի և բնակչության աճը, պետական սպառումն ու ծախսերը դրական նշանակալի ազդեցություն ունեն տնտեսական աճի վրա: Դոգանի և Ասլանի (Dogan and Aslan, 2023) աշխատանքում զարգացող երկրների համար եկամուտների անհավասարության, աղքատության և տնտեսական աճի միջև հայտնաբերվել է երկարաժամկետ կապ, ըստ որի՝ մեկ շնչի հաշվով ազգային եկամտի աճը մեծացնում է եկամուտների անհավասարությունը, իսկ ժողովրդավարության և մեկ շնչի հաշվով եկամուտների աճը նվազեցնում են աղքատությունը:

Տնտեսական աճի, աղքատության և անհավասարության հիմնախնդիրներին, ինչպես նաև՝ այդ փոփոխականների կապին, անդրադարձել են նաև հայազգի տնտեսագետները: Այսպես՝ Աղաջանյանի և համահեղինակների (Աղաջանյան, 2014) կողմից հետազոտվել է Հայաստանի տնտեսական աճի որակը՝ որպես աղքատության հաղթահարման պայման: Քթոյանը (Քթոյան, 2020) ցույց է տվել, որ Հայաստանում կրթական և առողջապահական ծառայությունները սահմանափակ չափով են հասանելի բնակչության ոչ միայն ստորին, այլև միջին եկամտային խմբերի համար: Հարությունյանը (Հարությունյան, 2022), ուսումնասիրելով բարձրագույն կրթության և աղքատության փոխկապակցվածությունը, եզրակացնում է, որ բարձրագույն կրթությունը Հայաստանում մատչելի չէ աղքատ ընտանիքների համար: Խաչատրյանը (Խաչատրյան, 2023) իրականացրել է լոգիստիկ ռեգրեսիոն վերլուծություն և գնահատել Հայաստանում ոչ աղքատ լինելու հավանականությունը՝ կախված տնային տնտեսության գլխավորի կրթական մակարդակից, անդամների թվից, բնակության վայրից և այլն:

Չնայած այս ոլորտում առկա ուսումնասիրություններին՝ դրանք չեն ենթադրում տնտեսական աճ, աղքատություն և անհավասարություն փոխկապակցվածության միանշանակ արդյունքներ: Սույն հետազոտության **նպատակն է** Հայաստանի համար գնահատել տնտեսական աճ, անհավասարություն և աղքատություն փոխազդեցությունները: Կառուցվել են էկոնոմետրիկ մոդել-

ներ, որոնց կիրառմամբ ստուգվել են հետևյալ վարկածները.

1. ՀՀ տնտեսական աճը նպաստում է աղքատության կրճատմանը,
2. ՀՀ տնտեսական աճը նպաստում է եկամուտների անհավասարության կրճատմանը,
3. Աղքատության և անհավասարության աճը նվազեցնում են տնտեսական աճի տեմպը Հայաստանում:

Մեթոդ

Հետազոտության նպատակով տարեկան կտրվածքով դիտարկվել են 1996–2023թթ. ՀՀ հետևյալ տվյալները. տնտեսական աճ,% (gr), աղքատության մակարդակ,% (pov), զբաղվածություն, հազար մարդ (emp), ապրանքների և ծառայությունների արտահանում, մլն դրամ (ex), Զինիի եկամտային գործակից (gini), գործազրկության մակարդակ, % (unemp), անձնական տրանսֆերտներ արտերկրից, մլն դրամ (tr): Տվյալների աղբյուրը ՀՀ Կենտրոնական Բանկի և ՀՀ Վիճակագրական կոմիտեի վիճակագրական տվյալների բազաներն են (CB of Armenia, ARMSTAT):

Փոփոխականների ստացիոնարությունը ստուգվել է Ընդլայնված Դիփի-Ֆուլերի միավոր արմատ (ADF) թեստով: ADF թեստի կիրառման դեպքում գնահատվում է

$$\Delta X_t = \beta_1 + \gamma X_{t-1} + \beta_2 t + \sum_{i=1}^k c_i \Delta X_{t-i} + \varepsilon_t \quad (1)$$

հավասարումը, որտեղ $\beta_1, \beta_2, \gamma, c_i$ գործակիցներ են, t -ն՝ տրենդի փոփոխականը, ε_t -ն՝ պատահական սխալը: ADF-ը թեստավորում է Տժամանակային շարքն ունի միավոր արմատ՝ զրոյական վարկածը: Վարկածի մերժվելու դեպքում շարքը ստացիոնար է:

Գրենջերի թեստով որոշվել է Y_{1t} և Y_{2t} փոփոխականների միջև պատճառականության առկայությունը և ուղղությունը: Թեստի կիրառման ժամանակ գնահատվում են ռեգրեսիայի հետևյալ հավասարումները.

$$\Delta Y_{1t} = \sum_{i=1}^m \alpha_i \Delta Y_{1t} + \sum_{j=1}^m \beta_j \Delta Y_{2t} + u_{1t} \quad (2)$$

$$\Delta Y_{2t} = \sum_{j=1}^m \gamma_j \Delta Y_{1t} + \sum_{i=1}^m \delta_i \Delta Y_{2t} + u_{2t}, \quad (3)$$

որտեղ u_{1t} -ն և u_{2t} -ն չկորելացված պատահական սխալներն են, $\alpha_i, \beta_j, \gamma_j, \delta_i$ -ն՝ գործակիցները, m -ը՝ լագի երկարությունը: « Y_2 -ը Y_1 -ի փոփոխության պատճառը չէ ըստ Գրենջերի» զրոյական վարկածը չի մերժվում, եթե $\gamma_1 = \gamma_2 = \dots = \gamma_m = 0$: Նման ձևով, « Y_1 -ը Y_2 -ի փոփոխության պատճառը չէ ըստ Գրենջերի» զրոյական վարկածը չի մերժվում $\gamma_1 = \gamma_2 = \dots = \gamma_m = 0$ դեպքում:

Հետազոտվող փոփոխականների միջև կապերը բացահայտելու նպատակով կիրառվել են ռեգրեսիայի և ARDL դասի մոդելներ: Փոփոխականների երկարաժամկետ կապերի (կոինտեգրացիայի) առկայությունը բացահայտելու նպատակով կիրառվել է Bounds Test-ը: Այն կիրառելի է շարքերի $I(0)$ և $I(1)$

գործընթացներ լինելու պարագայում: Կոինտեգրացիայի բացակայության դեպքում գնահատվում է ARDL մոդելը ստացիոնարացված շարքերի համար, իսկ կոինտեգրացիայի առկայության դեպքում՝ հետևյալ տեսքի մոդելը.

$$\Delta Y_t = \alpha_0 + \alpha_1 \Delta Y_{t-1} + \dots + \alpha_p \Delta Y_{t-p} + \beta_0 \Delta X_t + \beta_1 \Delta X_{t-1} + \dots + \beta_q \Delta X_{t-q} + \gamma Z_{t-1} + \varepsilon_t \quad (4)$$

(4) բանաձևը ներառում է ARDL մոդելը և սխալների ճշգրտման γZ_{t-1} մոդելը:

Էկոնոմետրիկ մոդելների մնացորդների հոմոսկեդաստիկությունը ստուգվել է Breusch-Pagan-Godfrey թեստով, ավտոկոռելյացիան՝ Breusch-Godfrey LM թեստով, իսկ նորմալ բաշխում ունենալը՝ Jarque-Bera թեստով: Մոդելների որակի գնահատման համար օգտագործվել է դետերմինացիայի գործակիցը՝ R_{sq} կամ $Adj.R_{sq}$, գնահատված պարամետրերի վիճակագրական նշանակալիության ու վարկածների ստուգման համար՝ t, F, Chi_sq վիճակագիրները (Gujarati, 2009):

Արդյունքներ

Հետազոտության մեջ ներառված փոփոխականների նկարագրական վիճակագրությունների համաձայն՝ 1996–2023թթ. աղքատության մակարդակը Հայաստանում միջինում կազմել է 35.7%, առավելագույնը՝ 56.1% (1998թ.), նվազագույնը՝ 23.5% (2018թ.): Տնտեսական աճի միջին տեմպը դիտարկվող ժամանակահատվածում 6.1% է: Առավելագույն տնտեսական աճը գրանցվել է 2002թ. (14.8%), իսկ առավելագույն տնտեսական անկումը՝ 2009թ. (–14.2%): Բնակչության եկամուտների անհավասարության ամենացածր մակարդակը գրանցվել է 2008թ. (Ֆինիի գործակիցը՝ 0.339), ամենաբարձրը՝ 1996թ. (Ֆինիի գործակիցը՝ 0.602) (աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Փոփոխականների նկարագրական վիճակագրություն

	POV	UNMP	GR	GINI	EMP	EX	TR
Mean	35.70357	19.69286	6.103571	0.417571	1157.354	1313734.	250300.8
Median	31.00000	18.10000	6.100000	0.372000	1134.150	755568.0	257368.8
Maximum	56.10000	38.40000	14.80000	0.602000	1435.600	5627511.	574418.5
Minimum	23.50000	9.300000	–14.20000	0.339000	1006.200	179295.4	43330.46
Std. Dev.	11.41372	8.013827	6.311511	0.090888	107.5349	1303372.	145713.7
Jarque-Bera	4.058885	3.402200	14.05766	7.321880	4.286612	26.37263	0.550506
Probability	0.131409	0.182483	0.000886	0.025708	0.117267	0.000002	0.759380
Observations	28	28	28	28	28	28	28

Ըստ ADF թեստի՝ բացի տնտեսական աճից, բոլոր փոփոխականները 1-ին կարգի ինտեգրման գործընթացներ են, ինչը նշանակում է, որ դրանք ստացիոնար են դառնում առաջին կարգի տարբերությունները դիտարկելու արդյունքում (աղյուսակ 4):

Ավարդ Խառառյան, Անահիտ Ստեփանյան

Variable	Test equation	ADF test stat.	5% critical value	I(d)
D(LTR)	Constant, Linear Trend	-4.619726	-3.644963	I(1)
D(LPOV)	None	-2.630158	-1.954414	I(1)
D(LGINI)	Constant, Linear Trend	-4.565680	-3.595026	I(1)
D(LUNMP)	Constant	-5.193696	-3.020686	I(1)
GR	Constant	-3.487301	-2.976263	I(0)
D(LEMP)	Constant	-4.088217	-2.981038	I(1)
D(LTR)	Constant, Linear Trend	-4.619726	-3.644963	I(1)

Աղյուսակ 4. Ստացիոնարության ADF թեստ

Գրենջերի թեստը ցույց է տվել, որ հետազոտվող փոփոխականների միջև երկկողմանի պատճառահետևանքային կապերը բացակայում են: Առկա են հետևյալ միակողմանի կապերը. 1) ՀՀ աղքատության մակարդակը տնտեսական աճի փոփոխության պատճառն է ըստ Գրենջերի ($\text{Chi-sq}=6.749505$, $\text{prob}(\text{Chi-sq})=0.0342>0.05$), 2) ՀՀ տնտեսական աճը բնակչության եկամուտների անհավասարության փոփոխության պատճառն է ըստ Գրենջերի ($\text{Chi-sq}=7.138854$, $\text{prob}(\text{Chi-sq})=0.0282>0.05$), 3) ՀՀ գործազրկության մակարդակը բնակչության եկամուտների անհավասարության փոփոխության պատճառն է ըստ Գրենջերի ($\text{Chi-sq}=16.26380$, $\text{prob}(\text{Chi-sq})=0.0003>0.05$) (աղյուսակ 5):

Աղյուսակ 5. Գրենջերի պատճառականության թեստ

Dependent variable: D(LOG(POV))				Dependent variable: GR			
Excluded							
Chi-sq							
df							
Prob.							
	Chi-sq	df	Prob.	Excluded	Chi-sq	df	Prob.
GR	0.635987	2	0.7276	D(LOG(POV))	6.749505	2	0.0342
D(LOG(GINI))	3.081459	2	0.2142	D(LOG(GINI))	4.117127	2	0.1276
D(LOG(UNMP))	1.341572	2	0.5113	D(LOG(UNMP))	5.819823	2	0.0545
All	4.978104	6	0.5466	All	21.37768	6	0.0016
Dependent variable: D(LOG(GINI))				Dependent variable: D(LOG(UNMP))			
Excluded	Chi-sq	df	Prob.	Excluded	Chi-sq	df	Prob.
D(LOG(POV))	2.997360	2	0.2234	D(LOG(POV))	0.073648	2	0.9638
GR	7.138854	2	0.0282	GR	0.745533	2	0.6888
D(LOG(UNMP))	16.26380	2	0.0003	D(LOG(GINI))	0.342159	2	0.8428
All	21.04159	6	0.0018	All	1.068757	6	0.9829

ՀՀ տնտեսական աճի, գործազրկության մակարդակի, եկամուտների անհավասարություն և աղքատության մակարդակի փոխադարձ ազդեցությունները գնահատելու նպատակով կառուցվել է երեք էկոնոմետրիկ մոդել: Մոդելներից 1-ինը միագործոն ռեգրեսիայի մոդել է, իսկ մոդելներ 2-ը և 3-ը՝ ARDL դասի մոդելներ: Հետազոտության մեջ ներառված տնտեսական աճ

շարքը $I(0)$ գործընթաց է, իսկ աղքատության մակարդակ, գործազրկության մակարդակ, Զինիի եկամտային գործակից շարքերը՝ $I(1)$, ուստի դրանց միջև երկարաժամկետ կապերը բացահայտելու նպատակով կիրառվել է կոինտեգրացիայի Bounds Test-ը: Թեստի արդյունքներով՝ $F.statistic = 2.158657$, $n=30$, $I(0)$ value 5% signif.=3.272216, $I(1)$ value 5% signif.=4.306514: Քանի որ F վիճակագրի մեծությունը (2.159) փոքր է $I(0)$ -ի 5% կրիտիկական արժեքից (3.272), ապա դիտարկվող մակրոտնտեսական ցուցանիշների միջև **երկարաժամկետ կապերը բացակայում են**:

Breusch-Pagan-Godfrey թեստի արդյունքներով՝ բոլոր մոդելների մնացորդները հոմոսկեդաստիկ են ($Prob.Chi-Square > 0.05$), Breusch-Godfrey LM թեստի կիրառումը վկայում է մոդելների մնացորդների ավտոկոռելյացված չլինելու ($Prob.Chi-Square > 0.05$), իսկ Jarque-Bera թեստին՝ նորմալ բաշխում ունենալու մասին ($Prob.Jarque-Bera > 0.05$): Ramsey RESET թեստի արդյունքները ցույց են տվել, որ մոդելները ֆունկցիոնալ սխալ հատկորոշում չունեն ($Prob.F-statistic > 0.05$) (աղյուսակ 6):

Աղյուսակ 6. Ռեգրեսիայի և ARDL դասի մոդելներ

Explanatory variables	Model 1. Dependent Variable: D(LOG(POV))	Model 2. Dependent Variable: D(LOG(GINI))	Model 3. Dependent Variable: GR
C	0.023186 (0.017523)	0.006115 (0.011747)	1.979034 (1.167636)
GR	-0.008826* (0.001991)	-0.002475*** (0.001413)	
D(LOG(EMP))		0.459151** (0.209290)	
D(LTR(-1))		-0.092785*** (0.047658)	
D(LOG(EX))			15.46562* (5.147273)
D(LPOV)			-34.96428* (9.947738)
D(LGINI(-3))			-44.70778** (17.56691)
D(LUNMP(-1))			5.888158*** (2.989106)
R-squared	0.440101		
Adjusted R-squared		0.317927	0.662960
F-statistic	19.65088	4.884319	12.31029
Prob(F-statistic)	0.000162	0.009439	0.000042
Heteroskedasticity Test: Breusch-Pagan-Godfrey			
Obs*R-squared	0.579361	0.876482	6.924115
Prob. Chi-Square	0.4466	0.8311	0.1400
Breusch-Godfrey Serial Correlation LM Test			

Ավարդ Խառատյան, Անահիտ Ստեփանյան

Obs*R-squared	0.699385	0.771523	3.400769
Prob. Chi-Square	0.7049	0.6799	0.1826
Normality Test			
Jarque-Bera	0.460898	2.225929	1.506298
Prob. Jarque-Bera	0.794177	0.328583	0.470881
Ramsey RESET Test			
F-statistic	0.524586	2.274345	2.306185
Prob. F-statistic	0.4759	0.1206	0.1462

*- նշանակալիության 1%, **-5%, ***-10% մակարդակներ, ()-ում ներկայացված են գնահատված գործակիցների ստանդարտ սխալները

Մոդելներ 2-ում և 3-ում բազմակոլինեարությունը բացակայում է, քանի որ Variance Inflation Factors (VIF) արժեքները բոլոր բացատրող փոփոխականների համար փոքր են 5-ից (աղյուսակ 7): Այսպիսով, բոլոր մոդելների համար Գաուս-Մարկովի պայմանները բավարարված են, ինչը նշանակում է, որ մոդելները կիրառելի են:

Աղյուսակ 7. Variance Inflation Factors թեստ

Model 2. Dependent Variable: D(LOG(GINI))			
Variable	Coefficient Variance	Uncentered VIF	Centered VIF
C	0.000138	2.032430	NA
D(LOG(EMP))	0.043802	1.038685	1.015561
GR	2.00E-06	2.352194	1.206515
D(LTR(-1))	0.002271	1.499701	1.203053
Model 3. Dependent Variable: GR			
Variable	Coefficient Variance	Uncentered VIF	Centered VIF
C	1.476088	2.079621	NA
D(LOG(POV))	104.4101	1.375518	1.186938
D(LOG(GINI(-3)))	325.8228	1.491142	1.274907
D(LOG(EX))	27.91654	2.069915	1.339651
D(LOG(UNMP(-1)))	9.551084	1.083487	1.082599

Մոդել 1-ը ներկայացնում է ՀՀ տնտեսական աճի ազդեցությունը աղքատության մակարդակի վրա.

$$d(\log(POV))_t = 0.0232 - 0.0088GR_t + e_t \quad (5)$$

Մոդել 2-ում բացատրվող փոփոխականը Զինիի եկամտային գործակիցն է, իսկ մոդել 3-ում՝ տնտեսական աճը: Մոդելներ 2-ը և 3-ը ներկայացված են համապատասխանաբար (6) և (7) հավասարումներով.

$$d(\log(GINI))_t = 0.0061 - 0.0025GR_t + 0.4592d(\log(EMP))_t - 0.0928d(\log(TR))_{t-1} + e_t \quad (6)$$

$$GR_t = 1.979 - 34.9643d(\log(POV))_t - 44.7078d(\log(GINI))_{t-3} + \\ + 15.4656d(\log(EX))_t + 5.8882d(\log(UNMP))_{t-1} + e_t \quad (7)$$

Եզրակացություն

Էմպիրիկ հետազոտության արդյունքում ստացվել է.

Հայաստանում տնտեսական աճ, աղքատության մակարդակ, գործազրկության մակարդակ, Զինիի եկամտային գործակից փոփոխականների միջև երկարաժամկետ կապերը բացակայում են, սակայն առկա են կարճաժամկետ փոխազդեցություններ;

Համաձայն մոդել 1-ի՝ ՀՀ տնտեսական աճի արագացումը մեկ տոկոսային կետով ընթացիկ տարում նպաստում է աղքատության մակարդակի նվազմանը 0.88%-ով, այլ հավասար պայմանների դեպքում: Առաջադրված **առաջին վարկածը հաստատվում է՝ ՀՀ տնտեսական աճը նպաստում է աղքատության կրճատմանը:**

Մոդել 2-ի արդյունքներով՝ ՀՀ զբաղվածների թվի 1% աճը ընթացիկ տարում հանգեցնում է եկամուտների անհավասարության 0.46% աճին, այլ հավասար պայմանների դեպքում: Եկամուտների անհավասարության վրա զբաղվածների թվի դրական վիճակագրորեն նշանակալի ազդեցությունը բացատրվում է վերջին տարիներին մեր երկրում աշխատավարձերի անհավասարության կտրուկ մեծացմամբ, հատկապես՝ կապված տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում առկա բարձր աշխատավարձերով: Մոդելի արդյունքներից է նաև այն, որ Հայաստանում տնտեսական աճը և արտերկրից ստացվող անձնական տրանսֆերտները նպաստում են անհավասարության կրճատմանը նշանակալիության 10% մակարդակում, սակայն նշանակալիության 5% մակարդակում դրանց ազդեցությունը վիճակագրորեն ոչ նշանակալի է: Սա նշանակում է, որ **առաջադրված երկրորդ վարկածը մերժվում է՝ ՀՀ տնտեսական աճի տեմպի արագացումը չի հանգեցնում եկամուտների անհավասարության կրճատմանը:**

Ըստ մոդել 3-ի՝ աղքատության մակարդակի 1% աճը ընթացիկ տարում կասեցնում է տնտեսական աճը 0.35%-ով, Զինիի գործակցի 1% աճը երեք տարի հետո կասեցնում է տնտեսական աճը 0.45%-ով, իսկ արտահանման 1% աճը ընթացիկ տարում նպաստում է 0.15% տնտեսական աճին, այլ հավասար պայմանների դեպքում: Նշանակալիության 10% մակարդակում գործազրկության ազդեցությունը տնտեսական աճի վրա դրական է: Այսպիսով, **երրորդ վարկածը հաստատվում է՝ Հայաստանում աղքատության և անհավասարության աճը նվազեցնում են տնտեսական աճի տեմպը:**

Էմպիրիկ հետազոտության արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ աղքատության հիմնախնդրի հաղթահարումը Հայաստանում պայմանավորված է կայուն տնտեսական աճի անհրաժեշտ տեմպերի ապահովմամբ: Կայուն տնտեսական աճի երաշխիքներից են տեխնոլոգիական առաջընթացը, տնտեսության բազմազանեցումը, մեծածավալ պետական ներդրումների իրականացումը ենթակառուցվածքներում և մարդկային կապիտալի զարգացմանը միտ-

ված ոլորտներում: Մյուս կողմից, թիրախային տնտեսական աճին հասնելու համար պետք է նվազեցնել աղքատությունը և արդյունավետ քայլեր ձեռնարկել հասարակության մեջ անհավասարության խնդիրը հաղթահարելու համար: Փոքր ձեռներեցության զարգացման համար գործարար միջավայրի բարելավումը, գյուղատնտեսական հետագա զարգացման համար արդյունավետ պայմանների ստեղծումը, սոցիալական ծրագրերի խթանումը առողջապահության, գիտության և բնակարանային շինարարության բնագավառներում այն ուղիներից են, որոնք կնպաստեն ՀՀ աղքատության և անհավասարության կրճատմանը, միաժամանակ արագացնելով տնտեսական աճի տեմպը:

Հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել Հայաստանում աղքատության և անհավասարության կրճատմանն ուղղված արդյունավետ մակրոտնտեսական քաղաքականության մշակման գործում:

Օգտագործված գրականության ցանկ

- Աղաջանյան, Հ.Ի., Վարդանյան, Ա.Ա., Մկրտչյան, Թ.Մ., Պետրոսյան, Ա.Ա., Մինասյան, Հ.Հ. (2014): *Տնտեսական աճի որակը*: Երևան, ՀՊՏՀ «Տնտեսագետ»:
- Խաչատրյան, Ա. (2023): Աղքատության նյութական և ոչ նյութական հարթությունները Հայաստանի Հանրապետությունում: *Տնտեսություն և հասարակություն*: ՀՊՏՀ, Տնտեսագետ, 3(3), 69–95:
- Հարությունյան, Կ. (2022): Բարձրագույն կրթության և աղքատության փոխկապակցվածության առանձնահատկությունները ՀՀ-ում: *Բանքեր Երևանի համալսարանի. տնտեսագիտություն*, N 2, 3–18:
- Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը (2023): *Վիճակագրական – վերլուծական զեկույց*: Երևան, ԱՐՄՍՏԱՏ:
- Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, (2024): *Վիճակագրական – վերլուծական զեկույց*: Երևան, ԱՐՄՍՏԱՏ:
- Քոթյան, Ա. (2020): Աղքատության ոչ նյութական հարթությունը: *Տնտեսագիտ. տեղեկագիր*, 2(3), 63–69:
- Adams, R. H. Jr. (2004). Economic Growth, Inequality and Poverty: Estimating the Growth Elasticity of Poverty. *World Development*. 32(12), էջ 1989–2014.
- Adelman, I. and Morris, C. T. (1973). *Economic Growth and Social Equity in Developing Countries*. Stanford. Stanford University Press.
- Bruno, M., Ravallion, M. and Squire, L. (1998). *Equity and Growth in Developing Countries: Old and New perspectives on the Policy Issues*. *Income distribution and high-quality Growth*. Cambridge, Mass.: MIT Press, 117–146.
- Central Bank of Armenia (2024). Retrieved from <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>
- Chenery, H., Ahluwalia, M.S., Bell, C.L.G., Dulong, J.H. and Jolly, R. (1974). *Redistribution with Growth*. London, Oxford University Press.
- Deininger, K.W. and Squire, L. (1996). *Measuring Income Inequality*. World Bank, *Microdata Library*. Retrieved from <https://microdata.worldbank.org/index.php/catalog/1790>
- Dogan, F.C. and Aslan, M.H. (2023). The relationship of Economic Growth, Income Inequality and Poverty: a study on Developing Countries. *Management and Administrative*

Professional Review 14(9), էջ 15727–15752.

Gujarati, D.N., and Porter, D.C. (2009). *Basic Econometrics*. 5th Edition. Boston, McGraw Hill/Irwin.

Kimhi, A. (2004). Growth, Inequality and Labor Markets in LDCs: A Survey. AgEcon search. *Research in Agricultural and Applied Economics. Discussion Paper* No.8.04. Retrieved from [file:///C:/Users/TEST/Downloads/kimhi-growth%20\(2\).pdf](file:///C:/Users/TEST/Downloads/kimhi-growth%20(2).pdf)

Perera, L.D.H. and Lee, G.H.Y. (2013). Have Economic Growth and Institutional Quality contributed to Poverty and Inequality reduction in Asia? *Journal of Asian Economics*. Vol. August, No. 27: 71–86.

Saleem, H., Farooq, F. and Aurmaghan, M. (2021). How do Poverty and Income Inequality affect Economic Growth in Developing Countries? *Review of Applied Management and Social Sciences* (RAMSS), Vol. 4 No. 2: 547–558.

Statistical Committee of the RA (2024). Retrieved from <https://armstat.am/en/>

Алвард Харатьян

Заведующая кафедрой Математического
моделирования в экономике Ереванского
государственного университета, кандидат
экономических наук, доцент

Эл. адрес: alvardkharatyan@ysu.am

Анахит Степанян

Бухгалтер-кассир в «Армэкономбанк»

Эл. адрес: anahit-s02@mail.ru

ЭКОНОМИЧЕСКИЙ РОСТ И СОЦИАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ В АРМЕНИИ: ОЦЕНКА ВЗАИМОДЕЙСТВИЯ МЕЖДУ ЭКОНОМИЧЕСКИМ РОСТОМ, НЕРАВЕНСТВОМ И БЕДНОСТЬЮ

В статье анализируются существующие социальные проблемы в Армении и исследуется роль экономического роста в их решении. Были выдвинуты гипотезы, для проверки которых построены эконометрические модели. По результатам теста Bounds, долгосрочные связи между экономическим ростом, уровнем бедности и коэффициентом Джини отсутствуют. С помощью регрессионных и ARDL-моделей оценены краткосрочные взаимодействия этих переменных. Согласно результатам, экономический рост в Армении способствует сокращению бедности, но не оказывает значительного влияния на неравенство доходов. Ускорение темпов экономического роста на один процентный пункт в текущем году приводит к снижению уровня бедности на 0.88%. С другой стороны, высокий уровень бедности и неравенства сдерживает экономический рост Армении. Увеличение уровня бедности на 1% в текущем году приводит к снижению экономического роста на 0.35 процентного пункта, а рост коэффициента Джини на 1% замедляет экономический рост на 0.45 процентного пункта через три года.

Результаты исследования имеют важное практическое значение с точки зрения разработки эффективной макроэкономической политики, направленной на смягчение социальных проблем Армении.

Ключевые слова: экономический рост, бедность, неравенство, коэффициент Джини, безработица, регрессионные и ARDL-модели, коинтеграция.

Alvard Khachatryan

Head of the Department of Mathematical Modeling

in Economics at Yerevan State University,

Candidate of Economic Sciences, Associate Professor

Email: alvardkharatyan@ysu.am

Anahit Stepanyan

Accountant-Cashier at ARMECONOMBANK

Email: anahit-s02@mail.ru

ECONOMIC GROWTH AND SOCIAL ISSUES IN ARMENIA: ASSESSING THE INTERACTION BETWEEN ECONOMIC GROWTH, INEQUALITY, AND POVERTY

The article analyzes the existing social issues in Armenia and examines the role of economic growth in addressing these issues. Hypotheses have been proposed, and econometric models have been constructed to test them. According to the results of the Bounds test, there are no long-term relationships between the variables of Economic Growth, Poverty rate, and Gini income coefficient. Using regression and ARDL models, the short-term interactions of these variables have been assessed. The results indicate that economic growth in Armenia contributes to poverty reduction but has no significant impact on income inequality. An acceleration of the economic growth rate by one percentage point in the current year leads to a 0.88% reduction in the poverty rate.

On the other hand, high levels of poverty and inequality hinder Armenia's economic growth. A 1% increase in the poverty rate in the current year leads to a 0.35 percentage point decline in economic growth, while a 1% increase in the Gini coefficient slows economic growth by 0.45 percentage points after three years.

The research findings have significant practical implications for developing effective macroeconomic policies aimed at mitigating Armenia's social issues.

Key words: economic growth, poverty, inequality, Gini coefficient, unemployment, regression and ARDL models, cointegration.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2025թ. փետրվարի 9-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2025թ. փետրվարի 17-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2025թ. հունիսի 11-ին:

Սևակ Թորգոմյան
Տնտեսագիտության թեկնածու
Էլ. հասցե՝ sevak.torgomyan@eiu.am
Ալյոշա Հովսեփյան
Եվրասիա միջազգային համալսարանի
Նախագծերի կառավարում
մասնագիտության 2-րդ կուրսի մագիստրոս
Էլ. հասցե՝ alyosha.hovsepyan16@gmail.com

DOI: 10.53614/18294952-2025.1-117

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ՄԵՔԵՆԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎՐԱ ՄԱԿ-Ի ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Սույն հոդվածում քննարկվել են արհեստական բանակայնության (այսուհետ՝ ԱԲ) և մեքենայական ուսուցման (այսուհետ՝ ՄՈՒ) տեխնոլոգիաների ազդեցության ներկա միտումները նախագծերի կառավարման գործընթացների վրա: Կատարվել է արդի պայմանների համապարփակ վերլուծություն՝ ուշադրություն դարձնելով ԱԲ և ՄՈՒ կիրառման ոլորտների և պոտենցիալի բացահայտմանը: Հատուկ շեշտադրում է կատարվել ԱԲ և ՄՈՒ ժամանակակից այնպիսի գործիքների վրա, որոնք ունեն կիրառելիություն նախագծերի կառավարման ոլորտում և ունակ են ավտոմատացնելու աշխատատար գործընթացները, բարելավելու ռիսկերի կառավարումը և օպտիմալացնելու որոշումների կայացման գործընթացները:

Հոդվածում մանրամասն վերլուծվել են նաև նախագծերի կառավարման թվային գործիքներում ԱԲ և ՄՈՒ տեխնոլոգիաների ինտեգրման հետ կապված մարտահրավերներն ու առավելությունները, ինչպես նաև մշակվել է վերջիններիս ներդրման մոդել:

Հիմնաբառեր. նախագիծ, նախագծերի կառավարում, արհեստական բանականություն, մեքենայական ուսուցում, գիտելիքների կառավարում, թվայնացում, բիզնես գործընթացների արդյունավետություն:

Ներածություն

Ժամանակակից պայմաններում, ավտոմատացումն այլևս միայն բուն արտադրական գործընթացներում ներգրավված աշխատողների խնդիրը չէ: Ռոբոտները փոխարինում են մարդկանց ֆիզիկական և կրկնվող աշխատանքներ կատարելիս, իսկ ահա մտավոր աշխատանք կատարելու համատեքստում, մարդկանց կարող են փոխարինել արհեստական բանականությունն ու ծրագրային ապահովման այլ միջոցները:

Հաշվի առնելով վերոնշյալը անհրաժեշտ է որդեգրել տնտեսության զարգացման նոր ռազմավարություն՝ հիմք ընդունելով ՄԱԿ-ի կողմից սահմանված Կայուն զարգացման 17 նպատակները (այսուհետ՝ ԿԶՆ):

ԱԲ և ՄՈՒ ազդեցության ուսումնասիրության արդիականությունը նախագծերի կառավարման վրա ակնհայտ է մեր ժամանակներում, երբ տեխնոլոգիաների զարգացումը արագորեն փոխում է բիզնես գործընթացները և պահանջում է նախագծերի կառավարման նոր մոտեցումներ: Չնայած նախագծերի ունիկալության հատկանիշին, ԱԲ և ՄՈՒ դառնում են հզոր գործիքներ, որոնք կարող են զգալիորեն բարելավել նախագծերի կառավարման արդյունավետությունը: Դրա մասին են փաստում նաև մի շարք հետազոտողներ, որոնք հիմնվելով ներկայիս միտումների վրա կանխատեսում են, որ մինչև 2030 թվականը նախագծերի կառավարման ընթացքում աշխատանքների 80 տոկոսը կիրականացնի ԱԲ-ն՝ օգտագործելով մեծածավալ տվյալներ:

Այսօրվա կազմակերպությունները բախվում են աճող մրցակցության, անորոշ տնտեսական պայմանների, փոփոխվող տեխնոլոգիական միտումների և սպառողների աճող պահանջմունքների: Նշված իրողությունները ստեղծում են նախագծերի կառավարման ավելի արդյունավետ գործիքների ներդրման և կիրառման անհրաժեշտություն, որոնք կարող են օգնել արագորոշումներ կայացնել, հարմարվել փոփոխություններին և կանխատեսել հնարավոր ռիսկերը: Այս համատեքստում ԱԲ և ՄՈՒ կարող են առաջարկել նորարարական լուծումներ՝ օգնելու օպտիմալացնել նախագծերի կառավարման գործընթացները:

Հետազոտության թեմայի արդիականության հիմնական ասպեկտներից մեկը ԱԲ և ՄՈՒ ներուժն է սովորական առաջադրանքների և կառավարման գործընթացների ավտոմատացման գործում, ինչը թույլ է տալիս նախագծերի ղեկավարներին կենտրոնանալ իրենց աշխատանքի ռազմավարական և ստեղծագործական ասպեկտների վրա: ԱԲ ալգորիթմների օգտագործման միջոցով ավտոմատացումը կարող է բարձրացնել պլանավորման և ռեսուրսների կառավարման արդյունավետությունը, բարելավել նախագծի արդյունքների կանխատեսելիությունը և նվազեցնել հնարավոր ռիսկերը: Բացի այդ,

ԱԲ ազդեցությունը նախագծի կառավարման վրա դրսևորվում է մեծ ծավալի տվյալների ավելի արագ և ճշգրիտ վերլուծելու ունակությամբ, ինչը նպաստում է փաստերի և վիճակագրության վրա հիմնված տեղեկացված որոշումների կայացմանը: ՄՈՒ թույլ է տալիս ստեղծել կանխատեսող մոդելներ, օպտիմալացնել գործընթացները և կանխորոշել նախագծերի զարգացման հնարավոր սցենարները, ինչը կառավարումը դարձնում է ավելի ռացիոնալ և արդյունավետ: Այս ամենը անքակտելիորեն կապված է տնտեսության տեխնոլոգիական մրցունակության բարձրացման և համաշխարհային շուկայում նրա հաջող զարգացման ապահովման և ՄԱԿ-ի կողմից սահմանված Կայուն զարգացման թիրախներից 8.2-ի հետ, որն ուղղված է տնտեսության տեխնոլոգիական զարգացմանը, և արտադրողականության բարձրացմանը :

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել և գնահատել ԱԲ և ՄՈՒ ազդեցությունը նախագծերի կառավարման վրա:

Աշխատանքում ներկայացված տեսակետները հնարավորություն են տալիս հասնել նախագծերի կառավարման արդյունավետության բարձրացմանը, ԱԲ և ՄՈՒ գործիքների կիրառման միջոցով: Զեկույցում կատարված վերլուծությունները ստացված գիտական արդյունքները, մշակված մոտեցումները և առաջարկությունները կարող են օգտագործվել, տարբեր կազմակերպություններում գործունեություն ծավալող նախագծերի ղեկավարների կողմից:

Մեթոդ

Հետազոտության համար տեսական, տեղեկատվական հիմք են հայ և արտերկրյա հեղինակների գիտական աշխատությունները, հետազոտությունները, հոդվածները, հրապարակումներն ու զեկույցները: Օգտագործվել է նաև նախագծերի կառավարման միջազգային պրակտիկային առնչվող գրականություն, ինչպես նաև «Նախագծերի կառավարման ինստիտուտ»-ի կողմից հրատարակված ուղեցույցներն:

Հետազոտության համար որպես տեղեկատվական բազա են ծառայել տարբեր միջազգային կազմակերպությունների, հետազոտական կենտրոնների (Հարվարդի բիզնես դպրոց, Օքսֆորդի համալսարան և այլն) կողմից իրականացված հետազոտության արդյունքները և վիճակագրական տվյալները:

Հետազոտական աշխատանքում կիրառվել են հետևյալ մեթոդները.

Տվյալների հավաքագրման, խմբավորման ու վերլուծության մեթոդը:

Այս աշխատանքում տվյալները հիմնականում հավաքագրվել են փաստաթղթերի վերլուծության և հարցման մեթոդներով: Տվյալները խմբավորվել և վերլուծվել են տարբեր գործիքների օգնությամբ (*Excel, Google sheet, Google Forms* և այլն): Նախ կատարվել է տվյալների խմբավորում ըստ որոշակի հատկանիշների (*օրինակ՝ գիտելիքների կառավարում(1), այլ աշխատանքներ (2), հնարավոր խնդիրների բացահայտումը, դրանց հեղուկում, թիմի և շահագրգիռ կողմերի հեղու համագործակցություն և լուծումների իրականացում(3)*) և

այլն), այնուհետև ստացված խմբերում տեղ գտած տվյալները վերածել ենք քանակական ցուցանիշների(օրինակ՝«գիտելիքների կառավարում» խմբում ներառված տվյալները որակվել են որպես 1(մեկ), «այլ աշխատանքներ» խմբում տեղ գտած տվյալները որակվել են որպես 2(երկու) և այլն): Այս խմբավորված տվյալների հիման վրա կատարվել է տոկոսային դասակարգում(օրինակ՝«գիտելիքների կառավարում և խնդիրների(issues) ստեղծում»՝ 49%, «այլ աշխատանքներ՝ 16%» և այլն):

Հարցում: Այս մեթոդը օգտագործվել է զեկույցի թեմայի վերաբերյալ ավելի խորը և հիմնավոր տեղեկատվություն հավաքելու համար: Իրականացվել է էլեկտրոնային հարցում SS նախագծերի կառավարման համայնքի անդամների (ավելի քան 3300 անդամ) շրջանում: Հարցումը իրականացվել է նախագծերի կառավարման մեջ կիրառվող **ԱԲ և ՄՈՒ գործիքների մասին տեղեկանալու և դրանց ազդեցությունը** բացահայտելու համար՝ հիմքում ունենալով նախօրոք կազմված հարցաշարը:

Ի հավելումն օգտագործված գործիքների՝ օգտագործվել է նաև **համեմատական վերլուծության** մեթոդը: **Համեմատական վերլուծության** մեթոդի կիրառումը հնարավորություն տվեց բացահայտել տարբեր հավելվածների և կայքերի միջև տվյալների փոխանցման լավագույն մասնագիտական հարթակն(ՆՑՆ) ու անհատական չաթ բոտերի ստեղծման մոդելը (ChatGPT):

Արդյունքներ

Կառավարման անհրաժեշտությունը յուրաքանչյուր կազմակերպության առանցքային բնութագրիչներից մեկն է, որի կառուցվածքի առանձին տարրերը գոյություն են ունեցել դեռևս անհիշելի ժամանակներից. Կառավարման կառուցվածքները կազմավորվում են առաջ քաշված նպատակները հնարավորինս արդյունավետ իրականացման անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով՝ և պետք է հենվեն որդեգրված ռազմավարության վրա: Օրինաչափորեն, վերջին տասնամյակներում արձանագրված գլոբալացման, կապի, տեղեկատվական տեխնոլոգիաների և գիտատեխնիկական առաջընթացի զարգացման պայմաններում, այլևս հրամայական էր նոր՝ ճկուն և ադապտիվ կազմակերպական կառուցվածքի մշակումը՝ հաշվի առնելով գոյություն ունեցող կայուն կառուցվածքների թերություններն ու դրանց առաջ բերած բացասական հետևանքները: Խոսքը ներկայումս լայն տարածում և կիրառելիություն գտած նախագծային կազմակերպական կառուցվածքի մասին է, որի հիմքում ընկած է կազմակերպության՝ ըստ նախագծերի մասնատման սկզբունքը:

Նախագծերի կառավարման ինստիտուտի կողմից թողարկված ուղեցուցում հեղինակները տալիս են առավել ամբողջական պատկերացում՝ նախագիծը սահմանելով որպես ժամանակավոր ջանք, որի նպատակն է ստեղծել ունիկալ ապրանք, ծառայություն կամ արդյունք (A guide to the project management body of knowledge, 2017, էջ 4):

Անդրադառնալով «նախագծերի կառավարում» եզրույթին՝ հարկ է նշել,

որ ժամանակակից կառավարման տարբեր մոտեցումների, ինչպես նաև նպատակային կառավարման մասին գիտական հետազոտությունների հեղինակներ ունեն տարբեր մոտեցումներ: Այդ մոտեցումների համադրման արդյունքում նախագծերի կառավարում կարող ենք սահմանել, որպես համապատասխան գիտելիքների, մեթոդների, գործիքների կիրառմամբ՝ նախագծի ընթացքում իրականացվող աշխատանքների ուղղորդումն է նախատեսված վերջնական արդյունքը ստանալու համար՝ նախագծի պահանջները բավարարելու նպատակով (Project Manager Competency Development Framework, 2017, էջ 4):

Ըստ էության, սահմանումների տարբերությունները պայմանավորված են նաև տվյալ ժամանակաշրջանում տիրող սոցիալ-տնտեսական, տեխնոլոգիական և, անգամ, քաղաքական զարգացման մակարդակով ու իրողություններով: Այս առումով, նախագծերի կառավարման զարգացման էվոլյուցիան կարելի է ներկայացնել հետևյալ փուլաբարերով՝

Պիտեր Մորիսը Օբսֆորդի համալսարանում հրապարակված իր հոդվածում մանրամասն անդրադառնում է նախագծերի կառավարման զարգացման առաջին փուլին (մ.թ.ա. 4-րդ հազարամյակից մինչև 20-րդ դարի երկրորդ կեսը)՝ շրջափուլի լավագույն նախագծային աշխատանքներից մեկը համարելով բոլորիս հայտնի եգիպտական բուրգերը (Morris, 2011, էջ 15–36):

Երկրորդ փուլը լավագույն կերպով ներկայացված է Մ. Վեբսթերի հրապարակած հոդվածում, որտեղ, նկարագրելով 20-րդ դարում նախագծերի կառավարման զարգացման նախադրյալները, առանձին անդրադարձ է կատարվում երկրորդ համաշխարհային պատերազմին: Այսպես, ըստ հեղինակի՝ երկրորդ համաշխարհային պատերազմում տարբեր պատերազմական մեթոդների և մոդելների (օրինակ՝ միջուկային զենքի ստեղծումը) արդյունավետ կիրառման անհրաժեշտությունը, ինչպես նաև հետպատերազմյան շրջանում փլուզված տնտեսությունների վերականգման հրատապությունը, ստիպեցին կառավարություններին և շատ մասնավոր կազմակերպությունների իրենց ֆինանսական և մարդկային ռեսուրսները ուղղել նշված խնդիրներին ուղղված գիտահետազոտական ուսումնասիրությունների իրականացմանը, որոնք էլ հիմք դարձան նախագծերի կառավարման ժամանակակից մեթոդոլոգիաների ստեղծման և զարգացման համար (Webster, 1999, էջ 63–65):

Երրորդ փուլ (1950–1960): Նախագծերի կառավարման զարգացման մյուս կարևոր իրադարձությունը 1950-ականների վերջին «Կրիտիկական ուղղու մեթոդ»-ի (Critical Path Method, CPM) մեթոդաբանության ստեղծումն էր: Այս մեթոդաբանությունը նախատեսված է համալիր նախագծերի պլանավորման և կառավարման համար՝ հիմնված նախագծում ամենակարևոր և ժամանակատար խնդիրների բացահայտման վրա: CPM-ը հնարավորություն տվեց ավելի ճշգրիտ կանխատեսել նախագծի ժամկետները և բացահայտել հիմնական խոչընդոտները:

Չորրորդ փուլ (1960–1970): Այս ժամանակաշրջանում մշակվում է նախագծերի կառավարման մեկ այլ կարևոր ուղղություն՝ «Նախագծերի գնահատ-

ման և վերանայման տեխնիկա»-ի (Program Evaluation and Review Technique, PERT) մեթոդաբանությունը: PERT-ը թույլ է տալիս հաշվի առնել նախագծերի ստոխաստիկ բնույթը, այսինքն՝ դրանց իրականացման հնարավոր տատանումները և անորոշությունները: Սա հնարավորություն տվեց կանխատեսել նախագծերի ավարտի ավելի ճշգրիտ ժամկետները և հավանականությունը (Kane, 1964, էջ 40–42):

Հինգերորդ փուլ (1970 – մեր օրեր): Այս ժամանակաշրջանում մշակվեցին նախագծերի կառավարման նոր գործիքներ և տեխնիկա: Ի հայտ եկավ «Կրիտիկական շղթայի մեթոդ»-ի (Critical Chain Method) հայեցակարգը, որը հաշվի է առնում ոչ միայն ձգձգումները և անորոշությունները, այլ նաև բազմաթիվ այլ գործոններ, ինչպիսիք են ռեսուրսները, առաջնահերթությունները և առաջադրանքների միջև կախվածությունը (Critical Chain Project Management Improves Project Performance, 2017): 20-րդ դարում նախագծերի կառավարման մեթոդների զարգացման վրա ազդեցություն ունեցած այլ իրադարձությունների մասին իրենց հոդվածում խոսում են Թոմ Սեյմորը և Սառա Հուսեյնը: Նրանք առանձնացնում են մի շարք կարևոր իրադարձություններ, ինչպիսիք են՝ Գանտի աղյուսակի ստեղծումը, Մայքրոսոֆթ Փրոջեքթ համակարգի ստեղծումը, «Նախագծերը վերահսկվող միջավայրերում»-ի (PRINCE) մոդելի մշակումը և այլն: Ավելին, հենց այս փուլում առաջ եկան են մի շարք նոր հասկացություններ, ինչպիսիք են՝ ձկուն (agile), սքրամ և կանբան և այլն:

Ընդհանրապես, նախագծի կառավարումն իրականացնում է նախագծի ղեկավարը՝ առաջնորդելով, օգնելով, մոտիվացնելով իր թիմին: Նախագծի ղեկավարն այն անձն է ով նշանակվել է նախագիծ իրականացնող կազմակերպության կողմից և պատասխանատու է նախագծի նպատակներին հասնելու համար (Project Manager Competency Development Framework, 2017, էջ 4): Ակնհայտ է, որ սահմանված նպատակներին հասնելու համար նախագծի ղեկավարին պատվիրակվում են համապատասխան լիազորությունների, պարտավորությունների, պատասխանատվությունների շրջանակներով: Այս համատեքստում, Ուիլը և Քերին փաստում են, որ վերջին տարիներին նախագծի ղեկավարի լիազորությունների շրջանակը էականորեն ընդլայնվել է: Վերջիններս լիազորությունների շրջանակի ընդլայնումը պայմանավորում են մի շարք գործոններով, ինչպիսիք են՝ նախագծերի կառավարման նոր մոտեցումների կիրառումը, տեխնոլոգիաների զարգացումը և այլն (Wills, 2010):

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ղեկավարներն ամեն օր առանց ընդհատումների մասնակցում են ավելի քան 600 տարբեր գործընթացների, որոնց զգալի հատվածը կրում են խիստ մասնատված բնույթ. նիստերի մեծ մասը տևում է ինը րոպեից պակաս, և նիստերի միայն 10%-ն է գերազանցում մեկ ժամի տևողությունը:

Յուրաքանչյուր նախագիծ եզակի է և կարող է ունենալ տարբեր աստիճանի բարդություն և ռիսկ: Նախագծի կառավարման մոտեցումը պետք է լինի ձկուն և հարմարեցված կոնկրետ պայմաններին: Երբեմն, կազմակերպությունները և նախագծերի ղեկավարները հավատարիմ են մնում նախագծի կառավարման մեկ մոտեցման՝ առանց հաշվի առնելու յուրաքանչյուր

նախագծի առանձնահատկությունները: Դա պայմանավորված է նրանով, որ նախագծի ղեկավարները հաճախ նախընտրում են օգտագործել կառավարման մեթոդոլոգիաներ, որոնց ծանոթ են, նույնիսկ եթե դրանք լիովին չեն համապատասխանում տվյալ նախագծին: Այնուամենայնիվ, նախագծի ղեկավարները պետք է պատրաստ լինեն հարմարեցնելու իրենց կառավարման մոտեցումը՝ կախված յուրաքանչյուր նախագծի առանձնահատկություններից, բիզնեսի համատեքստից, ռիսկերից և բարդություններից (Agile: практическое руководство, 2018, էջ 10-12):

Այնուամենայնիվ, խնդիրն այն է, որ բոլոր նախագծերի վրա հնարավոր չէ ներդնել նախագծի մանրամասն կառավարման կառուցվածքը՝ առանց հաշվի առնելու դրանց հատուկ կարիքները: Որոշ դեպքերում, խիստ պլանավորման կիրառումը, կարող է խոչընդոտներ ստեղծել նախագծի առաջընթացի համար: Մյուս կողմից, ոմանք կարծում են, որ նախագծի կառավարման ցանկացած ձև ժամանակի վատնում է և կարող է սահմանափակել նախագծի զարգացումը նախքան այն սկսելը: Նախագծի կառավարման իդեալական մոտեցումը մեթոդաբանությունների ձկուն և հավասարակշռված համակցությունն է՝ հաշվի առնելով յուրաքանչյուր նախագծի առանձնահատկությունները:

Չնայած նախագծերի կառավարման մոտեցումները օգնում են նախագծերի ղեկավարներին հասնել ցանկալի արդյունքի, սակայն ինչպես փաստում են Ռիկարդոն և Աստոնիոն Հարվարդի բիզնես դպրոցում հրապարակված հոդվածում՝ յուրաքանչյուր տարի նախագծերի իրականացման համար ներդրվում է շուրջ 48 տրիլիոն դոլար, սակայն այդ նախագծերի միայն 35 տոկոսն է հասնում հաջողության: Բազմաթիվ հետազոտությունների փաստական տվյալների հիման վրա նրանք գալիս են այն եզրակացության, որ նախագծերի տապալման հիմնական պատճառը որոշակի տեխնոլոգիաների անհասանելիությունն է, որոնք հնարավորություն կտային ոչ միայն գնահատել նախագծերի կառավարման վրա ազդող ներքին գործոնները, այլ նաև գնահատել այն արտաքին միջավայրը, որտեղ իրականացվում է այդ նախագիծը (Vargas, 2023):

Գարտներ հետազոտական կենտրոնի կողմից հրապարակված հոդվածում խոսվում է ժամանակակից տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունների մասին, որտեղ հեղինակները առանձնացնում են ԱԲ և ՄՈՒ: Նրանք հիմնվելով ներկայիս միտումների վրա կանխատեսում են, որ մինչև 2030 թվականը նախագծերի կառավարման ընթացքում աշխատանքների 80 տոկոսը կիրականացնի ԱԲ-ն՝ օգտագործելով մեծածավալ տվյալներ (Gartner, 2019):

Ստորև կներկայացնենք, թե ինչ են իրենցից ներկայացնում ԱԲ-ն և ՄՈՒ-ն և ինչ ազդեցություն կարող են ունենալ նախագծերի կառավարման վրա:

